

Ե. ՍԱՐԳՍՅԱՆ  
Դ. ՍԱՀԱԿՅԱՆ



ԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ  
ՆՈՐ ՇՐՋԱՆԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄԸ  
ԹՈՒՐԲ  
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

685 <sup>h2,</sup>

~~Սարգսյան Ե.Դ.,~~

~~Սահակյան Բ.Գ.~~

Հալ ժողովրդի նոր շրջանի.

Ե.՝ 1963.

929	29/10-83	
30/10-83	Կ Կրեակ	
134	11/11-85	
88	13.6.86	
106	9/10-88	
		1065/

Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆ, Ռ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄԸ  
ԹՈՒՐԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

378  
պր  
378 685

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1963

Սույն գրքուկում ցույց է տրվում, որ ժամանակակից Թուրքիայում լույս տեսնող պատմական, քաղաքական և մեմուարային գրականության մեջ գիտակցորեն կեղծվում ու խեղաթյուրվում է հայ ժողովրդի հատկապես նոր շրջանի պատմությունը:

Արխիվային և հրապարակված բազմաթիվ փաստաթղթերի, օտար ազգյուրների ու գրականության հիման վրա վեր է հանվում և մերկացվում հայ ժողովրդի այդ շրջանի պատմության մի շարք կարևոր հարցերի նենգափոխումը ժամանակակից թուրք պատմադրության մեջ:

ЕРВАНД ҚАЗАРОВИЧ САРҚИСЯН  
РУБЕН ГАРЕГИНОВИЧ СААҚЯН

## ФАЛЬСИФИКАЦИЯ ИСТОРИИ АРМЯНСКОГО НАРОДА НОВОГО ВРЕМЕНИ В ТУРЕЦКОЙ ИСТОРИОГРАФИИ

(На армянском языке)

Армянское государственное издательство  
(Айпетрат), Ереван, 1963

Հետպատերազմյան տարիներին Թուրքիայում լույս է տեսել մի ստվար գրականություն Թուրքիայի նոր և, հատկապես, նորագույն շրջանի պատմության հարցերի վերաբերյալ: Այդ պատմական գրականության հիմնական ուղղությունը թուրքիզմն է, որը նպատակ տւնի իդեալականացնել Թուրքիայի՝ պատմությունը, ամեն կերպ փոնազարդել այն՝ կանգ չառնելով անցյալի հանրահայտ փաստերի, պատմական իրականության միտումնավոր աղավաղման և բացահայտ կեղծման առաջ: Թուրքիզմը գովերգում է թուրք ազգի «առանձնահատուկ դերը» մարդկային հասարակության պատմության ու համաշխարհային քաղաքակրթության զարգացման փորձում, դրանով իսկ փորձելով արդարացնել ինչպես անցյալում սուլթանական բռնապետության լծի տակ ընկած ժողովուրդների, այնպես էլ ներկայումս ազգային փոքրամասնությունների նկատմամբ ժամանակակից Թուրքիայի վարած վայրագ, շովինիստական քաղաքականությունը: Թուրքիզմի մոլի շովինիստական, ռեակցիոն գաղափարախոսությունը ձևավորված արտահայտվեց 30-ական թվականների սկզբներին, երբ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի նախաձեռնությամբ և անմիջական դեկավրուությամբ 1931 թվականին հիմնադրվեց «Թուրքիայի Պատմության Ընկերությունը»: Այդ ժամանակից սկսած մինչև մեր օրերը հիշյալ Ընկերությունը, ստանալով Թուրքիայի կառավարող շրջանների մշտական աջակցությունը, պատմագրության ասպարեզում հետևողականորեն անց

է կացնում նրանց հիմնական գաղափարախոսությունը՝ թուրքիզմը, որի ցայտուն արտահայտությունը Ընկերութեան կողմից հրատարակված քառահատոր «Պատմութեան» է («Tarih»): «Թարիհի» հատորներում թուրքիզմի գաղափարախոսութեան քարոզը հիմնականում հանգում է այն մրտադին, որ թուրքերն աշխարհի ամենահնագույն ժողովուրդն են, որ նրանց շնորհիվ է քաղաքակրթությունը տարածվել ամբողջ աշխարհում, նրանք մեծ ու փոքր բազմաթիվ պետութեանների հիմնադիրներ են: Այսպես, «Թարիհի» IV հատորի սկզբում, որը նվիրված է ռեսպուբլիկական թուրքիայի պատմությանը, կարդում ենք. «Մարդկության պատմության մեջ երբեք գոյություն չի ունեցել թուրքերի նման բազմաթիվ և մեծ պետություններ ստեղծող մի ցեղ: Թուրքերն են հիմնել Ասիայում և Եվրոպայում իշխանությունների, թագավորութեանների և կայսրությունների մեծ մասը»<sup>1</sup>: Նման սնապարծությունը իրականության հետ ոչ մի կապ չունի: Ո՞ւմ հայտնի չէ, որ օսմանյան թուրքերն առաջին անգամ Փոքր Ասիայում երևացել են 13-րդ դարի 30-ական թվականներին միայն: Կ. Մարքսն իր «Ժամանակագրական քաղվածքներում» 1231 թվականին վերաբերող դեպքերի մասին գրել է. «Համարյա միևնույն ժամանակ թուրք-օսմանների հորդան մուտք է գործում Փոքր Ասիա, որտեղ նրանք ամենից առաջ հիմնում են Կարահիսարի ավազակային պետությունը»<sup>2</sup>:

Հարկ չկա այստեղ հանգամանորեն շարադրելու, թե ինչպես այդ ավազակային պետությունը հետագայում՝ 14—17-րդ դարերի ընթացքում, հրի ու սրի մատնելով բազմաթիվ երկրներ, վերջ դնելով մի շարք ժողովուրդների բազմադարյան պետականությանը, տարածվեց Փոքր Ասիայում, Անդրկովկասում, Բալկաններում, Հյուսիսային Աֆրիկայում, Արաբական թերակղզում: Որքան էլ թուրք ռեակցիոն պատմաբանները ճգնեն «ապացուցել» թուրք ազգի «ներդրումը»

<sup>1</sup> „Tarih“, cilt IV. Türkiye Cumhuriyeti. İstanbul, 1934, s. 1.

<sup>2</sup> К. Маркс, Хронологические выписки. „Архив Маркса и Энгельса“, т. V, стр. 223.

համաշխարհային քաղաքակրթության մեջ, նրանք ի վիճակի չեն հերքելու այն հանրահայտ ճշմարտությունը, որ թուրքական նվաճումների հետևանքով զգալի չափով կասեցվեց օսմանյան բռնապետության դաժան լծի տակ ընկած ժողովուրդների պատմական զարգացման նրոցեսը: Հենց պատմական այս իրողությունը քողարկելու նպատակով է, որ թուրք պատմաբանները, նենգափոխելով փաստերը, խեղաթյուրում են օսմանյան Թուրքիայի կողմից նվաճված երկրների ժողովուրդների պատմությունը:

Վերջին տարիներին լույս տեսած թուրք պատմաբանների «գիտական» աշխատություններում, պատմության դասագրքերում ու քաղաքական գործիչների հուշերում զգալի տեղ է հատկացված հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակաշրջանների հետ առնչվող բազմաթիվ հարցերին:

Բացի դրանից, վերջերս հրատարկվել են հայ ժողովրդի պատմությանը նվիրված հատուկ «հետազոտություններ», որոնց թվում հայ ժողովրդի հնադարյան պատմությունն ու կուլտուրան բացահայտորեն կեղծելու ու արատավորելու, ինչպես օսմանյան, այնպես էլ քեմալական Թուրքիայի հայաջինջ ու զավթողական քաղաքականությունն արդարացնելու շարադրանքով աչքի են ընկնում էսադ Ուրասի «Հայերը պատմության մեջ և հայկական հարցը»<sup>1</sup> և Ջեմալ Քութայի «Ինչպե՞ս Կարաբեքիրը ոչնչացրեց Հայաստանը»<sup>2</sup> գրքերը:

Հայ ժողովրդի պատմության նկատմամբ այդ հետաքրքրությունը բացատրվում է ոչ թե նրանով, որ թուրք հեղինակները ցանկանում են ուսումնասիրել օսմանյան բռնապետության բիրտ լծի տակ դարեր շարունակ հեծող արևատահայություն պատմությունը, այլ նրանով, որ նրանք նպատակադրվել են «գիտականորեն ու պատմականորեն հիմնավորել», այլ կերպ ասած՝ արդարացնել թուրք նախկին կա-

<sup>1</sup> Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi. Ankara, 1950.

<sup>2</sup> Cemal Kutay, Karabekir Ermenistanı nasıl yok etti? Istanbul, 1956.

ուսմարող շրջանների հայաշինչ բարբարոսական քաղաքականութիւնը:

Այսպես, էսադ Ուրասն իր վերը հիշված մեծածավալ գրքում, մանրամասնորեն «ուսումնասիրելով» հայ ժողովրդի պատմութիւնը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, փորձում է հանրագումարի բերել տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով թուրք պետական և ռազմական գործիչների ու պատմաբանների հայատյաց թրշնամական մտքերն ու տեսակետները, նենգափոխել և կեղծել հայ ժողովրդի պատմութիւնը և նրա կուլտուրան՝ ամբողջութեամբ վերցրած: Նպատակադրվելով «հիմնավորել» իրականութեան հետ առնչութիւն չունեցող այն թուրք տեսակետը, որի համաձայն թուրքերը իբր Անատոլիայի ամենահնագույն, տեղական (աբորիգեն) բնակիչներն են, էսադ Ուրասը և թուրքիզմի մյուս ջատագույնները ճգնում են ապացուցել, որ «պատմութեան օրրանը հանդիսացող Անատոլիան անհիշատակ ժամանակներից եղել է թրքութեան մայր հայրենիքը» (Anayurt): Նման անհիմն, շինծու պնդումներով նրանք փորձում են ժխտել Արևելեյան Անատոլիայում հայ ժողովրդի բուն հայրենիքի՝ պատմական Հայաստանի գոյութիւնը: Թուրք պատմաբանները միամտորեն կարծում են, որ դուրս նետելով Հայաստան, Հայկական լեռնաշխարհ, Արարատ և նման շատ աշխարհագրական հատկացողութիւններ, նրանք ի վիճակի են դրանք պատմութիւններից շնչելու և, ինչպես ցինիկորեն գրում է էսադ Ուրասը, «Հայաստանը կմնա աշխարհագրութիւններից փոխանցված պարզ մի հիշողութիւն»<sup>1</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ ժամանակակից թուրք պատմաբանների ձգտումը՝ աշխարհագրական, պատմական, իրավական տեսակետներից «հիմնավորել» Հայաստանի տերիտորիաների նկատմամբ թուրքիայի «օրինական» յիշուհները, ոմնի իր պատմութիւնը: Այսպիսի փորձեր անցյալում շատ են արվել՝ ինչպես սուլթանական պատմագիրների, այնպես էլ պետական ու քաղաքական գործիչների կողմից: Ժա-

<sup>1</sup> Esat Uras, s. 11.

մանակակից թուրք պատմաբանների «հիմնավորումներն», օրինակ, խիստ նմանվում են Քյազըմ Կարաբեքիրի կողմից տրված «բացատրություններին»: Դեռևս 1920 թվականի նոյեմբերի 30-ին, երբ քեմալական զորքերը ներխուժել և գրավել էին Հայաստանի մի զգալի մասը, Արևելյան բանակի հրամանատար և Ալեքսանդրապոլում հաշտության բանակցություններ վարող թուրքական պատվիրակության նախագահ Կարաբեքիր փաշան հանդես եկավ մի ընդարձակ զեկուլցով՝ հայկական հողերի նկատմամբ թուրքիայի պատմական իրավունքները հաստատելու համար: Այսպես, հայկական տերիտորիաների պատմական անցյալը նա հիշյալ զեկուլցում ներկայացնում էր հետևյալ կերպ. «Գալով պատմական դրուժյուն հաստատվել է, որ սուրն երկրամասը հայերի գաղթելուց քսան դար առաջ այդ տեղերում բուրանական ցեղերն էին ապրում: Ուրարտացիները հիմնել են մի փայլուն քաղաքակրթություն և Վանի վիմագուրջունները վերաբերում են ոչ թե հայերին, այլ միայն այս բուրանյան ցեղերին... Ուրեմն հնախոսությամբ ևս թուրքերի այս երկրամասում տանեցած իրավունքները ակնբերե են և ապացուցված»<sup>1</sup> (ընդգծումները մերն են, — հեղ.):

Շարունակելով իր հրեշավոր կեղծիքը, Կարաբեքիրն այնուհետև «փաստեր» էր բերում միջին դարերի պատմությունից. «Թուրքական տիրապետության շրջանում, 11-րդ դարում, երբ սուլթան Արփ-Արալանը Մանազկերտում բյուզանդական կայսր Դիոնենիսին հաղթեց և զերի բռնեց՝ Արևելյան Անատոլիան թուրք իշխաններին հանձնելու ժամանակ այդ տեղերում հայերի շեն հանդիպել: Այս տեղերի ճակատագիրը պաշտպանողների մեջ տեսնվել են բյուզանդացիներ և վրացիներ» (ընդգծումը մերն է, — հեղ.):

Այնուհետև ասվում էր, որ հայերն այդ շրջանները տեղափոխվել են հետագայում՝ Կովկասից և Պարսկաստանից<sup>2</sup>:

<sup>1</sup> Հայկ. ՄՍՈՒ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 866, թ. 117—118:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 118—119:

Այսպես ուրեմն, համաձայն Կարաբեքիրի, 11-րդ դարում հայ ժողովրդի հայրենիքում՝ պատմական Հայաստանում, հայեր չեն եղել: Այդ այն ժամանակ, երբ իրենք՝ օսմանյան թուրքերը, Ալթայից և Միջին Ասիայից դեռ չէին գաղթել Փոքր Ասիա, որտեղ վաղուց ի վեր հիմնված էր հայկական պետությունը, իսկ Անին և Կարսը X դարից Հայաստանի մայրաքաղաքներն էին:

Ահա թուրք շովինիստների այս կեղծարարությունն է, որ լայնորեն օգտագործվում է ժամանակակից թուրք պատմաբանների աշխատություններում:

Թուրք պատմաբաններն իրենց աշխատություններում ժխտում են նաև սուլթանական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական, հերոսական պայքարը, իսկ հայկական հարցի առաջ գալը վերագրում են Կոստանդնուպոլսի հայ բարձր հոգևորականությունը, հնչակյան և դաշնակցական կոմիտեներին, որոնք այդ հարցը իբր հորինել են ի վնաս Թուրքիայի անկախության, օտար պետությունների միջամտությունն առաջ բերելու նպատակով:

Այս միտումնավոր կեղծիքի նպատակն է թուրքական բռնապետության կողմից հայ ժողովրդի նկատմամբ ձեռնարկած բոլոր գազանային շարագործությունները ներկայացնել որպես սոսկ հիշյալ կոմիտեների գործունեության հետևանք: Դրանով իսկ թուրք հեղինակները կոպիտ ձևով խեղաթյուրում և նենգափոխում են Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի լայն զանգվածների այն անհաշտ ու արդարացի պայքարը, որ նրանք մղում էին օսմանյան բիրտ կարգերի դեմ՝ հանձն իրենց հայրենիքի ազատագրության:

Թուրք պատմագրության մեջ արժարծվում են հայ ժողովրդի պատմության ինչպես հին, միջնադարյան, այնպես էլ նոր և հատկապես նորագույն շրջանին վերաբերող բազմաթիվ հարցեր:

Սույն աշխատության նպատակն է վեր հանել և մերկացնել հայ ժողովրդի նոր շրջանի պատմության մի շարք կարեւոր, հանգուցային հարցերի նենգափոխումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ:



Թուրք պատմաբանների և պետական ու քաղաքական գործիչների աշխատություններում և հուշերում մեծ տեղ է հատկացված Արևմտյան Հայաստանում XIX դ. երկրորդ կեսից լայն թափ առացած հայ ժողովրդի ազատագրական պայքարի հարցերին: Թուրք հեղինակները ջանք չեն խնայում սուլթանական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարը ժխտելու՝ այն հանգեցնելով «դաշնակ և հնչակյան կոմիտեիների գործունեությանը»: Այսպես, էսադ Ուրասն իր վերը նշված գրքում և հայտնի պատմաբան Ահմեդ Բեդևի Կուրանը՝ «Ապստամբական շարժումները և ազգային կռիվները Օսմանյան կայսրությունում» վերնագրով մեծածավալ աշխատության մեջ բազմաթիվ էջեր են նվիրել այդ կոմիտեիների գործունեությանը, համառորեն անցկացնելով այն միտքը, որ մինչև դրանց հանդես գալը օսմանյան կայսրության մեջ որևէ հակաթուրքական մասսայական շարժում չի եղել<sup>1</sup>: Թուրք հեղինակները պատմության հանրահայտ փաստերի նենգափոխումը հասցրել են այն աստիճանի, որ նույնիսկ հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական և փառավոր էջեր հանդիսացող 1862 թվականի Զեյթունի ապստամբությունը, Մտեշի 1863 թվականի ապստամբությունը, Զարսանջաքի 1865 թվականի ապստամբությունը, Զեյթունի 1875 և 1884 թվականների ապստամբությունները վերագրում են վերոհիշյալ կոմիտեիներին: Մինչդեռ քաջ հայտնի է, որ այդ կոմիտեիները նշված շրջանում դեռևս հրապարակ չէին եկել: Նրանց հանդես գալուց շատ առաջ, 19-րդ դարի 50—70-ական թվականներին Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի ազատագրական պայքարն ընդ-

<sup>1</sup> Տե՛ս՝ Esat Uras, s. 443—446; Ahmet Bedevi Kuran, Osmanlı İmparatorlugunda İnkılap hareketleri ve millî mücadele. İstanbul, 1956, s. 186—187.

հանուր բնույթ ստացավ և վերածվեց ազգային-ազատագրական շարժման՝ սուլթանական բռնապետության դեմ<sup>1</sup>։

Ազգային-ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում շարունակվեցին և հետագա տարիներին։ Անժխտելի փաստ է, որ հայ ժողովրդական զանգվածների ազատագրական շարժումներից անկախ, սուլթանական կառավարությունն իր հայաջինջ քաղաքականությունը մինչև վերջ իրականացնելու նպատակով 19-րդ դարի 70-ական թվականներին սկզբին բացահայտորեն հանդես է գալիս հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման մշակված ծրագրով։ Օսմանյան կայսրության բարբարոսական նպատակները շատ որոշակի և ցինիկորեն բնորոշել է հայտնի պետական գործիչ, անգլոֆիլ Քյամիլ փաշան, որը Աբդուլ Համիդի օրոք երկար տարիներ գրավում էր մեծ վեզիրի պաշտոնը։ Խոսելով Կվրոպական Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների ազատագրական շարժումների և արևմտյան տերությունների միջամտության մասին, նա ասում էր. «...Եթե Եվրոպիոն մեջ մեր ծոցը օձ սնուցինք, պետք չէ, որ նույն հիմարությունն ընենք մեր ասիական Տաճկաստանի մեջ. խեղճությունը ջնջել վերցնելն է այն ամեն տարերքը, որ օր մը կըրնան մեզ նույն վտանգը ծնանել և օտարին ձեռմխության առիթ և գործիք լինել»։

Հիմա, այսօր, գոնե Անգլիո շահերն կպահանջեն, որ Փոքր Ասիո (մենք և Անգլիան Հայաստան բառը ոչ միայն շենք ճանչեր, այլ այդ անունը հնչող կզակները պետք է ջախջախենք) մեր ունեցած երկիրները ազատ մնան օտարի միջամտութենեն և միջամտության ամեն առիթներին. ուստի այդ սուրբ նպատակին համար պետք է, և պետական իրավունքը կպահանջե, որ տրևիցե կասկածելի տարրը անհետ

<sup>1</sup> Այդ մասին մանրամասն տես Մ. Գ. Ներսիսյան, «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ, 1850—1870 թթ»։ Հայկ. ՄՍՍ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1955։ Վ. Գ. Մելիքեթյան, «Զեյթունի 1862 թ. ապստամբությունը»։ «Գիտությունների ակադեմիայի պատմության Բանգարանի գիտաշխատությունների ժողովածու» № 3, 1950, և այլն։

ընենք, որպեսզի ապագան ապահովենք. ուրեմն այդ հայ ազգը վերացնելու, անհետ ընելու ենք: Եվ այդ ի պիտի հանելու համար բան չի պակասիր մեզ, ամեն պործիք պատրաստում ենք—կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամենայն ինչ. կրոնական պատերազմ մը կհրատարակենք և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ո՛չ զենք ունի, ո՛չ զինվորություն և ո՛չ պաշտոն... Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնյա Եվրոպան կրոնակից մը փնտրե, և չի գտնե առճկական Ասիո մեջ, կթողու զմեզ հանգիստ և այն ատեն Կզբաղվինք ներքին պործերով և բարեկարգությունամբ...»<sup>1</sup>:

Հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման՝ Քյամիլ փաշայի կառավարության մշակած հրեշավոր ծրագիրը քացահայտ կերպով սկսեց կիրառվել 1894—96 թվականներից, երբ սուլթանական կառավարությունը Արևմտյան Հայաստանում կազմակերպեց մի շարք մասսայական ջարդեր: Պրոֆեսոր Դիլլոնը, խոսելով 1894—96 թվականների հայրական ջարդերի մասին, ընդգծում է. «Այժմ արդեն ապացուցված է, որ Սասունի կոտորածը Բ. Դոան գիտակցորեն կազմակերպված գործն է, մի գործ, որը խնամքով նախապատրաստվել է և անողոք իրագործվել, շնայած այն քանին, որ այդ սարսափները... կարեկցության զգացմունք առաջ բերեցին նուրնիսկ թուրքական զինվորների սրտերում»<sup>2</sup>:

1890-ական թվականների հայկական ջարդերի մասին պահպանվել են հսկայական թվով արխիվային նյութեր, թուրքիայում փնջարես ցարական Ռուսաստանի, այնպես էլ Եվրոպական տերությունների հյուպատոզների ու դեսպանների բազմաթիվ զեկուցագրեր, ժամանակակիցների հիշողություններ, թուրքահայաստանի հայերի և Կ. Պոլսի հայոց պատրիարքի դիմումները մեծ տերություններին: Ժամանակի պարբերական մամուլը լի է արյունարբու Աբդուլ Համիդի գա-

<sup>1</sup> «Փորձ», ազգային և գրական միամսյա հանդես, Տիփլիս, 1879, № 7—8, էջ 204—205:

<sup>2</sup> Проф. Эм. Диллон. Положение дел в Турецкой Армении. См. сборник «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.» М., 1896, стр. 332.

զանաչին շարագործությունների նկարագրությանը նվիրված հոդվածներով ու հաղորդումներով: Եվ, վերջապես, հայկական ջարդերի մասին մեծաթիվ գրականություն կա հայերեն, ռուսերեն և եվրոպական տարբեր լեզուներով: Այդ իսկ պատճառով հարկ չկա մանրամասնորեն կանգ առնել այդ հարցի վրա: Բավական է նշել, որ միայն 1894—1896 թվականներին հայկական վիլայեթներում կազմակերպված մասսայական ջարդերի հետևանքով զոհվեց 300 հազար մարդ: Հրկիզվեցին և հողին հավասարվեցին ավելի քան 3000 հայկական գյուղեր, տասնյակ հազարավոր հայեր իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու համար ստիպված էին թողնել հայրենիքը և ցրվել ամբողջ աշխարհում: Այս կոտորածներից հետո Արևմտյան Հայաստանի ամայացված վայրերը թուրքական իշխանությունները վերաբնակեցնում էին կայսրության ուրիշ շրջաններից տեղափոխված մահմեդականներով: Զարդերից զերծ չմնաց նաև Կ. Պոլիսը, որտեղ կազմակերպված ջարդերի մասին ցարական Ռուսաստանի զինվորական գործակալ, գնդապետ Պեշկովը 1895 թվականի սեպտեմբերի 22-ի զեկոսցագրում հաղորդելով այդ առթիվ «Երիտասարդ Թուրքիա» կազմակերպությունների կայացուցիչների հետ ունեցած իր զրույցի մասին, գրում էր, որ Արդու Համիդի հրամանով հասարակության տականքներից և ժանդարմերիայից կազմված հատուկ ջոկատները «գլխավորում էին Արդու Համիդի վախկոտության և արյունարբության զոհը դարձած բոլորովին անմեղ և անպաշտպան մարդկանց նկատմամբ տարվող խայտառակ գործողությունները...»:

«Այդ պատժիչ ջոկատների մասնակիցներից յուրաքանչյուրին,— շարունակում է Պեշկովը,— խոտացել էին օրական 20 դոլրոս և թախանի հեշտ ճանապարհով հարստանալու լայն հնարավորություն՝ լրիվ անպատիժ մնալու երաշխիքով... Դեռ ավելին, երբ օգոստոսի 14-ին պալատական կլիկի վարգադրությունից անտեղյակ ռազմական մինիստրինախաճեռնությամբ երկու զումարտակ զորք ուղարկվեց ջարդերի վայրը՝ կոտորածները դադարեցնելու նպատակով,

Յիլդիզից (սուլթանի պալատը, — հեղ.) հրաման ստացվեց՝ «գործին շնորհամտելը»<sup>1</sup>։ Այնուհետև ասվում էր այն մասին, որ ջարդերի հետևանքով ավերվել է 800 տուն<sup>2</sup>։

Թուրք հեղինակները, գիտակցորեն անտեսելով պատմական փաստերը կամ կոպիտ կերպով նենգափոխելով դրանք, փորձում են քողարկել Արևմտյան Հայաստանում և առհասարակ ամբողջ Թուրքիայում, հայերին իսպառ ոչնչացնելու թուրքական կառավարող շրջանների հրեշավոր ծրագիրը։

Սուլթանական և երիտթուրքական հայաջինջ քաղաքականութիւնն արդարացնելու նման ջանքեր գործադրվել են առաջներում, դեռևս I համաշխարհային պատերազմի տարիներին լույս տեսած գրականութեան մեջ։ Դրանցից կարելի է հիշատակել Ամերիկայի Միացյալ Նահանգներում թուրքական նախկին դեսպան Ահմեդ Ռուստեմ բեյի՝ 1918 թվականին Շվեյցարիայում ֆրանսերեն լեզվով հրատարակված «Համաշխարհային պատերազմը և թուրք-հայկական հարցը» վերնագիրը կրող գիրքը<sup>3</sup>, որտեղ հեղինակը սկզբից մինչև վերջը արդարացնում է հայերի նկատմամբ տարվող քաղաքականութիւնը։ Ոչ մի խոսք չստեղծվեց սուլթանական կառավարութեան հակահայկական միջոցառումների մասին, հեղինակը 1894—96 թթ. և հետագա առ ջարդերի մեղքը փորձում է բարդել «մոլեռանդ ամբոխի», բրդերի վրա՝ մի շարք «փաստեր» բերելով ցարական պաշտոնյաների զեկուցագրերից<sup>4</sup>։ «Իսլամի անունից Թուրքիայում կատարված բոլոր անկարգութիւնների հեղինակը ամբոխը և այն անհատներն էին, որոնք գործում էին իրենց սեփական նախաձեռնութեամբ՝ սանձարձակութեան և ֆանատիզմի ազդեցութեան տակ...»<sup>5</sup>, — գրում է նա։

<sup>1</sup> Центральный Государственный военно-исторический архив (ЦГВИА), ф. 450, оп. 1, л. 113, л. 55—56.

<sup>2</sup> Նույն տեղում։

<sup>3</sup> Ahmed Rustem bey, La guerre mondiale et la question turco-arménienne. Berne, 1918.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 7—13։

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 7։

Ժամանակակից պատմաբան էսադ Ուրասը շարունակում և զարգացնում է իր նախորդների կեղծիքը:

Խոսելով 1894—1896 թթ. կոտորածների, 1909 թվականի Ադանայի ջարդի և, վերջապես, ամբողջ աշխարհին հայտնի 1915—1916 թվականների հայկական եղեռնի մասին, նա լիտիորեն պնդում է, որ այդպիսի ջարդեր չեն եղել, որ «թուրքերի կողմից 600 հազար, 800 հազար և նույնիսկ մեկ միլիոն հայերի սպանելու մասին բազմաթիվ հեղինակների գրածները իրականութան հետ ոչ մի կապ չունեն: Այդ բոլորը առասպելներ են: Ընդհակառակը, հայերի կողմից ըսպանված մուսուլմանների թիվն ավելի է, քան վերը հիշված թվերը»:<sup>1</sup>

Պատմության թուրք կեղծարարների այդպիսի տտահող պնդումները ի վիճակի չեն հերքելու արխիվային բազմաթիվ փաստաթղթերի և 'եվրոպական հեղինակների քերած այն հսկայական նյութը, որը մինչև վերջ մերկացնում է «արյունոտ սուլթան» Աբդուլ Համիդին և նրա ջարդարարական քաղաքականությունը ավելի լայն մասշտաբներով շարունակողներին՝ երիտթուրքական ղեկավարներին: Վերջիններիս կողմից անցկացվող՝ Օսմանյան կայսրության մահմեդական տարբեր ժողովուրդներին ասիմիլիացիայի ենթարկելու, իսկ քրիստոնեական բնակչությունը ֆիզիկապես ոչնչացնելու վայրենի քաղաքականության առաջին արտահայտություններից մեկը 1909 թվականի գարնանը Ադանայում և Կիլիկիայի այլ քաղաքներում կազմակերպված մասսայական ջարդերն էին, որոնց զոհը դարձավ խաղաղ ազգաբնակչությունը: Այդ արյունոտ իրադարձությունների առաջին ալիքն անցավ 1909 թվականի ապրիլի 14—16-ին, Ստամբուլում տեղի ունեցած տեակցիոն հեղաշրջման օրերին: Նոր կոտորածը սկսվեց ապրիլի 25-ին, այսինքն՝ երիտթուրքերի կողմից գլխավորվող զորքերի Ստամբուլ մտնելու հաջորդ օրն իսկ:

«Այդ երկրորդ ջարդը, — գրում էր Ստամբուլում ցարա-

<sup>1</sup> Esat Uras, s. 617.

կան դեսպանութեան թարգման Մանդելշտամը,— ավելի սարսափելի էր, քան առաջինը: Երիտթուրքերի կառավարութեանը, հորինելով հայկական հեղափոխութեան մատին հեքիաթը, փորձում էր իր վրայից պատասխանատւութիւնը վերցնել, սակայն փաստերի առջև նա ստիպված էր հրաժարվել այդ վերսիայից»<sup>1</sup>: Իսկ ռուսական դեսպան Զինովկը 1909 թվականի մայիսի մեկին Ստամբուլից հաղորդում էր. «Ադանայի վիլայեթում մահմեդականների կատաղութեաները հրեշավոր շահերի են հասել: Նրանց ձեռքով զոհված քրիստոնյաների, առանձնապես հայերի թիվը համնում է 15 հազարի»: <sup>2</sup> Կառավարութեան վողմից ուղարկված զորքերը մահմեդական մոլեռանդ ամբոխի հետ մեկտեղ կոտորում էին քրիստոնյաներին, «առանց սեռը և տարիքը հաշվի առնելու, կողոպտում և հրկիզում էին նրանց տները...»: «Ադանա քաղաքը,— ասվում էր այնուհետև հաղորդման մեջ,— այլևս գոյութիւն չունի»: <sup>3</sup>

Ջարդերի ականատեսներից մեկը՝ Գիրբոնսը, նկարագրելով Ադանայի ջարդի մանրամասնութեանները, նշում է, որ հայերին անողոքաբար կոտորում և գնդակահարում էին փողոցներում, կենդանի այրում էին այն տներում, որտեղ նրանք պատսպարվում էին: Չէին խնայում ոչ ծերերին, ոչ կանանց, ոչ էլ երեխաներին: «Այդ ջարդն ավելի սարսափելի էր,— եզրակացնում է հեղինակը,— քան Աբդուլ Համիդի ժամանակներում»<sup>4</sup>:

«Այն հայերը, որոնց հաջողվել էր փրկվել առաջին ջարդի ժամանակ, այժմ ոչնչացվեցին: Ադանան դժողք է դարձել»,— վերջում գրում էր Գիրբոնսը:<sup>5</sup>

<sup>1</sup> Mandelstam, André. Le sort de l'Empire Ottoman. Lausanne—Paris, 1917, p. 205.

<sup>2</sup> Архив внешней политики России (АВПР), ф. «Политархив», д. 1034, л. 130.

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Gibbons, Helen Davenport. The Red Rugs [of Tarsus]. Paris, 1919, p. 101.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 122:

Ադանայի օրինակին հետևելով, Թարսուս քաղաքի իշխանությունները ևս մայիսի 3-ին հայերի ջարդ կազմակերպեցին, որն ուղեկցվում էր հրդեհներով ու կողոպուտներով: «Հայերի ջարդը,— տեղեկացնում էր ռուսական դեսպանը,— տարածվեց նաև Հալեպում, Ջեյթունում, Մարաշում, Անտիոքում և Բիլեջիկում»<sup>1</sup>:

Մի ուրիշ ականատես վկայում է, որ 1909 թվականի ապրիլի 16-ին Թարսուսի տեղական իշխանությունները զենք բաժանեցին հատուկ գնացքով ժամանած մահմեդական ֆանատիկոսներին, որոնք ներխուժելով քաղաքի հայաբնակ թաղամասերը, այնտեղ արյունալի ջարդ կազմակերպեցին: «Թարսուսի հայկական տները կրակի մատնվեցին... այրվող տները լքող բնակիչները գնդակոծվում էին, շատ քիչ հայեր կենդանի մնացին»:<sup>2</sup>

Ժամանակակից թուրք հեղինակները, ջանալով արդարացնել երիտթուրքերի շովինիստական ջարդարարական քաղաքականությունը, բացահայտորեն կեղծում են մոտիկ անցյալի պատմության փաստերը, այդ թվում և 1909 թվականի Ադանայի արյունոտ իրադարձությունները: Պանթուրքիստ պատմաբան էսադ Ուրասն, օրինակ, ցինիկորեն հայտարարում է, որ Ադանայի ջարդերի պատասխանատվությունն ընկնում է հայերի վրա, որոնք, նրա ասելով, «տանջում էին մահմեդականներին»: «Երիտթուրքական կառավարությունն այստեղ մեղք չունի»,— գրում է նա:<sup>3</sup> Միաժամանակ, հեղինակը գիտակցորեն խիստ նվազեցնում է Ադանայի ջարդի զոհերի թիվը, պնդելով, որ սպանվել է ընդամենը հազար մարդ:<sup>4</sup>

<sup>1</sup> АВПР, ф. «Политархив», д. 1034, л. 130.

<sup>2</sup> «La voix de l'Arménie», 15. I. 1918, № 2, p. 67.

<sup>3</sup> Esat Üras, s. 575.

<sup>4</sup> Նույն տեղում:

Պետք է ասել, որ էսադ Ուրասն այստեղ ևս փաստորեն կրկնում է վերը հիշված Ահմեդ Ռուստեմ բեյին, որը դեռ 1918 թ. երիտթուրքական զեկավար շրջանների ջարդարարական քաղաքականությունն արդարացնելու նպատակով գրում էր, որ կառավարությունը հանցանք

Այս հարցում էլ էսադ Ուրասը, թուրք մյուս պատմա-  
բանների նման, գիտակցորեն շրջանցում է ինչպես վերը  
բերված միանգամայն վստահելի և ստուգված օտար աղ-  
բյուրները, այնպես էլ հենց թուրք հեղինակների աներկիմաստ  
խոստովանութուններն ու բացահայտ մերկացումները: Այս-  
պես, կրկնելով «մահմեդականներին հայերի փողմից տան-  
ջելու» մասին կեղծիքը, նա լուսթյան է մատնում «Իթթիհատ  
վե թերաքքը» պարտիայի ղեկավար գործիչներին մեկի՝ Մեվ-  
լանզադե Ռիֆաթի հուշերը, որտեղ վերջինս հաստատում  
է, որ 1909 թվականի Ադանայի ջարդերում մեղավոր է հենց  
երիտթուրքական կառավարությունը: «Նուլնիսկ 1909 թվա-  
կանի մարտի 31-ի հեղաշրջման տաղնապալի օրերին,—  
գրում է Մեվլանզադեն,— Իթթիհատ վե թերաքքը կուսակ-  
ցությունը հայերը չէր մտոացած: Ատանայի մասնաճյուղը  
(այդ պարտիայի տեղական կազմակերպութունը) կեղքո-  
նե ստացած հրահանգին համաձայն, Կիլիկիո, մասնավորա-  
պես Ատանային մեջ ընդհանուր ջարդ մը պատրաստելու  
սկսած էր:

Տարածայնելով, թե հայերը պիտի ապստամբին և Կի-  
լիկիո մեջ հայկական օջախ մը հիմնել կձգտին՝ հասարակ  
ժողովուրդը հայերու դեմ գրգռելու գործի սկսած էին»<sup>1</sup>  
(ընդգծումները մերն են,— հեղ.):

Անդրադառնալով 1909 թվականի ապրիլի 25-ի Ադա-  
նայի ջարդի դրդապատճառներին, Մեվլանզադեն ուղղակի  
գրում է. «25 ապրիլ 1909-ի կիրակի օրը, առանց որևէ  
պատճառ տեսնելու, կեսօրին վերջ, հանկարծ հայկական թա-  
ղեն զենքի ձայներ լսվել սկսան, շուկան իրենց գործերով  
զբաղված հայերը այս ձայներեն խուճապի մատնված և

չունի 1909 թ. Ադանայի ջարդում, որը պարզապես «մի պայթյալ», մի  
կռիվ էր Կիլիկիայի երկու տարրերի՝ մահմեդականների և հայերի  
միջև»: (Ahmed Rustem bey, p. 30—33).

<sup>1</sup> Մեվլանզադե Ռիֆաթ, «Թուրքական հեղափոխության մութ  
ծալքերը»: Թարգմանութուն թուրքերենից (Mevlan Zade Rifat, Tür-  
kiye İnkilâbının iç yüzü. Halep, 1929, արաբատառ թուրքերեն): Բեյ-  
րութ, 1938, էջ 171:

Իթթիհիաթ վն Թերագգիի փրոփագանդիստները վախցող հայերուն «վախնալիք բան չկա» խոսքերով հայերը քնացնելու և անոնց փախուստին առիթ շտալու աշխատած էին:

Չենքի ձայները սաստկացած և խնդիրը հասկցված էր: Տեսն Աղաճի վաշտը, առանց որևէ պատճառի, հայերու վրա կրակելու հրաման ստացած էր<sup>1</sup> (ընդգծումները մերն են, — հեղ.):

Պատմության թուրք կեղծարարները պատմական հանրահայտ փաստերի նենգափոխման մեջ ավելի մեծ ջանքեր են գործադրում՝ արդարացնելու համար հայ ժողովրդի նկատմամբ հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքական կառավարության վարած գազանային, ջարդարարական քաղաքականությունը:

Հայերի մասսայական կոտորածները «ժխտելու» իրենց փորձերում նրանք խիստ նվազեցնում են Արևմտահայաստանում և Կիլիկիայում հայերի ընդհանուր թիվը, պնդելով, որ հիշյալ վայրերում նրանք ձրբք մեծամասնություն չեն կազմել: Այսպես, էսադ Ուրասը միտումնավոր կերպով անտեսելով հայերի թվի մասին օտար աղբյուրների տվյալները, հենվում է թուրքական պաշտոնական վիճակագրության տվյալների վրա, որոնք սուլթանական կառավարությունը, քաղաքական նկատառումներից ձրնելով, մշտապես դիտավորյալ կերպով նվազեցրել է: Օգտվելով այդ տվյալներից, մասնավորապես 1911—1912 թվականների պաշտոնական վիճակագրությունից, էսադ Ուրասը գալիս է այն հզորացություն, որ Օսմանյան ամբողջ կայսրությունում հայերի թիվը կազմում էր ընդամենը մեկ միլիոն 161 հազար մարդ, և որ նրանք՝ «հայերը, ոչ մի տեղում, նույնիսկ Բիթլիսի, Վանի, էրզրումի վիլայեթներում մեծամասնություն չեն կազմել: Սվասում, ուր հայերի թիվը ամենից մեծն էր, դարձյալ մահմեդականների թիվը 840 հազար մարդ էր, իսկ հայերինը՝ 170 հազար, յսինքն՝ 15% -ը: Մի վիլայեթ, մի սանջակ,

<sup>1</sup> Մեկլանդադե Ռեֆաթ, Թուրքական հեղափոխության յուր ծալբերը, էջ 174:

նույնիսկ մի նահիյե (գավառ) շկա, ուր հայերը մեծամասնութիւն կազմեին<sup>1</sup>» (ընդգծումը մերն է, — հեղ.):

Հայտնի թուրք պատմաբան, պրոֆեսոր Թաշիր Գյուկբիլգինը «Թուրքիայի Պատմութեան Ընկերութեան» կողմից հրատարակված «Աղգային կովի սկիզբը» վերնագիրը կրող գրքում նույնպես գտնում է, որ «ամբողջ պատմութեան ընթացքում քրճութեան հայրենիքը հանդիսացող (? !) արևելյան վիլայեթներում հայերը վաղուց ի վեր մի շնչին փոքրամասնութիւն էին կազմում»<sup>2</sup> (ընդգծումը մերն է, — հեղ.):

Իր գրքի մի այլ բաժնում, անդրադառնալով արևելյան վիլայեթներում հայերի և մահմեդականների թվին, հեղինակը անհեթեթութեան հատնող տվյալներ է մեջ բերում, հենվելով իբր «եվրոպական պաշտօնական վիճակագրութեան» վրա՝ ցույց շտալով և ոչ մի աղբյուր.

«Պատերազմից առաջ, — գրում է նա, — այնտեղ շորս միլիոն մահմեդական ազգաբնակչութեան դիմաց 600 հազար քրիստոնյա կար»<sup>3</sup>. Հեղինակը անվիճելի փաստ է համարում այն, որ իբր թուրքերը էրզրումի և Բիթլիսի վիլայեթներում մեծամասնութիւն են կազմել, իսկ Դիարբեքիրի վիլայեթում հայերի ընդհանուր թիվը նույնիսկ 5%-ի չի հասել, ընդամենը մոտ 3,5% է եղել<sup>4</sup>:

Այս թվերը շինծու, հորինված թվեր են և ընդհանուր ոչինչ չունեն իրական տվյալների հետ: Դիմենք փաստերին.

Մորզանի բերած տվյալների համաձայն, Օսմանյան կայսրութիւնում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին կար երկու միլիոն 380 հազար հայ ազգաբնակչութիւն<sup>5</sup>: Կ. Պոլսի Հայկական պատրիարքարանի արժանահավատ տվյալներով՝ երկու միլիոն 660 հազար մարդ, որից

<sup>1</sup> Esat Uras, s. 145—147.

<sup>2</sup> Prof. Tayyib Gökbilgin, Milli mücadele başlarken. Mondros müharekesinden Sivvas kongresine, Birtinci kitap. Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1959, s. 73.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 114:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Jacques de Morgan, Histoire du peuple arménien. Paris, 1919, p. 297.

Արևմտյան Հայաստանում՝ մեկ միլիոն 630 հազար<sup>1</sup>։ Ամերիկյան հեղինակ Գուտմանի բերած թվական տվյալներով, որոնք պետք է դիտել նվազեցված, միայն Արևմտյան Հայաստանում բնակվում էին մեկ միլիոն 58 հազար հայեր<sup>2</sup>։ Իսկ Ջորջ Լենցովսկին, խոսելով հայկական ջարդերի մասին, նշում է, որ արտաքսվել են մոտ երկու միլիոն հայեր<sup>3</sup>։ Ֆրանսիական հայտնի ժուռնալիստ Մորիս Պեռնոն իր «Թուրքական հարցը» վերնագրով գրքում նշում է, որ հայերի ընդհանուր թիվը Թուրքիայում հասնում էր 2,5 միլիոնի<sup>4</sup>, Ֆրանսիական հայտնի իրավագետ Ռոլեն-ժեկմենի տվյալներով՝ երկու միլիոն 400 հազարի<sup>5</sup>։ Վերջերս լույս տեսած «Սովետական պատմական հանրագիտարանի» տվյալների համաձայն, մինչև 1915—1916 թվականների հայկական ջարդը Թուրքիայում կային 2,5 մլն. հայեր<sup>6</sup>։

Ինչ վերաբերում է հայկական վեց միլիայեթների ազգաբնակչության տոկոսային հարաբերությանը, թուրք հեղինակները, ղեկավարվելով Թուրքիայում բացի թուրքերից ուրիշ մահմեդական ժողովուրդներ չճանաչելու շովինիստական, ասիմիլյատորական մտայնությամբ, մահմեդական ազգաբնակչության ընդհանուր թիվը ըստ ազգային պատկանելիության ցույց չեն տալիս։ Այդ ձևով ջանալով թուրքերին ներկայացնել որպես երկրի միակ մահմեդական ժողովուրդը, նրանք պնդում են, որ վերջիններս հայկական բոլոր վիճակ-

<sup>1</sup> Population arménienne de la Turquie avant la guerre. Statistiques établies par le Patriarcat arménien à Constantinople. Paris, 1920, p. 9.

<sup>2</sup> Joseph Guttman, The Beginning of Genocide. New York, 1948, p. 9.

<sup>3</sup> George Lenzowski. The Middle East in World Affairs. New York, 1953, p. 48—49.

<sup>4</sup> Maurice Pernot, La question turque. Paris, 1923, p. 207.

<sup>5</sup> М. Г. Роллен-Жекмен, Армения армяне и трактаты. Пер. с франц. Цит. по сб. „Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году.“ М. 1896, стр. 8.

<sup>6</sup> „Советская историческая энциклопедия“, т. 1. М., 1961, стр. 748.

յեթներում և նույնիսկ գավառներում մեծամասնութուն են կազմել: Այս կեղծիքը մերկացնելու համար բավարարվեմք մի քանի փաստով. Վանի վիլայեթում հայերի թիվը եղել է 185 հազար, Բիթլիսի վիլայեթում՝ 180 հազար, թուրքերինը՝ համապատասխանաբար 47 հազար և 40 հազար: Խարփութի և Դիարբեքի վիլայեթներում նույնպես հայերի թիվը ավելի է եղել, քան թուրքերինը, այսպես, Խարփութում հայեր՝ 168 հազար, թուրքեր՝ 102 հազար, Դիարբեքիում հայեր՝ 105 հազար, թուրքեր՝ 45 հազար<sup>1</sup>:

Իսկ վարչական առանձին միավորումներում՝ հենց նույն նահանգներում ու գավառներում, որոնց մասին հիշատակում են թուրք հեղինակները, հայերը բացարձակ մեծամասնութուն են կազմել:

«Չնայած հայերին վարչական տարբեր միավորումների մեջ արհեստականորեն անջատելու Բ. Դոան ձեռք առած միջոցառումներին, — գրում է Դիւեր, — հայերը Մուշի, Բուլանիկի, Խլաթի գավառներում 50—60% էին կազմում, Վանա լճի արևմտյան ափին տարածվող Վանի ընդարձակ գավառում՝ 80%»<sup>2</sup> և այլն:

Այսպիսով, թուրք պատմաբանների այն պնդումը, թե իբր Արևմտյան Հայաստանում հայերը աննշան տոկոս են կազմել, և ընդհանրապես Օսմանյան կայսրությունում հայերի ընդհանուր թվի խիստ նվազեցումը, որով նրանք նպատակ են հետապնդում քողարկել մեկ միլիոնից ավելի հայերի ջարդը, ոչ մի քննադատության չի դիմանում: Իրենց «գիտական» աշխատություններում նրանք լայնորեն օգտագործում են վերջին երկու տասնամյակում հայտնի ջարդարարներ, հայ ժողովրդի դահիճներ Քյազըմ Կարաբեքիր փաշայի, Քարիաթի, Ալի Ֆուադ փաշայի (Ջեբեսոյ) և մյուսների՝ գովերգող

<sup>1</sup> Population arménienne de la Turquie avant la guerre. Statistiques établies par le Patriarcat arménien de Constantinople. Paris, 1920, p. 9—10.

<sup>2</sup> Гр. А. Диев, Армянский вопрос в Турции. Сб. «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.» М., 1896, стр. 399.

առաջաբաններով՝ հրատարակված հուշերը: Եվ դա պատահական չէ: Թուրք հեղինակներին բալորովին ձեռնտու չէ իրենց տեսակետները հիմնավորելու համար վկայակոչել անաշառ դիտորդների և ականատեսների հրապարակած բազմաթիվ «օտար աղբյուրները», փաստաթղթերի ժողովածուները և նույնիսկ պատերազմի տարիներին բարձր դիրք գրաված թուրքական այն պաշտոնյաների փաստաթղթերը և հուշերը, որոնք իրենց անձն արդարացնելու համար ակամայից մերկացնում են երիտթուրքերի հայազինը գործունեությունը:

1946 թվականին Ստամբուլում լույս տեսան «Թալիաթի փաշայի հուշերը»՝ մոլի շովինիստ և ռեակցիոներ Հուսեյն Ջահիդ Յալլընի առաջաբանով, որտեղ նա նշում է, որ Օսմանյան կայսրության նախկին մեծ վեզիրը որոշել է հերքել առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերին հարուցվող մեղադրանքները: «Այս գիրքը, — գրված է ներածական մասում, — «Իթթիհատ վե Թերաքը» կոսակցությունն արդարացնող փաստաթուղթն է (müdafaa namesi)<sup>2</sup>: Յալլընը ճիշտ է գնահատում Թալիաթի «ստեղծագործությունը», որի հեղինակը Օսմանյան կայսրության խայտառակ պարտությունից հետո փախչելով Բեռլին,

<sup>1</sup> Անցյալի ձախողված քաղաքական գործիչների գովքը, նրանց փառաբանումը տրվում է ոչ միայն այդ առաջաբաններում, այլև տարբեր բնույթի այլ աշխատություններում: Վերջերս Թուրքիայում «Ռեկֆեկլերի Ֆոնդի» գումարների հաշվին հրատարակված «Նոր Թուրքիան» վերնագիրը կրող գրքում, որտեղ ղեկավար էն Թուրքիայի պատմության, գիմնագիտության, կուլտուրայի, իրավունքի և այլ հարցերին նվիրված թուրք հայտնի մասնագետների մեծածավալ հույվածները, էջեր են հատկացված երիտթուրքական պարտիայի և նրա պարագլուխների՝ տերահույսի «արևմտի» էնվերի, Թալիաթի և Ջեմալի փառաբանմանը: «Այս երեքն էլ հայրենասեր, ընդունակ և մարդասեր անձնավորություններ էին».: «Իթթիհատ վե Թերաքըն» գեմոկրատական իմաստով քաղաքական մի պարտիա էր... էնվեր փաշան ազատության հերոս էր...» գրում է հեղինակներից մեկը՝ պրոֆեսոր էնվեր Ջիյա Կարալը: *Sb'u Yeni Türkiye*. Istanbul, 1959, s. 44.

<sup>2</sup> Talât paşanın hatıraları, s. 1.

նպատակադրվել էր շարամիտ կեղծիքի միջոցով արդարացնել իթթիհաթական պարտիայի և նրա կառավարութեան քաղաքական հանցավոր գործունեությունը, որ նա գլխավորում էր իր մերձակիցներ էնվերի և Ջեմալի հետ միասին: Հատուկ ջանատիրութեամբ և հետևողականութեամբ Քալեաթը աղավաղում է երիտասարդ թուրքերի կառավարութեան քաղաքականությունը հայկական հմբցում, որին նա առանձին բաժին է հատկացրել: Եվ դա հասկանալի է: Համաշխարհային պատերազմի տարիներին գրավելով ներքին գործերի մինիստրի (իսկ 1917 թվականից նաև մեծ վեզիրի) պաշտոնը, նա էնվերի, Ջեմալի, դոկտոր Նազլմի, Բեհեդադին Շաքիրի և իթթիհաթական մի քանի այլ ղեկավարների հետ միասին մշակել և անմիջականորեն ղեկավարել է հայ ժողովրդի իսպառ բնաջնջման հրեշավոր ծրագրի իրագործումը: Իր հուշերում Քալեաթը կրկնում է հայերի ապատամբությունների մասին շինծու վերսիան:

«Հենց որ սկսվեց պատերազմը,— գրում է նա,— Մուշի, Բիթլիսի, Վանի վիլայեթներում հայերի ապատամբություններ բռնկվեցին»:

«Մոռանալով» անձամբ իր կողմից տրված գաղտնի հրահանգները և բազմաթիվ գաղտնի հեռագրերը՝ հայերին մինչև վերջին մարդը ոչնչացնելու և այդ եղանակով հայկական հարցն ընդմիշտ լուծելու մասին (որոնք բերվում են նայիմ բեյի և Մեվլանզադեի հրատարակած փաստաթղթերում), Քալեաթը Վերսիլիում պնդում է, որ «երբ գլխավոր շտաբը հայերին տեղահան անելու օրենքը նախագծեց», ինքը «նուրից հանդես եկավ դրա դեմ»<sup>2</sup> (ընդգծումը մերն է,—հեղ.): Իր հուշերը հրատարակելու Քալեաթ փառայի հիմնական նպատակն է երիտթուրքական լեռնայի վրայից վերցնել պատասխանատվությունը նրանց գործած ոճիրների համար: Քալեաթը ձիգ չի խնայում իթթիհաթական պարտիայի քաղաքականությունը արդարացնելու համար: Նա «անարդարացի» է

<sup>1</sup> Talât paşanın hatıraları, s. 63.

<sup>2</sup> Նույն տեղում:

համարում իթթիհաթական պարագլուխների նկատմամբ Ստամբուլի ռազմական դատարանի կողմից 1919 թվականի հուլիսի 6-ին կայացրած մահվան դատավճիռը<sup>1</sup>: Սակայն, նկատի ունենալով առաջին հերթին իրեն, էնվերին և Ջեմալին, նա ցինիկորեն գրում է. «Մի շարք անձինք ճիշտ չեն դատապարտվել, չնայած նրանց անմեղությունը հաստատող ակրնհայտ ապացույցներին»<sup>2</sup>

Հենց Թալեաթ փառաշայի այս կեղծիքն է ընկած ժամանակակից թուրք պատմաբանների տեսակետների հիմքում: Այսպես, վերը հիշված էսադ Ուրաան իր գրքում արդարացնում է երիտթուրքական կլիկի դահիճներին՝ վկայակոչելով սուլթանական կառավարության և իթթիհաթական կուսակցության կողմից 1915—1916 թվականներին հորինած կեղծ փաստաթղթերը, որոնք նպատակ ունեին շփոթության մեջ գցել համաշխարհային հասարակական կարծիքը՝ նրանից թաքցնելով իրենց շարագործությունները: Հեղինակն, օրինակ, մեջ է բերում հայկական շարդերի առթիվ սուլթանական կառավարության հայտարարությունը, որի մեջ վերջինս փորձելով «հերքել» այդ մասին տարածված լուրերը, հայտնում էր, որ «ընդհանուր անդորրություն հաստատելու համար Օսմանյան կառավարությունն իր անսահմանափակ իրավունքների համաձայն ձեռնարկված միջոցառումների շնորհիվ սանձահարեց հայերի ապստամբական ջարժումը՝ երբեք գործը կտուրածի չհասցնելով... Եթե որոշ հայեր արտաքսվել են պատերազմական գործողությունների գծից այն կողմ, դա բխում է իր ազգային անվտանգությունն ապահովելու՝ սուլթանական կառավարության օրինական անհամարժեքությունից»<sup>3</sup> (ընդգծումը մերն է, — հեղ.): Միևնույն

<sup>1</sup> Օսմանյան կայսրության պարտությունից հետո նրա նախկին ղեկավարները՝ էնվերը, Թալեաթը, Ջեմալը և դոկտ. Նազըմը հայկական վիլայեթներից հայերի տեղահանման (դեպորտացիայի) և շարդերի համար Ստամբուլի ռազմական դատարանի կողմից 1919 թ. հուլիսի 6-ին հեռակա կարգով դատապարտվել էին մահվան:

<sup>2</sup> Talât paşanın hatıraları, s. 76.

<sup>3</sup> Esat Uras, s. 620—621.

ժամանակ էսադ Ուրասը չի թաքցնում իր դժգոհությունը երիտթուրքական տրիումվիրատին փոխարինած կառավարության պրեմիեր-մինիստր Դամադ Ֆերիդ փաշայի խոստովանությունից, որը 1918 թվականի հոկտեմբերի 19-ի իր ճառում նախկին կառավարությանը մեղադրում էր հայկական կոտորածներ կազմակերպելու մեջ և մերկացնում երիտթուրքական ղեկավարներին, որոնք իրենց անմարդկային բռնությունները թաքցնելու համար հորինել և հրատարակել էին հատուկ գիրք<sup>1</sup>:

Խոսելով այդ գրքի մասին, Դամադ Ֆերիդն իր ճառում նշել էր, որ նրանում պրոպագանդավոզ այն միտքը, թե ղեպի արարական անապատները մեկ միլիոն հայերի ալտաքսումը փրկ թելադրված էր ստրատեգիական նկատառումներով, ոչ մի քննադատության չի դիմանում: Սուլթանական պրեմիեր-մինիստրը ստիպված էր ընդունել, որ կատարված գազանությունները ոչնչով հնարավոր չէ արդարացնել և որ «հայերի աքսորի պատասխանատվությունն ընկնում է ժամանակի կառավարության վրա»<sup>2</sup>:

Մյուս հայտնի թուրք պատմաբան, պրոֆեսոր Հիքմեթ Բայուրը «Թուրքական հեղափոխության պատմությունը» իր բազմահատոր աշխատության մեջ մանրամասն կանգ առնելով հայկական կոտորածների վրա, կրկնում է Թալեաթի վերը բերված ստահող պնդումը հայերի ապստամբությունների մասին: Հեղինակը համառոտն անց է կացնում այն միտքը, որ երիտթուրքերի կողմից ձեռնարկված պատժիչ միջոցառումները հետևանք էին հայկական վիլայեթներում ծագած հայերի ապստամբությունների, և որ կառավարու-

<sup>1</sup> Խոսքը վերաբերում է 1916 թվականին երիտթուրքական կառավարության կողմից Ստամբուլում հրատարակված «Հայկական կոմիտեների ապստամբական շարժումները սահմանադրության հայտաբերությունից առաջ և հետո» գրքին, որտեղ ղետեղված էին Թուրքիայի տարբեր շրջաններում հայերի շարժումների մասին շինծու «գոկումենտներ», նկարներ, թվական տվյալներ և այլ կեղծ փաստաթղթեր:

<sup>2</sup> Şek. Esat Uras, s. 703—704.

թյունը առաջինն ինքը չի նախաձեռնել և մշակել ջարդերի ծրագիրը, այլ ստիպված է եղել որոշ «պաշտպանական գործողութիւններին» դիմել<sup>1</sup>:

«Մեր այն ժամանակվա թշնամիների պնդումները հայերին աքսորելու և իբր նրանց սպանելու մասին, — գրում է Բայուրը, — կեղծիք են: Իրականում հայերի համընդհանուր ապստամբութիւն է եղել՝ թուրքական ղեկավարութեան և բանակի ամենակրիտիկական մոմենտին»<sup>2</sup>:

«Ո՞վ է առաջինը սկսել գործը», — հարցնում է հեղինակը և պատասխանում. «Առանց որևէ պատճառի հայերին գաղթեցնելու և ոչնչացնելու մեր տրամադրված լինելը թշնամական պրոպագանդա է, որը նպատակ ունի թուրքերին խիստ վարկաբեկել»<sup>3</sup>:

Հայերի «համընդհանուր ապստամբութեան» ստահող վերսխան, որը համառորեն տարածում էին երիտթուրքական կառավարող շրջանները և ժամանակակից թուրք պատմաբանները, այդ մինչև վերջը կեղծ մեղադրանքը հերքվել է ջարդի բազմաթիվ ականատեսների և նույնիսկ իթթիհաթականների ղեկավարներից մեկի՝ Մեվլանզադեի կողմից: Վերջինս իր վերջը հիշատակված գրքում ուղղակի խոստովանում է, որ ամենուրեք կազմակերպվող հայերի ջարդերը առանձին տեղերում նրանց ստիպում էին ապստամբութեան դիմել՝ ինքնապաշտպանութեան նպատակով<sup>4</sup>:

Նույնն է հաստատել իր ժամանակին Մանդելշտամը, գրելով հետևյալը.

«Չնայած թուրքական կառավարութեան կեղծ հաղորդումներին, ո՛չ մի հայկական հեղափոխութիւն կամ ապստամբութիւն չի եղել: Հայերը զենք վերցրեցին միայն այն ժամանակ, երբ նրանց սպառնում էր ջարդը»<sup>5</sup>:

<sup>1</sup> Şen Yusuf Hikmet Bayur, Türk İnkılâbı tarihi, Cilt III, 1914—1918 genel savaşı, kısım 3. Türk Tarih Kurumu basımevi, Ankara, 1957, ss. 3, 5—6, 9.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 4:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 7—8:

<sup>4</sup> Մեվլանզադե Ռիֆաթ, նշվ. աշխ., էջ 147:

<sup>5</sup> A. Mandelstam, Le sort de l'Empire Ottoman, p. 242.

Միանգամայն բնական է, որ ջարդերի ընթացքում հայերը մի շարք վայրերում՝ Վանում, Շաբին-Կարահիսարում, Մուսա լեռան վրա և այլուր, զենքը ձեռքին ինքնապաշտպանության տեսան և այդ ձևով նրանց մի մասին հաջողվեց ջարդերից փրկվել:

Հիբմեթ Բայուրը կոպիտ կերպով նենգափոխելով պատմական իրականությունը, ամբողջ աշխարհին հայտնի հայկական մեծ եղեռնը անվանում է «հայերի ապստամբության ճնշման մի ձև»<sup>1</sup> և համեմատելով ֆաշիստական Գերմանիայում հրեաների ոչնչացման փաստի հետ, ցինիկորեն եզրակացնում, որ հայերի դեմ ձեռնարկված գործողությունները, այսինքն՝ հայկական ջարդերը, այնքան էլ լայն չափերով չեն կատարվել<sup>2</sup>: Ընդհանրապես, հայերի մասսայական տեղահանությունն ու ջարդերը Բայուրի աշխատության մեջ ներկայացվում են սոսկ ուղղակի նկատառումներից բխող մի տեղափոխություն.

«Ժողովուրդը զանգվածներով տեղափոխվեց Հալեպի և Դիարբեքի կողմերը, — գրում է Բայուրը: — Նրանք ուղարկվեցին քարավաններով, ժանդարմերիայի ուղեկցությամբ և իրենց սնունդն անձամբ պետք է հայթայթեին...»<sup>3</sup> (ընդգծումը մերն է, — հեղ.):

Հեղինակը համառորեն այն միտքն է ընդգծում, թե իբր թուրքական տեղական և զինվորական իշխանությունները «նրանց (հայերի, — հեղ.) հանդեպ քիչ թե շատ կոռեկտ են վարվել» և միայն «նեբրքին շրջաններում օժանդակ ժանդարմերիայի և քրդերի կողմից կատարված ջարդերի, հոգևածության, վարակիչ հիվանդությունների ու կարիքի հետևան-

<sup>1</sup> Yusuf Hikmet Bayur, s. 6.

<sup>2</sup> Իբր ժամանակին նման ցինիկ համեմատությունն է արել մեզ արդեն ծանոթ հեղինակ Ահմեդ Ռուստեմ՝ բեյը, գտնելով, որ քրիստոնյաների նկատմամբ Օսմանյան կայսրությունում թույլ արված «ծայրահեղությունները» «եբբեք չեն հասել ինկվիզիցիայի և Բարթոլոմեոսյան դիշերվա սարսափներին»: Sık'ın Ahmed Rüstem bey, p. 6—7.

<sup>3</sup> Yusuf Hikmet Bayur, s. 8.

քով մոտ կես միլիոն մարդ զոհվեց»<sup>1</sup> (ընդգծումը մերն է, — հեղ.):

Այստեղ հեղինակը բացահայտորեն երկու կեղծիք է թույլ տալիս. գիտակցորեն խիստ նվազեցնում է զոհերի թիվը և հետո պնդում, որ երիտթուրքական կառավարութիւնն ու տեղական իշխանութիւնները հանցավոր չեն հայկական ջարդերում: Թուրք պատմաբանին, ինչ խոսք, հայտնի են ջարդերի մասին եվրոպական լեզուներով լույս տեսած պաշտոնական հրատարակութիւնները, վիճակագրական տվյալները և բազմաթիվ աշխատութիւններ, որոնցում բերված հավաստի տվյալները վկայում են, որ 1915 թ. մեծ եղեռնի ժամանակ զոհվել է ավելի քան մեկ միլիոն մարդ:

Այսպես, գերմանական գիտնական Լեպսիուսը, որն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, մասնավորապես ջարդի ժամանակ, լինելով Թուրքիայում, գերմանական հյուպատոսարանների միջոցով հավաքել և հրատարակել է հայկական ջարդերին նվիրված փաստաթղթերի սովորածավալ ժողովածու, գտնում է, որ 1915 թ. զոհվել է մեկ միլիոն մարդ<sup>2</sup>:

Ա. Մանդելշտամն իր «Օսմանյան կայսրութիւնի ճակատագիրը» հայտնի աշխատութիւն մեջ, նույնպես հենվելով գերմանական հյուպատոսների տվյալների վրա (որոնց բնութագրումն էլ ձեռնառու շէր շափազանցել եղած թվերը), նշում է, որ զոհվել է մեկ միլիոնից ավելի մարդ, տրից մոտ 500 հազարը՝ կանայք և երեխաներ<sup>3</sup>: Այս թիվը բերում են նաև մի շարք այլ հեղինակներ<sup>4</sup>:

<sup>1</sup> Yusuf Hikmet Bayur, s. 8.

<sup>2</sup> Տե՛ս J. Lepsius, Deutschland und Armenien. Potsdam, 1919, s. LXV.

<sup>3</sup> A. Mandelstam, Le sort de l'Empire Ottoman. Paris, 1917, p. 408.

<sup>4</sup> Տե՛ս La cause nationale arménienne. Documents concernant le problème de la libération de l'Arménie Turque. Paris, 1945, p. 29; „Современная Турция“, Изд. вост. лит.-н. М., 1956, стр 131; БСЭ, II изд., т. 3, стр. 65; „Советская историческая энциклопедия“, т. 1, М., 1961, стр. 748 և այլն:

Անդրադառնանք Բայուրի մյուս կեղծիքին՝ հայկական շարդերում երիտասարդ թուրքերի կառավարութեան քան-մեղսակիցք ըինելու հարցին: Նրա ստվարածավալ աշխատութեան մեջ և ո՛չ մի խոսքով չեն հիշատակվում կառավարութեան կողմից ընդունված գաղտնի որոշումներն ու տեղական իշխանութիւններին տրված բազմաթիվ հրահանգները, որոնցում ամենայն պարզութեամբ խոսվում էր այն մասին, որ հայերի աքսորը մինչև վերջը հետևողականորեն պետք է օգտագործել նրանց իսպառ ոչնչացնելու համար: Իր թյուրեզրակացութիւնները հիմնավորելու համար բազմաթիվ աղբյուրներ վկայակոչող թուրք պատմաբանին, ինչ խոսք, քաջ հայտնի են դեռևս 1920 թվականին Նայիմ բեյի կողմից հրատարակված գաղտնի փաստաթղթերը և իթթիհաթական կոմիտեի ղեկավարներից մեկի՝ Մեվլանզադե Ռիֆաթի հուշերը:

1920 թվականին Լոնդոնում լույս տեսան աքսորված հայերի գործերի Հալեբի կոմիտեի պլխավոր քարտուղար Նայիմ բեյի հուշերը<sup>1</sup>: Լինելով այդ պաշտոնում, Նայիմ բեյի ձեռքի տակ են գտնվել հայերի աքսորին և ոչնչացմանը վերաբերող երիտթուրքական կառավարութեան և իթթիհաթական պարտիայի մի շարք կարևորագույն փաստաթղթերի փսկական օրինակները:

Մյուս թուրքական աղբյուրը, դա վերը հիշված Մեվլանզադեի հուշերն են, որոնք արժեքավոր են նրանով, որ հեղինակը, հանդիսանալով «Իթթիհաթ վե Թերաքքը» կուսակցութեան կենտրոնական կոմիտեի անդամ, մասնակցել է նրա գաղտնի նիստերին, որոնցից մեկում, 1915 թվականի սկզբներին, առաջին անգամ մշակվել է հայերի ոչնչացման հրեշավոր ծրագիրը:

Հանգամանորեն խոսելով Թալեաթի նախագահութեամբ գումարված այդ գաղտնի նիստի մասին, որին մասնակցում էին էնվերը, դոկտոր Նազըմը, դոկտոր Բեհանդդին Շաքիրը, Կարա Քեմալը, Հասան Ֆեհմին, Զավիդը և Աղա Օղլու Ահ-

<sup>1</sup> The Memoirs of Naim bey. London, 1920.

մեղքը, Մեկլանգադեն նշում է, որ հիմնական զեկուցողը երիտթուրքական կոմիտեի պատնասխանատու քարտուղար դոկտոր Նազըմն էր, որն իր հելույթում ասել էր.

«Եթե 1909-ի մեր Ադանալի և այլ վայրերու մեջ կատարել տվածին նման տեղական ջարդերով պիտի գոհանանք... եթե այս մաքրագործումը ընդհանուր և վերջնական չպիտի ըլլա, օգուտի տեղ վնասը անպայման է, պետք է, որ հայ ազգը արմատախիլ ըլլա, մեր հողին վրա անհատ մը անգամ չմնա, հայ անտնը մոռացվի: Հիմա պատերազմի մեջ ենք, ասկե հարմար առիթ չի գտնվիր, մեծ պետութեանց միջամտութիւնը և թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնա ըլլալ, ըլլա նույնիսկ, խնդիրը կատարված իրողութիւն մը կդառնա և կփակվի: Այս անգամվան գործողութիւնը բնաջնջումի գործողութիւն մը պիտի ըլլա, հայերու մեկ անհատ մը իսկ չմնալու պայմանով բնաջնջումը հարկ է: Թերևս ձեզմե ոմանք ըսեն,— հարցնում է Նազըմը,— որ այսչափը վայրագութիւնը կըլլա, երեխաներեն, ծեր և տկարներեն ի՞նչ փնաս կրնա հասնիլ, որ ասոնց ամբողջին ալ բնաջնջման հարկ տեսնվի, ով որ հանցավոր է, ան կպատժվի... Խնդրեմ, պարոններ, այսչափ տկար և գթասեր մի ըլլաք,— շարունակում է թուրք մարդակերը,— ասիկա մահացու հիւլանդութիւն մըն է»<sup>1</sup>

Այնուհետև, խոսելով երիտթուրքական հեղափոխութեան նպատակների և խնդիրների մասին, դոկտոր Նազըմը, դիմելով գաղտնի խորհրդակցութեան մասնակիցներին, հարցնում է.

«Մենք այս հեղափոխութիւնը ի՞նչու կատարեցինք, մեր նպատակն ի՞նչ էր: Սուլթան Աբդուլ Համիդի մարդիկը իրենց աթոռներեն վար առնելու, անոնց տեղը բազմելու համար... Ես թրքութիւնը կենդանացնելու համար ձեզի ընկեր-եղբայր եղա, ես թուրքին, միայն թուրքին ապրելը, այս հողին վրա անկախ իշխան մը ըլլալը կփափագիմ. ոչ բարեւտարեւերը թող ջնջվին, որ ազգութեան և որ կրօնքին ալ պատ-

<sup>1</sup> Մեկլանգադե Ռիֆաթ, նշվ. աշխ., էջ 159—160:

կանած ըլլան. այս երկիրը ոչ բուրժ տարրերեն մաքրել  
պետք է... վայ մեզի, եթե վերջնական մաքրագործում, վերջ-  
նական բնաջնջում շկատարվի»<sup>1</sup> (ընդգծումը մերն է, — հեղ.):

Խորհրդակցության մյուս մասնակիցը՝ դոկտոր Բեհանդ-  
դին Շաքիրը ևս իր ելույթը նվիրում է երիտթուրքական հե-  
ղափոխության առաջադրած նպատակներին. «Մենք, հեղա-  
փոխականներս, թուրք ազգին հաշվույն Օսմանյան պետու-  
թյունը ազգային իղեալների վրա հիմնելով, ներկա իշխա-  
նությունը մեջտեղ բերինք: Մեր ազգային կալվածին մեջ  
միայն թուրք հառաջադիմությունը և բարգավաճումը կրնանք  
արտոնել. հիենե մնացած ազգերը՝ անհարազատ և վնասա-  
կար խոտերն արմատախիլ բնելով, մե՛ր հողը մաքրելու ըս-  
տիպված ենք: Մեր հեղափոխության նպատակը և ծրագիրը  
այս է...»<sup>2</sup> (ընդգծումը մերն է, — հեղ.):

Հիշյալ գաղտնի նիստի մի այլ մասնակիցը՝ Հասան  
Ֆեհմին, իր ելույթում «պարզաբանում» է հայերին բնաջնջ-  
ելու եղանակը. «...Մեկ անհատ մը իսկ շմնալու պայմանով  
բնաջնջումը օրինական է... ասածվածին համաձայն, ծեր-  
երեխա, կին, անկարող նկատի շառնվիր և բոլորը կբնաջնջու-  
վին: Ես բնաջնջումի դուրին ձև մը կխորհեմ. հիմա պատե-  
րազմի մեջ ենք, հայերու զենք վերցնելու կարող երիտա-  
սարդները պատերազմի առաջին գիծը կդրվենք, հոն՝ դիմա-  
ցեն ոռահրուն, իսկ ետևեն՝ մեր կողմեն մասնավոր կերպով  
դրկված ուժերուն կրակի մեջ կառնենք և կբնաջնջենք. իրենց  
տունը մնացող տկար ու ծերերը, կին ու երեխաներն ալ  
կհրամայենք և մեր հավատացյալները կմաքրեն, ինքներին  
կկողոպտեն... այս ձևը հարմար կտեսնվի»<sup>3</sup> (ընդգծումը  
մերն է, — հեղ.):

Ամբողջ մի ժողովուրդ ոչնչացնելու այս հրեշավոր ծը-  
րագրին հավանություն տալով, էնվերն ավելացնում է, որ  
«բնաջնջման եղանակը որոշելը գործադիր մարմնին պար-  
տականությունն է»<sup>4</sup>:

<sup>1</sup> Մեվլանզադե Ռիֆատ, նշվ. աշխ., էջ 161:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 162:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 164—165:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 165:

Մյուս արյունարբուն՝ Զավիդը, իր ելույթում «հիմնավորում» է այն տեսակետը, որ հայերին իսպառ բնաջնջելու անհրաժեշտությունը բխում է վառավարության ազգային քաղաքականությունից. «հայերու մեկ անհատն իսկ շմնալու պայմանով բնաջնջումը մեր ազգային քաղաքականության տեսակետին որչափ որ ստիպողական պետք մըն է, նույնչափ ալ թուրքին տնտեսական իշխանությունը հիմնելու համար կարևոր է...»<sup>1</sup>

Մեվլանզադեն այնուհետև հիշում է, որ այդ գաղտնի նիստի վերջում «Թալեաթի հրամանին վրա քվեները հավաքվեցան և դասավորվեցան: Արդյունքը՝ մեկ անհատն իսկ շմնալու պայմանով հայերուն բնաջնջելու մասին միաձայնություն գոյացած ըլլալը հասկցվեցավ»<sup>2</sup>:

«Այս որոշման գործադրությունը,— գրում է վերջում Մեվլանզադեն,— Իթթիհաթ վե Թերաքքը կուսակցությունը հանձնարարել էր ոճրագործներից ու մարդասպաններից բաղկացած մասնավոր մի կազմակերպության, իսկ նրա ղեկավարությունը՝ «Ծոյակ գործադիր հանձնախումբ» անվան տակ՝ դոկտոր Նազրմին, դոկտոր Բեհաեդդին Շաքիրին և կրթական նախարար Շուքրիին»<sup>3</sup>:

«Ծոյակ գործադիր հանձնախումբը» իր առաջին նիստում հանգամանորեն քննարկում է արևմտահայերի լրիվ ոչնչացման միջոցառումների և դրանց կիրառման հարցը:

Այդ նիստում առաջինը ելույթ ունեցած Բեհաեդդին Շաքիրը շեշտում է, որ կոմիտեն «խիստ կարևոր և ծանր պարտականություն է ստանձնել, և եթե այդ պարտականությունը պետք եղածին պես չվերջացնենք, և առաջիկներուն նման կիսկատառ ձգենք, հայերու վրիժառությունն չպիտի կրնանք փրկվիլ...»: Ընդգծելով խիստ նպաստավոր իրադրությունը, որպիսին ստեղծվել է պատերազմի հետևանքով, նա «զգուշացնում է» իր ընկերներին, որ «այդ բացառիկ կացությունը նրբութենեն առավելագույն չափով պետք է օգտվել,

<sup>1</sup> Մեվլանզադե Ռեֆաթ, նշվ. աշխ., էջ 166:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 148:

այդ առիթը ամեն ժամանակ չի ներկայանար...»<sup>1</sup> (ընդգծում-  
ները մերն են, — հեղ.)

Ընդունելով, որ «հայերին բնաջնջելու գործը՝ անգնն, ձեռքերը կապված հայերը, երեխաները, ծերերն ու անկար-  
ները մինչև վերջին անհատը սպանել տալը վայրագ ոճրա-  
գործութիւնն է», որի կատարումը բանակին, ոստիկան-զին-  
վորներին, ինչպես նաև ուղղակի ժողովրդին չի կարելի թող-  
նել, որովհետև դրանով «ժողովուրդը կշփանա և առաջիկա-  
յում մեզի դեմ կշարժի և նույնիսկ կրնա գրուխ ցցել», հիշյալ  
եռյակը հանգում է այն եզրակացութեան, որ այդ ահապտը  
սպանդի անմիջական կատարողները պետք է լինեն մարդա-  
սպանութեան և ոճրագործութեան համար բանտերում գտնվող  
հանցագործները, որոնց ազատ արձակելով, իրենք մեկ ամ-  
սրվա ընթացքում 10—12 հազար ընտրյալ ուժի տեր կդառ-  
նան և դրանք բաժանելով՝ «նվազագույնը 10, իսկ առավե-  
լագույնը՝ 50 հոգուց բաղկացած ջոկատներով՝ չեթենների, նը-  
բանց վրա վստահելի խմբապետներ կնշանակեն և իրենց  
հրամանին կենթարկեն»<sup>2</sup>:

Այս ձևը հարմար գտնելով, «Եռյակ գործադիր հանձնա-  
խումբը» հավանութիւնն է տալիս դռևտոր Բեհանդդին Շաքիրի  
առաջարկած «գործադրութեան ծրագրին»: Այդ գորհուրելի  
ծրագրի մասին ամբողջական պատկերացում ստանալու հա-  
մար անհրաժեշտ ենք համարում այն բերել լրիվ.

«Ո՛ր քաղաքի և դյուղաքաղաքներու մեջ որ հայ կա և  
աստուցմե ո՛ր մեկուն առաջին անգամ բնաջնջվիլը հարկ է,  
այդ քաղաքները՝ ներքին նախարարին հետ կորոշենք և  
յուրաքանչյուր շրջանակին պետք եղածին շափ այս ուժերեն  
կղրկենք. աստուք մեր նշանակելիք ճամփաներուն հարմար  
վայրերուն վրա հասնելիք հայ կարավաններուն կսպասեն,  
ներքին նախարար Թալեաթն ալ այդ քաղաքներու վարչա-  
կան պաշտոնյաներուն կհրահանգե, որ հոն գտնվող բոլոր  
հայերը պատերազմական շրջանակեն դուրս գտնվելու հարկը

<sup>1</sup> Մեվլանդադե Ռիֆաթ, նշվ. աշխ., էջ 186—187:

<sup>2</sup> Նույն աեղում, էջ 191—193:

պատճառաբանելով, խումբ-խումբ և յուրաքանչյուր օրը երկու անգամ մը, ոստիկան զինվորներու հսկողութեան տակ այսինչ ճամփեն այնինչ տեղ ղրկվին: Ոստիկան պաշտոնյաներ այս հրամանի՞ւ վրա բոլոր հայերը հավաքելով, հրակողութեան տակ խումբ-խումբ որոշված ճամփաներեն զրկել կսկսին, ճամփան ասոնց գալուն սպասող հատուկ կազմակերպութեան՝ շեփեներուն կեցած վայրը հասնելուն, խումբերը մեր շեփեներուն կհանձնեն և կվերադառնան, շեփեներն ալ այս հայերը մինչև վերջին անհատը անմիջապէս կսպանեն և, որպէսզի հանրային առողջութեանը չվնասվի, դիակները նախապէս պատրաստված փոսերուն մեջ կձգեն ու կթաղեն: Եվ այս կերպով հաջորդաբար բնաջնջման գործողութիւնը կըրացնեն: Այս հայերուն քով գտնվող գույք, դրամ և գոհարեղիններն ալ իբրև ավար՝ շեփեներուն կբաժնըվի...»<sup>1</sup> (ընդգծումները մերն են,— հեղ.):

Ամփոփելով նիստը, դոկտոր Նազրմն ասում է. «Սկըզբունքով համաձայնեցանք, խորհրդակցելիք բան մը չմնաց, հիմա Թալեաթին ալ տեսնվելով գործադրութեան սկսելու ենք»<sup>2</sup>:

Երեքի հանձնախմբի մշակած այս միջոցառումները շահարդեցին հավանութեան ստանալու Թալեաթի կողմից: Ինչպէս գրում է Մեվլանզադեն, «Ներքին նախարար Թալեաթ հայերու տարագրութեան համար նահանգներուն հարկ եղած վերջնական հրահանգը՝ տված և Իթթիհաթ վե Թերաքըրի կենտրոնն ալ իր բոլոր մասնաճյուղերը և քննիչները խնդրեն տեղյակ պահած էր»<sup>3</sup>:

Մեվլանզադեի խոստովանութիւնից պարզվում է նաև, թե տեղական իշխանութիւնները փնչալիսի ճշտութեամբ և հետևողականութեամբ էին վկայեցում կիրառում երիտթուրքական կառավարութեան կողմից հաստատված այս բարբարոսական ծրագիրը, նրանց տրված գաղտնի հրահանգները:

<sup>1</sup> Մեվլանզադե Ռիֆաթ, Նշվ. Գաշի., էջ 194—195:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 196:

<sup>3</sup> Հրահանգի լրիվ տեքստը՝ տես Նույն տեղում, էջ 197—199:

<sup>4</sup> Մեվլանզադե Ռիֆաթ, Նշվ. աշխ., էջ 197:

«Ամեն կողմ հայերը,— նշում է Մեվլանզադեն,— առանց խնայելու մեծ ու փոքր, ծեր և անկարողը կհավաքվեին, ասոնցմե իսլամությունը ընդունողները առժամյա կերպով թույլ տալով, մնացածները ոստիկան զինվորներու հրահրության տակ որոշված ճամփաներն խումբ-խումբ կտարագրվեին:

«Եռյակ գործադիր հանձնախմբին» անթակա հատուկ կազմակերպության շեթենները դիտկներու սպասող ազոավներու նման, որոշված վայրերսն վրա այս հայերու խումբերու հասնելուն կսպասեին:

Ճամփու նեղություններն հոգնած, հոգեպես բարոյալրված, ծնած ու սնած տուն ու տեղեն բաժնվելու ցավեն ընկճված այս խղճալի խումբերը շեթեններու ստնված վայրը հասնելուն, ոստիկան զինվորները իրենց ստացած հրամանին համաձայն անոնց հանձնելով՝ կվերադառնային... Այս մարդկային խումբերը հատուկ կազմակերպության անունով հրեշներու ձեռքը իյնալով, երևակայութենե և նկարագրություններե դուրս խժոժություններու և տանջանքներու կենթարկվեին<sup>1</sup>:

Իսկ թուրք մյուս գործչի՝ Նայիմ բեյի, բերված փաստաթղթերից պարզորոշ կերպով երևում է, որ երիտթուրքական կառավարությունը հայերին «հատուկ կազմակերպության» ջոկատների խոշտանգմանը հանձնելու հետ մեկտեղ, նրանց դեպի Տեր-Ջորի անապատները աքսորելը ևս դիտում էր որպես ոչնչացման հիմնական եղանակներից մեկը, որը կառավարությունն անցկացնում էր ամենայն անողորմությամբ՝ պահանջելով, ինչպես նշում է Նայիմ բեյը, յուրաքանչյուր շաբաթ տեղեկացնել իրեն կատարվածի մասին: Երբ Թալեաթին լուրեր էին հասնում առանձին հայերի նկատմամբ մեղմ վարվելու մասին, նա անմիջապես խիստ հրամաններ էր ուղարկում տեղական իշխանություններին՝ պահանջելով չզթալ և ռմինչև վերջը անողորմ լինել, նույնիսկ օրորոցի երեսնաներին շխնայել: Այսպես, Հալեբի կառավարչին ուղար-

<sup>1</sup> Մեվլանզադե Ռիֆաթ, նշվ. աշխ., էջ 199—200:

կած իր գաղտնի հրամաններից մեկում Թալեաթը գրում էր. «Թուրքական հողի վրա ապրելու և աշխատելու հայերի բոլոր իրավունքները լրիվ վերացվել են, դրա պատասխանատվությունը կառավարությունն ամբողջովին իր վրա է վերցրել և հրաման տվել, որ նույնիսկ օրորոցի երեխաներին շխնայեն: Այս հրամանի կենսագործման արդյունքները երեվացին որոշ գավառներում: Չնայած դրան, մեզ անհայտ պատճառներով «որոշ մարրկանց» նկատմամբ առանձնահատուկ միջոցառումներ են ձեռնարկվում՝ նրանց ուղղակի արտոբավարը ուղարկելու փոխարեն թողնում են Հալեբում, հետևաբար կառավարությունը հանդիպում է նոր դժվարությունների: Նրանց պատճառաբանությունների վրա լուջադրություն մի դարձրեք, հեռացրեք նրանց՝ կանանց թե երեսաներին, ինչ էլ լինի, նույնիսկ եթե ի վիճակի չեն շարժվելու... Ուրիշ տեղերում կիրառված սնուղղակի միջոցների (խստությունը, շտապողականությունը, ճանապարհի դժվարությունները, թշվառությունը) փոխարեն կարելի է ապահով կերպով օգտագործել ուղղակի միջոցներ...

Այն պաշտոնյաներին, որոնք նշանակված են այս գործին, ասեք, որ նրանք կարող են իրագործել մեր իսկական նպատակը, առանց վախենալու որևէ պատասխանատվությունից...»<sup>1</sup> (ընդգծումները մերն են, — հեղ.):

1915 թ. սեպտեմբերի 16-ի Թալեաթի մի այլ գաղտնի հրահանգում, նույնպես ուղղված Հալեբի կառավարչին, ասվում էր. «Նախօրոք ձեզ հաղորդել են, որ Զեմիեթի (Իթթիհաթական կոմիտեի, — հեղ.) հրամանով կառավարությունը որոշել է լրիվ ոչնչացնել Թուրքիայում ապրող բոլոր հայերին: Նրանք, ովքեր այս հրամանի և որոշման դեմ են, չեն կարող մնալ վանքային պաշտոններում: Պետք է վերջ տալ նրանց (հայերի, — հեղ.) գոյությանը՝ ինչքան էլ դաժան լինեն ձեռնարկված միջոցառումները, նկատի չառնելով ո՛չ տարիքը, ո՛չ սեռը, ո՛չ էլ խիղճը»<sup>2</sup> (ընդգծումները մերն են, — հեղ.):

<sup>1</sup> The Memoirs of Naim bey, p. 16.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 64:

Թալեաթի այս հրամաններից հետո կենդանի մնացած հայերին դեպի անապատն աքսորելու ճանապարհով «մահացնելու» գործն ավելի արագ ընթացավ: «Մահացածների թիվը ծածկագիր հեռագրով երկու շաբաթը մեկ անգամ ուղարկվում էր Կոստանդնուպոլիս»<sup>1</sup>, — գրում է Նայիմ բեյը: Նրա տվյալների համաձայն, «Տեր-Ջորի ջարդի ժամանակ զոհվեցին բոլոր այն հայերը, որոնք աքսորվել էին անապատ՝ ավելի քան 200 հազար մարդ»<sup>2</sup>:

Երիտթուրքական կառավարությունը հայերի բնաջնջման անմարդկային ծրագիրն այնպիսի հետևողականությամբ էր իրականացնում, որ նույնիսկ հրահանգներ էր արձակում՝ ջարդերից պատահաբար խուսափած և կենդանի մնացած սակավաթիվ որբ երեխաներին անմիջապես աքսորավայրը՝ դեպի անապատները քշելու մասին: Այդ առթիվ Նայիմ բեյը Թալեաթի ստորագրությամբ մի շարք ծածկահեռագրեր է բերում, որոնք մինչև վերջ մերկացնում են երիտթուրքերի գազանային դեմքը: Բավարարվե՞նք միայն երկու փաստաթղթով: 1915 թվականի նոյեմբերի 5-ին Հալեբի նահանգապետին տղարկած գաղտնի հեռագրում Թալեաթը գրում էր. «Մեզ տեղեկացրել են, որ Սըվազի, Մամուրեթ-ալ-Ազիզի, Դիարբեքի և էրզրումի հայերի փոքր երեխաները որդեգրվում են մահմեդական մի քանի ընտանիքներում կամ ընդունվում են որպես ծառաներ... Մենք ձեզ հայտնում ենք, որ պետք է հավաքեք այդպիսի երեխաներին ձեր նահանգում և ուղարկեք աքսորավայր...»<sup>3</sup>

Թալեաթի մյուս հեռագրում՝ 1916 թվականի հունվարի 15-ին, ասվում էր. «Մենք լսել ենք, որ նոր բացված որոշ որբանոցներ ընդունում են նաև հայ երեխաներին: Դա մեր նպատակը չիմանալուց է արվում... Կառավարությունը գտնում է, որ այսպիսի երեխաներին կերակրելը կամ նրանց կյանքը երկարացնելու որևէ փորձը փր նպատակին հակառակ մի գործողություն է, որովհետև կառավարությունը

<sup>1</sup> The Memoirs of Naim bey, p. 39.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 46—47:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 59:

նը այդ երեխաների կյանքը վնասակար է համարում: Ես կարգադրում եմ այդպիսի երեխաներին որբանոցներ շնորհունել և փորձ շանել նրանց համար որբանոցներ հիմնելու»<sup>1</sup>:

Ժամանակակից թուրք պատմաբաններին անշուշտ ծանոթ են Մեվլանզադե Ռիֆաթի և Նայիմ բեյի կողմից բերված վերոհիշյալ արժանահավատ փաստաթղթերը: Սակայն պատմության թուրք կեղծարարներին խիստ աննպաստ է այդ փաստաթղթերի մասին հիշատակելը և, ընդհակառակը, միանգամայն ձեռնառն՝ վկայակոչել ջարդերի գլխավոր կազմակերպիչ Թալեաթին, որի տված «թացատրություններն» էլ հենց ընկած են թուրք պատմաբանների տեսակետների հիմքում:

Այսպես, Հիքմեթ Բայուրը 1915 թվականի հայկական մեծ ջարդի պատմությունը «նպատակահարմար է գտնում» ամփոփել Թալեաթի այն ճառով, որ վերջինս արտասանել էր իթթիհաթական պարտիայի խայտառակ կրախի պահին, նրա վերջին նիստում՝ 1918 թվականի նոյեմբերի 1-ին: Հիշյալ նիստում Թալեաթը, կանգ առնելով հայերի նկատմամբ երիտթուրքական պարտիայի վարած քաղաքականության վրա, ամեն կերպ փորձում է արդարացնել իրենց դաժանությունները, դրանք կապելով բացառապես պատերազմական վիճակից բխող «հարկադրված անհրաժեշտության» հետ: Խոստովանելով հանդերձ, որ «համենայն դեպս այդպիսի մի մեծ աքսորի դեպք տեղի է ունեցել», Թալեաթը, «մոռանալով» իր բազմաթիվ հրահանգները և իթթիհաթական կառավարության գաղտնի որոշումները, լկտիարբար պնդում է, որ հայերի աքսորի և ջարդերի գործում «Բարձր Դուռը նախապես ընդունված որոշման հիման վրա չի գործել» և որ ջարդերի «պատասխանատվությունն ամենից առաջ ընկնում է անհանդուրժելի շարժումներ առաջացնող ցեղերի վրա»<sup>2</sup> (շնորհով մերն է, — հեղ.): Հիշյալ ճառում Թալեաթը միևնույն ժամանակ փորձում էր հայերի աքսորի ժամանակ թույլ

<sup>1</sup> The Memoirs of Naim bey, p. 59.

<sup>2</sup> Yusuf Hikmet Bayur, s. 43—44.

տրված «ծայրահեղութիւնները» բարդել առանձին պաշտոն-  
յաների վրա, որոնք շլակից ավելի դաժանութիւն և բռնու-  
թիւն են հանդես բերել<sup>1</sup>:

Ահա այս զարհուրելի կեղծիքն է վազմում այն հիմքը,  
որի վրա խարսխվում են թուրք պատմաբանների մինչև  
վերջը շինծու, հակագիտական տեսակետներն ու եզրակացու-  
թիւնները հայկական կոտորածների վերաբերյալ:

*գրեւորեալ էր այսպէս*

\*\*\*

ժամանակակից թուրք պատմաբանների և պետական ու  
ոսպմական գործիչների հրատարակած աշխատութիւններում,  
քաղաքական հուշերում, նորագույն շրջանի պատմութեան  
դասագրքերում, առանձնապես մեծ տեղ է հատկացված  
1920—21 թվականների իրադարձութիւններին՝ Անդրկովկա-  
սի նկատմամբ քեմալականների վարած արտաքին քաղաքա-  
կանութեան, 1920 թվականի հուլիս-օգոստոսին Մոսկվայում  
տեղի ունեցած բանակցութիւնների, 1920 թվականի հայ-  
թուրքական պատերազմի և Ալեքսանդրապոլի դաշնագրի,  
1921 թվականին կնքված Մոսկվայի ու Կարսի պայմանա-  
գրերի և այլ հարցերին, որոնք լուսաբանվում են վերին աս-  
տիճանի միտումնավոր, աղավաղված ձևով: Հակասովետա-  
կան տգով գրված իրենց գործերում թուրք հեղինակները  
շանք չեն խնայում արդարացնելու համար քեմալական թուր-  
քիայի դեպի Անդրկովկաս կատարած արշավանքը, այն ներ-  
կայացնելով նույնիսկ որպես «ներդրում» Անդրկովկասում  
սովետական կարգեր հաստատելու գործում, որպես թուրքա-  
կան ազգային-ազատագրական շարժման բաղկացուցիչ մա-  
սը և այլն:

Թուրք պատմաբանները պատմութեան նենգափոխումը  
հասցրել են այն աստիճանի, որ ոչ հեռու անցյալի քաղա-  
քական ու ոսպմական մոլի հետադիմական թուրք գործիչ-  
ներին նվիրում են հատուկ «հետազոտութիւններ», ճգնելով

<sup>1</sup> Yusuf Hikmet Bayur, s. 44.

ներանց ներկայացնել որպես պատմութեան մեջ մեծ դեր խաղացած ականաւոր մարդկանց:

Եթե վերջին երկու տասնամյակում Թուրքիայում առանձին գրքերով հրատարակվեցին հայտնի շովինիստ-ջարդարարներ, հայ ժողովրդի դահիճներ Թալեաթ փաշայի, Քյազըմ Կարաբեքիրի և մյուսների հուշերը՝ գովերգող առաջաբաններով, ապա վերջերս Թուրք պատմաբանները այդ գործիչներին նվիրել են առանձին աշխատութիւններ՝ «Մտտիկ անցյալի պատմութեան անհայտ էջերը» սերիայով:

Հիշյալ հրատարակութեաններում ևս հատկանշական է այն, որ հեղինակները, Թուրք գործիչների մասին խոսելու առիթով, անդրադառնում են վերը թվարկված հարցերին:

Այսպես, ժամանակակից հայտնի Թուրք պատմաբաններից Զեմալ Քութայը արդեն լույս է ընծայել առանձին գրքերույկներ Թալեաթի<sup>1</sup>, Էնվեր փաշայի<sup>2</sup>, Քյազըմ Կարաբեքիրի պետական և ռազմական գործունեութեան մասին, որոնցում շոշափվում են վերահիշյալ հարցերը:

1956 թ. Ստամբուլում լույս տեսավ Զեմալ Քութայի «Ինչպե՞ս Կարաբեքիրը ոչնչացրեց Հայաստանը»<sup>3</sup> թունոտ վերնագիրը կրող գրքույկը, որում քննարկվող հարցերի շարադրանքի ոգին ու հետապնդվող նպատակները բնորոշ են նաև մյուս Թուրք հեղինակների գործերին: Այս «հետազոտութիւնը» հետաքրքիր է նրանով, որ հեղինակը հրապարակում է մի շարք մինչև այժմ մեզ անհայտ փաստեր, որոնք բացահայտում են նորանոր կողմերից Թալեաթի, Կարաբեքիրի և մյուսների հանցավոր գործողութիւնները հայ ժողովրդի նկատմամբ:

Հայտնի է, որ երիտասարդ Թուրքերի զավթողական պլաններն Անդրկովկասում, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ձախողվեցին ռուսական բանակի ջախջախիչ հարվածների ներքո: Սակայն դրանցից չհրաժար-

<sup>1</sup> Cemal Kutay, Talât paşayı nasıl vurdular? İstanbul, 1956.

<sup>2</sup> Cemal Kutay, Atatürk—Enver paşa hâdiseleri. İstanbul, 1956.

<sup>3</sup> Cemal Kutay, Karabekir Ermenistam nasıl yok etti? İstanbul, 1956.

վեցին Օսմանյան կայսրության փլատակների վրա բարձրացած «նոր Թուրքիայի» ղեկավար շրջանները՝ Թուրք ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի տարիներին<sup>1</sup>։

Գեռու 1920 թ. սկզբներին, Մուստաֆա Քեմալի կողմից գլխավորվող ներկայացուցչական կոմիտեի արձանագրություններից մեկում ընդունված էր հետևյալ որոշումը. «Արևելյան ճակատում անցկացնել պաշտոնական կամ ոչ պաշտոնական գորահավաք և սկսել զորքերի կենտրոնացումը՝ թիկունքից Կովկասյան արգելքը ոչնչացնելու համար»<sup>2</sup>։ Այդ մասին Մուստաֆա Քեմալն ուղղակի գրում էր Քյազըմ Կարբեքիրին 1920 թ. փետրվարի 6-ին ուղարկած իր նամա-

<sup>1</sup> Ժամանակակից Թուրքիայում նույնիսկ հատուկ զբբեր են դրվում՝ նվիրված երիտթուրքական և քեմալական աչքեսիվ արտաքին քաղաքականության մյջև գոյություն ունեցող «ժառանգական» կապերին՝ քեմալականներին ներկայացնելով որպես երիտթուրքերի չիրագործված ծրագրի անմիջական շարունակողներին։ Այդ տեսակետից խիստ ընտրոշ է վերը հիշված հայտնի Թուրք պատմաբան Զեմալ Քութայի մի այլ շուսուճիսսիրությունը, որի վերնագիրը՝ «Աթաթյուրքի և Էնվեր փաշայի հետ կապված իրադարձությունները» (Atatürk—Enver paşa hâdiseleri. İstanbul, 1956), ինքնին պարզորոշ է դարձնում հեղինակի առջադրած խնդիրը։ Հակասովետական թույնով լի այս զբբի հեղինակը պանթուրքիզմի և պանթուրանիզմի սանձարձակ գովքն անելու հետ մեկտեղ, հրապարակում է Էնվերի և Քեմալի միջև տեղի ունեցած նամակագրությունը, ցույց տալով նրանց գաղափարների և հետապնդած վերջնական նպատակների հարադատությունը։ (Տես, Cemal Kutay, նշված աշխատությունը, էջ 27—28, 30—31, 34—36 և այլն)։ Նշելով, որ Էնվեր փաշան 1920 թվականին Շահատոլիայում թուրքական ազգային-ազատագրական պայքարը մղող բանակի ստեղծողն է, հեղինակն իր զբբում հետևողականորեն այն միտքն է անցկացնում, որ Էնվերի հակասովետական ավանտյուրան Միջին Ասիայում, (որը նա համարում է շաղգիբի անկախության համար մղվող պայքար) մի այլ ձևով շարունակում էր Միատոլիայի ազգային-ազատագրական պայքարը։ (Նույն տեղում, էջ 51—52։ Էնվերի նամակի մասին տես նաև Tevfik Bıyıklıođlu, Atatürk Anadoluđa (1919—1921). Türk Tarih Kurumu Basımevi. Ankara, 1959, s. 20.)

<sup>2</sup> Мустафа Кемаль, Путь новой Турции, т. III, М., 1934, стр. 313.

կում, որը մեջ է բերում սովետա-թուրքական հարաբերությունների թուրքիայում ճանաչված մասնագետ Թեմֆիկ Բըյիքլըօղլուն իր «Աթաթյուրքն Անատոլիայում» վերնագրով գրքում<sup>1</sup>:

Ուստի պատահական չէր, որ հետագայում, երբ հունական բանակը ընդհուպ մոտեցել էր Անկարային, քեմալականները, իրենց նվաճողական ձգտումներով տարված, հիմնական ուժերը կենտրոնացրել էին Արևելյան ճակատում՝ Անդրկովկասի սահմանների մոտ, սպասելով, ինչպես խոստովանում է Կարաբեքիրը, «ամենահարմար ժամանակի»<sup>2</sup> Հայաստանի վրա հարձակման անցնելու համար: Բավական է նշել, որ Ինենյուսի առաջին ճակատամարտի<sup>3</sup> ժամանակ 60 հազարանոց հունական բանակի դեմ Անկարայի կառավարությունը դուրս էր բերել ընդամենը 15 հազար զորք, այն դեպքում, երբ Արևելյան ճակատում 30 հազար հայկական ուժերի դեմ քեմալականները կենտրոնացրել էին 50 հազարանոց բանակ<sup>4</sup>:

Նույնիսկ Օսմանյան կայսրությանը խայտառակ անարտության հասցրած տիթրահոչակ էնվերն տե Թարեաթը, որոնք

<sup>1</sup> Tevfik Bıyıklıoğlu, Atatürk Anadolu'da (1919—1921). Ankara, 1959, s. 19.

<sup>2</sup> Cemal Kutay, Karabekir Ermenistanı nasıl yok etti, s. 36.

<sup>3</sup> 1921 թվականի հունվարի 10-ին Ինենյուս գյուղի մոտ (Անկարայից արևմուտք) տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ հունական 60 հազարանոց բանակի դեմ կռվում էին ընդամենը 15 հազար թուրքեր՝ չնայած այն բանին, որ քեմալականներն արդեն ավարտել էին Հայաստանի դեմ ձեռնարկած իրենց արշավանքը և հնարավորություն ունեին Արևելյան ճակատի զորքերի մի զգալի մասը փոխադրել Թուրքիայի հետագա ճակատագրի համար վճռական նշանակություն ունեցող Եսֆեհեհիբ-Անկարա դժի վրա: Սակայն Անդրկովկասի նկատմամբ քեմալական կառավարության ագրեսիվ ծրագրերը, նրա հակասովետական մտադրությունները, Ալեքսանդրապոլի կողոպտիչ պայմանագրերը կյանքում կիրառելու ձգտումը, այս բոլորը քեմալականներին զրգում էր Արևելյան բանակը պահել Անդրկովկասի սահմանների մոտ:

<sup>4</sup> А. Б. Кадешев, Интервенция и гражданская война в Закавказье. Воениздат, М., 1961, стр. 324.

ծպտյալ ապաստան էին գտել Բեռլինում, քաջ տեղյակ էին այդ պլաններին և անգամ խորհուրդներ էին տալիս «նոր Թուրքիայի» ղեկավարներին՝ նրանց դիտելով որպես իրենց ձախողված զավթողական քաղաքականության շարունակողներին:

«Քանկագին իմ Կարաբեքիր փաշա,— Բեռլինից գրում էր իր նամակում Քալեաթը,— եթե ուզեմ Կապուստու-թյուններդ լրիվ են, անցիր հարձակման: Կասկած չկա, որ Արևելքում ձեռք բերվելիք հաղթանակը Արևմտյան ճակատի և ամբողջ աշխարհի վրա խորին մի հեռք կթողնի»<sup>1</sup> (ընդ-գծումը մերն է,— հեղ.):

Ավերորդ չէ նշել, որ Քալեաթը, նախքան Կարաբեքիրին գրելը, երկար զրույց էր ունեցել այդ ժամանակ նույնպես Բեռլինում գտնվող էնվերի հետ՝ «Հայաստանի դեմ նախա-պատրաստվող հարձակման» շուրջ և լրիվ հավանություն ստացել վերջինիս կողմից:<sup>2</sup>

Նույն հեղինակի պարծենկոտ հայտարարությունից պարզվում է, որ «դեռևս գարնան ամիսներին Կարաբեքիրը լրիվ ավարտել էր ուժերի միավորումն ու զինումը հայերի դեմ հարձակվելու համար»:<sup>3</sup> Այդ ժամանակ Կարսի և Բայազետի սահմանների մոտ կենտրոնացած քեմալական զորքերի իսկական նպատակների մասին է վկայում նաև ապրիլի կեսերին Անկարայի ղեկավար շրջաններին ուղարկած Կարաբեքիրի հետևյալ հեռագիրը. «Մոտ օրերս պիտի աչե-տեմ, որ Հայաստանը սրբված է աշխարհի քարտեզից»:

Քեմալականների ագրեսիվ մտադրությունների մասին գրում էին նաև Թուրքիայում հրատարակվող օտար թերթերը: Այսպես, Մտամբուլում ֆրանսերեն լիզվով լույս տեսնող «Բոսֆոր» թերթը 1920 թ. մայիսի 5-ի համարում զետեղել էր էրզրումի իր թղթակցի հաղորդումը «քեմալական շրջաններում առկա խիստ բացորոշ հակահայկական տրամադրությունների մասին»:

<sup>1</sup> Cemal Kutay, s. 27.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 25—26:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 36:

Պետք է ասել, որ ազգայնականների ազդեցիկ այս նպատակները իրենց առաջին արտահայտութիւնը գտան դեռևս էրզրումի կոնգրեսում (1919 թ. հուլիսի 23—օգոստոսի 6)<sup>1</sup>, որտեղ քեմալականները, Հայաստանի նկատմամբ իրենց զավթողական պլանները քողարկելու համար, օգտագործում էին հայկական տերիտորիաների նկատմամբ հայ ժողովրդի աղաքացի պահանջները, դրանք ներկայացնելով որպես «նվաճողական ձգտումներ»: Այսպես, Քեմալը Ալի Ֆուադ փաշային ուղարկած իր ծածկագիր հեռագրում 1919 թվականի օգոստոսի 3-ին (էրզրումի կոնգրեսի օրերին) հայտնում էր, որ «էրզրումի կոնգրեսի ամբողջ ոգին և նպատակը հանդիսանում են Իզմիրի դեպքերը և հայկական նվաճողական սպառնալիքները»<sup>2</sup>, որոնք իբր իրական պատճառներն են հղել իրենց ազգային-ազատագրողական շարժման ծավալման համար (ընդգծումը մերն է, — հեղ.):

էրզրումի կոնգրեսի ժամանակ շեշտը դրվում էր ոչ թե իմպերիալիստական տերութիւնների կողմից Թուրքիային սպառնացող իրական վտանգի, այլ «հայերի շար մտադրութիւնների վրա»:

Իսկ Սվասի կոնգրեսում (1919 թվականի սեպտեմբերի 4—11) հատուկ որոշում ընդունվեց, որտեղ ասված էր, որ ազգայնականները վճռական պայքար են մղելու բոլոր այն շարժումների դեմ, որոնց նպատակը կլինի անկախ Հայաստանի ստեղծումը<sup>3</sup>:

1919 թվականի նոյեմբերի 17-ին Ալի Ֆուադին ուղարկած իր հեռագրում Մուստաֆա Քեմալը, անդրադառնալով վերոհիշյալ կոնգրեսներին, շեշտել էր, որ «ինչպես հետևում

<sup>1</sup> Կոնգրեսի որոշումների մասին տես General Ali Fuat Cebesoy, Millî mücadele hatıraları, s. 121—122.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 139—140: Տես նաև Prof. M. Tayyib Gökbilgin, Millî Mücadele başlarken. Mondros Mütarekesinden Sivas Kongresine. Birinci kitap. Türk Tarih Kurumu Basımevi. Ankara, 1959, s. 168.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 167—168:

է էրզրումի և Սվաաի կոնգրեսների տրոշումներից, ազգը ոչ մի թիզ հող չի գիշի Հայաստանին»<sup>1</sup>:

Նման որոշումների քողի տակ քեմալականները հետևողականորեն նախապատրաստում էին իրենց ազգեսիվ ծրրագրերը Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի նրկատմամբ: Այդ հարցը բազմիցս քննարկման առարկա է դարձել Անկարայում քումարված Ազգային մեծ ժողովի նիստերում: Այդ մասին են վկայում արխիվային փաստաթղթերը, որոնցից մեկում ասված է, որ Անկարայում հաճախ տեղի ունեցող Ազգային մեծ ժողովի նիստերում՝ մասնակցութայմբ Կոստանդնուպոլսի կառավարութայն ներկայացուցիչների, լսվում էր ամբողջ Կովկասի գրավման հարցը և այդ ուղղութայմբ կոնկրետ միջոցառումների էին դիմում, լրտեսներ ուղարկելով Անդրկովկաս և Հյուսիսային Կովկաս:<sup>2</sup>

Կովկասում իր զավթողական պլաններն իրականացնելու նպատակով Անկարայի կառավարութայնը որոշել էր առաջին հերթին գրավել Արևելյան Հայաստանը: Այդ նպատակի հաջող իրագործման համար Արևելյան ճակատի հրամանատար նշանակվեց Քյազըմ Կարաբեքիր փաշան, որը դեռևս համաշխարհային պատերազմի տարիներին աչքի էր ընկել իր հայաչինջ գործողութայններով: Հիքմեթ Բայուրը «Թուրքական պետութայն արտաքին քաղաքականութայնը» վերնագրով իր գրքում խոստովանում է, որ Անկարայի կառավարութայնը վաղուց էր պատրաստվում Հայաստանի վրա հարձակվելու, սակայն Անդրկովկասից անգլիական զորքերի էվակուացիայի ուշացումը թուրքերին ստիպեց որոշ ժամանակ սպասել: «Չնայած դրան, — գրում է Բայուրը, — Երկրի արվելյան մասում մենք ավարտեցինք զորահավաքը և նախապատրաստեցինք Արևելյան ճակատի ստեղծումը»<sup>3</sup>:

ինքը՝ Մուստաֆա Քեմալը, բազմիցս նշել է Հայաստա-

<sup>1</sup> Мустафа Кемаль, Путь новой Турции, т. II. М., 1932, стр. 120.

<sup>2</sup> ЦГАКА, ф. 109, оп. 3, л. 298, л. 28.

<sup>3</sup> Ord. Prof. Yusuf Hikmet Bayur, Türkiye devletinin dış siyaseti. İstanbul, 1938, s. 65.

չը հեռուստոս րազգայնաց

Հայաստանի հարցը Կոստանդնուպոլսի կառավարության ներկայացուցիչների, լսվում էր ամբողջ Կովկասի գրավման հարցը և այդ ուղղությամբ կոնկրետ միջոցառումների էին դիմում, լրտեսներ ուղարկելով Անդրկովկաս և Հյուսիսային Կովկաս:

նի դեմ հարձակման նախապատրաստման մասին: Այսպես, 1920 թվականի օգոստոսի 14-ի իր ճառում նա ընդգծել է, որ «Ազգային մեծ ժողովը երեք վիլայեթների (խոսքը Կարսի, Բաթումի և Արդահանի մասին է,—հեղ.) հարցի կապակցությամբ լիազորել է Մինիստրների խորհրդին օկուպացնել դրանք՝ հենց որ հնարավորություն ստեղծվի: Այսպիսով, հունիսի 6-ին, մեր կողմից Արևելյան բանակին հրաման տրվեց պատրաստվել հարձակման»<sup>1</sup>:

Այդ հարցին նա հանգամանորեն անդրադարձել է 1927 թ. Թուրքիայի Ազգային մեծ ժողովում արտասանած իր հայտնի ճառում, որտեղ կանգ առնելով 1920 թ. հունիսին Արևելյան ճակատում ստեղծված իրադրությունների վրա, նա ասել էր հետևյալը.

«Մենք Հայաստանի վրա արշավելու որոշում ընդունեցինք: 1920 թ. հունիսին մենք հրամայեցինք արևելյան շրջաններում նախնական զորահավաք անցկացնել: 15-րդ կորպուսի հրամանատար Քյազըմ Կարաբեքիր փաշան նշանակվեց Արևելյան ճակատի հրամանատար»<sup>2</sup>:

Այսպես, ուրեմն, դեռևս 1920 թվականի հունիսին, երբ հունական զորքերը ձեռնարկել էին մեծ առաջխաղացում Թրակիայում ու Անատոլիայում, գրավելով Ադրիանապոլիսը, էրեզլին, Բրուսան, Բալքեպիրը և մի քանի այլ քաղաքներ, Անկարայի կառավարությունն իր հիմնական ուժերը կենտրոնացրել էր ոչ թե Արևմտյան ճակատում՝ հուլյների դեմ, այլ Հայաստանի սահմանի վրա՝ հարձակման անցնելու համար:

Քեմալական ղեկավար շրջանները, անհանդուրժելի համարելով անկախ Հայաստանի գոյության փաստը, հենց սկզբից իրենց հիմնական նպատակը դիտել են Հայաստանի ոչնչացումը, որից հետո միայն, նրանց կարծիքով, հնարավոր կլինեին շարունակել պայքարը Արևմտյան ճակատում՝ հուլյների դեմ: Թե ինչպիսի նշանակություն էին նրանք տալիս Հայաստանի դեմ նախապատրաստվող հարձակմանը,

<sup>1</sup> Atatürk'ün söylev ve demeçleri, cilt I. İstanbul, 1945, s. 90.

<sup>2</sup> Мустафа Кемаль, Путь новой Турции, т. III, стр. 117.

պարզորոշ կերպով երևում է նաև թուրք հայտնի ուղղամական պատմաբան Զեվդեթ Քերիմի հաղորդած խիստ հետաքրքրական տեղեկություններից, որ նա մեջ է բերում «Դասախոսություններ անկախության համար մղած թուրքական պայքարի մասին» վերնագրով իր գրքում:

«Անատոլիայի ղեկավարները,— գրում է նա,— ելնելով քաղաքական և ուղղամական նկատառումներից, դրուժյունն Արևելքում ավելի լուրջ էին համարում: Քանի որ հույների և ֆրանսիացիների դեմ սկզբնական շրջանում պաշտպանական խնդիրներ էին դրված, ուստի այդ ճակատներում մենք ուղղամական աննշան ուժերով ձգտում էինք բոլոր միջոցներով խոչընդոտել հակառակորդի հետագա առաջխաղացմանը... Իսկ հիմնական ուշադրությունը դարձվում էր Արևելյան ճակատին, որովհետև այստեղ հաջողության հասնելու դեպքում պետք է ոչնչացվեին հայկական բանակը և հայկական պետությունը, որոնք թարախապալարի նման դեռ մնում էին մեր երկրի մարմնի վրա...»<sup>1</sup> (ընդգծումը մերն է,— հեղ.):

Այդ մասին այժմ բացեիբաց գրում են թուրք պատմաբաններն ու նախկին ուղղամական գործիչները՝ և՛ հայտնի պատմաբան, պրոֆեսոր էնվեր Զիյա Կարալը<sup>2</sup>, և՛ մոլի հետադիմական գեներալ Ալի Ֆուադ Զեբեսոյը<sup>3</sup>, և՛ Թուրքիայի ղինվորական դպրոցներից մեկում քաղաքական պատմություն ավանդող Քահսին Յունալը<sup>4</sup> և ուրիշներ:

Այսպիսով, վերը բերված բոլոր նյութերը՝ արխիվային փաստաթղթերը, թուրքական ղեկավարների, այդ թվում Մուստաֆա Քեմալի, ուղղակի խոստովանությունները, ժամանակակից թուրք հեղինակների մեջբերած բազմաթիվ փաստերը հաստատում են այն անհերքելի ճշմարտությունը, որ քեմալական կառավարությունը վաղուց նախապատրաս-

<sup>1</sup> Мустафа Кемель, Путь новой Турции, т. III, стр. 314.

<sup>2</sup> Prof. Enver Ziya Karal, Türkiye Cumhuriyeti tarihi (1918—1953), İstanbul, 1958, s. 97.

<sup>3</sup> Ali Fuat Cebesoy, Moskova hatıraları, İstanbul, 1955 s. 61. 4

<sup>4</sup> Tahsin Ünal, 1700 den 1958-e kadar türk siyaset tarih. Ankara, 1958, s. 270.

տեղ ու մանրամասն մշակել էր Հայաստանի ոչնչացման իր ծրագիրը և սեփական հախաձեռնությամբ անցավ այդ ծրագրի իրականացմանը<sup>1</sup>:

Պետք է ասել, որ ժամանակակից թուրք հեղինակները, փորձելով 1920 թվականի պշնանը Հայաստանի դեմ կատարված ագրեսիան ներկայացնել որպես ազատագրական պայքարի ամենակարևոր նախապայմանը, բացեիրաց գրում են Հայաստանի դեմ քեմալականների կողմից նախապատրաստվող պատերազմի, հարձակման ժամկետի, ռազմական ուժերի կենտրոնացման և այլ հարցերի մասին: Այդ տեսակետից

<sup>1</sup> Այս բոլորից հետո, մեր կարծիքով, ժամանակն է վերանայել մեր պատմագրության մեջ բավականին լայն տարածում գտած այն թյուր տեսակետը, որի հիմքում ընկած է հայ-թուրքական պատերազմին դեռևս 1920 թվականին Ստալինի կողմից տրված միակողմանի գնահատականը, այն, որ Անտանտի հրահրանքով «դաշնակիները ձեռնարկեցին պատերազմ թուրքիայի դեմ» (տես Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 468): Ստալինի այս գնահատականը կրկնվել է այդ շրջանի պատմագրության նվիրված բազմաթիվ աշխատություններում, որոնց հեղինակները անտեսում են քեմալականների սեփական ագրեսիվ նյւանները, Հայաստանի գոյությունը իսպառ վերջ դնելու կոնկրետ ծրագրերը: Հայ-թուրքական պատերազմի ծագման, ինչ խոսք, նպատեց դաշնակիների ավանտյուրիստական քաղաքականությանը, այն, որ նրանք մեթեղով Սովետական Խուսափության օգնությունը՝ Հայաստանի բախտը կապեցին անտանտի իմպերալիստների հետ: Որոշ հեղինակներ էլ, ակնարկելով Անկարայի կառավարության հարձակողական մատչությունները մասին, դրանք կապում են բացառապես փեմալի քաղաքական հակառակորդների հետ: Այսպես, «Վսեմիրնայա իստորիայի» 3-րդ հատորում սլոնիստը Ա. Ֆ. Միլլերը, ազավաղելով իրականությունը, գրում է.

«Անտատլիայի քաղաքական ու ռազմական գործիչները մեջ կային փեմալի թաքնված և նույնիսկ բացահայտ թշնամիներ, որոնք կողմնակից էին կոմպրոմիսի իմպերիալիստների հետ: Նրանք ցանկանում էին թուրքական ազգային շարժումը շեղել իմպերիալիստական ինտերվենյայի դեմ պայքարից և ուղղել այն դեպի շովինիստական հունը, կովկասի ժողովուրդների դեմ» (տես «Всемирная история», т. VIII, стр. 452. Соцэкгиз, М., 1961): Այսպիսով, ստացվում է, որ 1920 թվականի թուրքական արշավանքը Հայաստան ո՛չ թե քեմալականների, այլ նրանց քաղաքական հակառակորդների գործն էր: Նրանով իսկ ժխտվում է այն անհերքելի ճշմարտությունը, որ քեմալականներն ի վերջո գնացին շովինիստական ուղիով:

հետաքրքրական են ժամանակի քեմալական հայտնի ռազմական գործիչներից մեկի՝ գեներալ Ալի Ֆուադ փաշայի (Ջեբեսոյի) խոստովանութունները:

Իր՝ «Ազգային ազատագրական պայքարի մասին» հուշերում Ջեբեսոյը հանգամանորեն անդրադառնալով Հայաստանի վրա հարձակվելու նպատակով Արևելյան ճակատում անցկացված նախապատրաստական միջոցառումներին, ցավով նշում է, որ հարձակումը գարնանը տեղի չունեցավ, այլ հետաձգվեց պելլի ուշ ժամանակներին: «Եթե մայիս ամսում Քյազըմ Կարաբեքիր փաշայի առաջարկը՝ Հայաստանի վրա շարժվելու մասին, առարկության չհանդիպեր, ապա 1920 թվականի նոյեմբեր ամսին, Արևմուտքում կատարված կարևոր փոփոխութունների շրջանում, Արևմտյան ճակատը կրկնակի չափով կուժեղանար...»<sup>1</sup>: Հեղինակի կարծիքով, հենց մայիս ամսին էր ստեղծվել այն «ամենաբարենպաստ» իրադրութիւնը, որն անհրաժեշտ էր թուրքական հարձակումը սկսելու համար: «1920 թվականի մայիս ամսին, — գրում է Ջեբեսոյը, — հայկական բանակը զբաղված էր բուլղարիկյան ներքին ապստամբութիւնները (խոսքը Մայիսյան ապստամբության մասին է, — հեղ.) ճնշելով և Հյուսիսում ադրբեջանցիներին կանգնեցնելով: Մենշևիկյան վրաստանը ի վիճակի չէր Հայաստանին օգնելու: Ահա այդպիսի դժվարին կացության մեջ գտնվող հայերի դեմ կանգնած էր երեք կանոնավոր դիվիզիաներից և կամավորական խմբերից բազկացած 15-րդ զորամասը: Այս զորամասն ի վիճակի էր հայերին արագ կերպով պարտության մատնելը»<sup>2</sup> (ընդգծումը մերն է, — հեղ.):»

Սակայն ինչո՞ւ այդ հարձակումը գարնանը տեղի չունեցավ, հետաձգվեց: Քննելով այս հարցը, Ջեբեսոյը գրում է, որ Ազգային մեծ ժողովի նախագահը (Մուստաֆա Քեմալը, — հեղ.) և մինիստրների կարիները Հայաստանի դեմ արշավանքը հետաձգեցին այն բանից հետո, երբ Ազգային մեծ

<sup>1</sup> Ali Fuat Cebesoy, Milli mücadele hatıraları, s. 511.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 485:

ժողովի նախագահի ստորագրությամբ հետևյալ հեռագիրն ուղարկվեց Քյազըմ Կարաբեքիր փաշային. «Մինչև որ խաղության կոնֆերանսում մեր հանդեպ ընդունված որոշումները վերջնականապես պարզ չդառնան, ներկայումս, ելնելով ներքին և արտաքին իրադրությունից, ձեռնտու չէ զբրկվել դաշնակից պետությունների հետ համաձայնության գալու հնարավորությունից... Հայաստանի վրա հարձակումը դաշնակից տերությունների և Ամերիկայի համար առիթ կծառայի մեզ պատերազմ հայտարարելու...»<sup>1</sup> (ընդգծումը մերն է,— հեղ.):

Այսպես, ուրեմն, Քեմալի ստորագրությամբ ուղարկված այս հեռագրից պարզորոշ կերպով երևում է, որ Անկարայի վառավարությունը դեռևս հույս ուներ հակասովետական գործարքի մեջ մտնել Արևմուտքի իմպերիալիստական տերությունների հետ և այդ իսկ պատճառով ստիպված էր որոշ ժամանակով հետաձգել նախատեսված արշավանքը:

Ժամանակակից թուրք հեղինակների վերը բերված ուղղակի խոստովանությունները և, ընդհանրապես, թուրքական ազգային-ազատագրական պայքարի հենց սկզբնական շրջանից քեմալականների վարած քաղաքականությունը գալիս են հաստատելու այն միտքը, որ քեմալական շարժումն իր ծագման իսկ օրից ունեցավ թուրքիայի ազգային բուրժուազիային բնորոշ մի առանձնահատկություն. մի կողմից, այն հակաիմպերիալիստական էր ու ազգային-ազատագրական՝ ուղղված արևմտյան իմպերիալիզմի դեմ, իսկ մյուս կողմից, այդ շարժումն Արևելքում ընդունեց նվաճողական, իմպերիալիստական բնույթ թուրքիային հարևան Անդրկովկասի ու նրա ժողովուրդների նկատմամբ: Եվ այդ դավթողական բնույթը թուրք հեղինակները հրամցնում են որպես թուրքիայի ազգային-ազատագրական շարժման լրացուցիչ մասը: Դեռ ավելին. թուրքական ազգբնիայի հետևանքով 1920 թվականի հայ-թուրքական պատերազմում ձեռք բերած հաղթանակը թուրք հեղինակների կողմից մեկնաբան-

<sup>1</sup> Ali Fuat Cebesoy, Milli mücadele hatıraları, s. 482.

վում է որպես ազատագրական պայքարի հետագա ծավալման կարևոր նախապայմանը: Այսպես, պրոֆեսոր Էնվեր Զիյա Կարալը «Թուրքական ռեսպուբլիկայի պատմության» մեջ գրում է. «Արևելքում հայերի դեմ տարած ուղղակի հաղթանակը անկախության համար մղված մեր պայքարի առաջին հաղթանակն էր»<sup>1</sup> (ընդգծումը մերն է, — հեղ.): Իսկ Զեմալ Քութայը հիշյալ հաղթանակի հետ է կապում ազգային-ազատագրական պայքարի հետագա ճակատագիրը: «Եթե Կարաբեքիրը Արևելքում հաղթանակ չտաներ, ի՞նչ կլիներ ազգային կռիվի բախտը», — գրում է նա:<sup>2</sup>

Նույն ղնահատականն է տալիս նաև Զեբեսոյը, որն իր հուշերում առաջին անգամ հրապարակում է 1920 թվականի նոյեմբերի 28-ին Քեմալի ամենամերձավոր զինակցի, այն ժամանակ Արևմտյան ճակատի գլխավոր հրամանատար Իսմեթ բեյի հեռագիրը Քյազըմ Կարաբեքիրին.

«Իմ սիրելի, իմ շատ սիրելի եղբայր Քյազըմ... Արևելքի արշավանքը կյանքի կոչեց մեզ և մեր դատը: Այն աստիճան տանջվել, այն աստիճան նեղվել էինք, որ նորից շոնչ առնելու համար անհրաժեշտ էր վճռական մի ելք: Աստու օգնությունը դու այդ ելքը կատարելապես ճիշտ և հաջողությամբ գտար...»: «Հատկապես Մուստաֆա Քեմալ փաշան, — շարունակում էր Իսմեթը, — չգիտի ինչպես արտահայտի իր երախտագիտությունը: Բոլորն էլ կրկնում են նույնը»<sup>3</sup> (ընդգծումները մերն են, — հեղ.):

Այսպիսով, քողարկելով 1920 թվականի աշնան թուրքական արշավանքի բուն նպատակները, ժամանակակից թուրք պատմաբանները տրիշի տերիտորիայի նվաճումը, խաղաղ բնակչության մասսայական բնաջնջումը, քեմալական զորքի գազանային շարագործությունները (որի մասին կխոսվի ստորև) ղնահատում են որպես «ազատագրական», «անկախության» համար մղված պայքար:

Թուրք հեղինակները, դեպի Հայաստան կատարած քե-

<sup>1</sup> Prof. Enver Ziya Karal, s. 97.

<sup>2</sup> Cemal Kutay, s. 62.

<sup>3</sup> Ali Fuat Cebesoy, s. 485—486.

մալական ազրեհիան արդարացնելու համար, դիմում են փաստերի, պատմական իրականությունն ենեղափոխման մի այլ ձևի՝ փորձում են գործն այնպես ներկայացնել, թե իբր Սովետական Ռուսաստանի կառավարությունը հավանություն էր տալիս Թուրքիայի ազրեհիվ գործողություններին:

Թալեաթ փաշան Բեռլինից Կարաբեքիրին ուղարկած վերոհիշյալ նամակում, վերջինիս ռազմամուլ ու հայաստաց ձգտումները խրախուսելու նպատակով, «հավաստիացնում էր» նրան, որ սովետական ղեկավարները շեն միջամտի և որևէ ձևով չեն խոչընդոտի թուրքական զորքերի առաջխաղացմանը Հայաստանում:

«Նշանակություն մի տուր այն բանին, որ բուլղեիկները էպպես կարող են հովանավորել Հայաստանին», — գրում էր նա:<sup>1</sup>

Քաջ հայտնի է սակայն, որ հունիս ամսին Հայաստանի վրա թուրքական բանակի նախատեսվող հարձակումը հետաձգվեց հենց Սովետական Ռուսաստանի կառավարության միջամտության շնորհիվ: Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Մուստաֆա Բեմալին ՌՍՖՍՌ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Վ. Չիչերինի 1920 թ. հունիսի 3-ի նամակում որոշակիորեն արտահայտվում էր Սովետական Ռուսաստանի վերաբերմունքը Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ: Հիշատակելով Թուրքահայաստանին, Քրդստանին, Լազիստանին, Բաթումի մարզին ու Արևելյան Թրակիային իրենց բախտը անձամբ տնօրինելու առթիվ ապրիլի 26-ի Բեմալի նամակում տրված խոստման մասին, Սովետական կառավարությունը ընդգծում էր, որ դրա տակ ինքը «բնականաբար ենթադրում է այդ տեղերում ազատ հանրաքվեի անցկացում՝ զաղթականների և վտարանդիների մասնակցությամբ, որոնք իր ժամանակին իրենցից անկախ պատճառներով ստիպված են եղել թողնել իրենց հայրենիքը և որոնք պետք է վերադարձվեն հայրենիք»<sup>2</sup>: Դրանով իսկ Սովետա-

<sup>1</sup> Cemal Kutay, s. 27.

<sup>2</sup> «Документы внешней политики СССР», т. II. М. 1958, стр. 555.

կան կառավարությունը պարզորոշ կերպով հասկացնել էր տալիս, որ հիշված շրջանների հետագա ճակատագիրը անանց կողմնակի միջամտության, խաղաղ ճանապարհով կորոշի ինքը ժողովուրդը: Միաժամանակ, այս փաստաթուղթը վկայում էր այն մասին, որ Սովետական կառավարությունը ստեղծված նոր իրադրության պայմաններում հնարավոր էր համարում Թուրքահայաստանի մասին Ժողկոմսովետի 1917 թ. դեկտեմբերի 29-ի դեկրետի կիրառումը:<sup>1</sup>

Սովետական Ռուսաստանի կառավարությունը հույս էր հայտնում, որ Անկարայում ստեղծված թուրքական նոր կառավարությունը հավատարիմ կմնա 1920 թվականի ապրիլի 26-ի Քեմալի նամակում առաջ քաշված սկզբունքներին, որոնցից մեկն էլ Թուրքահայաստանին իր բախտն անձամբ անօրինելու խոստումն էր: Չիչերինի 1920 թ. հուլիսի 19-ի հեռագրում բանակցությունների հարցի առթիվ, դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրին ասվում էր, որ «Այն բարեկամական հարաբերությունները, որ Սովետական կառավարությունը փորձում է հաստատել Փոքր Ասիայի թուրքական ազգային կառավարության հետ, նա, ի միջի այլոց, օգտագործում է, որպեսզի հայ ժողովուրդի համար հնարավորություն ասարհովի իր զարգացման համար

<sup>1</sup> Հայտնի է, որ հիշյալ դեկրետով հայկական ջարդերի հետևանքով աշխարհով մեկ ցրված հայությանը իրավունք էր վերապահվում վերադառնալ իր հայրենիքը՝ Արևմտյան Հայաստան և ազատ հանրաքվեի միջոցով որոշել այդ տերիտորիաների հետագա ճակատագիրը: Թուրքահայաստանի մասին դեկրետը ժամանակին կյանքում չիրականացավ սուլթանական Թուրքիայի ձեռնարկած ազբեսիայի հետևանքով: Ինչպես իրավացիորեն նշվում է ՄՍՌՄ արտաքին քաղաքականության փաստաթղթերի ժողովածուում, «1918 թ. փետրվարին թուրքերը, որպես նոսր օգտագործելով հենց իրենց կողմից հրահրված միջադեպը հայկական ջոկատներին և մահմեդական ազգաբնակչության միջև, իրենց դորքերը մտցրին «Թուրքահայաստանի» տերիտորիան և հայ ազգաբնակչությանը զրկեցին Ժողկոմսովետի դեկրետով նախատեսված ազատ ինքնորոշման իրավունքն իրականացնելու հնարավորությունից»: Ցե'ս «Документы внешней политики СССР», т. I. М., 1957, стр. 712.

բավականաչափ տերիտորիա ձեռք բերելու Փոքր Ասիայում... Բացառապես Սովետական կառավարության խաղաղասիրական ձգտումների ազդեցության տակ թուրք նացիոնալիստները դադարեցրին իրենց ակամա զորակոչը, որը նախատակ ուներ նոր հարված հասցնել հայ ժողովրդին... Սովետական Ռուսաստանը կշարունակի ընթանալ ամեն մի ազգության աշխատավոր մասսաների նկատմամբ անաշու բարեկամական վերաբերմունքի այդ նույն ուղիով, և հայ ժողովուրդը կարող է հույս դնել նրա մշտական բարեկամական վերաբերմունքի ու նրա ուժերի սահմաններում՝ նրա օգնության վրա՝ հայ ժողովրդին սպառնացող նոր արշունակի աղետները կանխելու համար»<sup>1</sup>։

Այս հարցում Սովետական կառավարության գրաված որոշակի և հաստատուն դիրքը Անկարայի ղեկավար շրջաններին ստիպեց հետաձգել Հայաստանի վրա նախապատրաստվող հարձակումը։ Դա պարզորոշ երևում է նաև Ազգային մեծ ժողովում Մուստաֆա Քեմալի արտասանած ճառից, որտեղ նա Մեջլիսի անդամներին իրազեկ պահելով վերը հիշատակված նոսրայի մասին, ընդգծել էր, որ Սովետական կառավարությունը վճռականորեն դեմ է թուրքական զորքերի հարձակմանը Հայաստանի վրա և այդ պատճառով հունիսի 20-ին իրենք ստիպված եղան որոշում ընդունել Արևելյան բանակի հարձակողական գործողությունների նախապատրաստումը դադարեցնելու մասին։

Ինչ վերաբերում է Հայաստանը նվաճելու հնարավորությունը, — ասել է նույն ճառում Քեմալը, — այդ հարցը չի կարելի դիտել մեկուսացված. «Հայաստանի հետ հարաբերությունները կազմում են Արևելքում ընդհանուր վիճակի և բոլջևիկյան կառավարության հետ թուրքիայի ունի-

<sup>1</sup> Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սոցիալական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու)։ Հայկ. ՍՍՌ գիտ. ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1960, էջ 353։

ցած ընդհանուր փոխհարաբերությունների փոքր մասը, մի կողմը միայն»<sup>1</sup>

Ընդունելով Սովետական Ռուսաստանի միջնորդությունը, Անկարայի կառավարությունը համաձայնվեց հատուկ պատվիրակություն օւղարկել Մոսկւա, նպատակ ունենալով ցույց տալ, թե ինքը իբր կողմնակից է վիճելի տերիտորիալ հարցերը խաղաղ ճանապարհով կարգավորելու: Իրականում, սակայն, քեմալականները երբեք չեն հրաժարվել իրենց ագրեսիվ մտադրություններից, նրանք միայն սպասում էին հարմար առիթի՝ իրենց վաղորոք ծրագրած պլաններն իրականացնելու համար:

1920 թվականի հուլիսի 19-ին թուրքական պատվիրակությունը Անկարայի կառավարության արտաքին գործերի մինիստր Բեքիր Սամի բեյի գլխավորությամբ ժամանեց Մոսկվա: Պատվիրակությունը մի շարք հանդիպումներ ունեցավ ՌՍՖՍՌ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Վ. Չիչերինի և նրա տեղակալ Լ. Մ. Կարախանի հետ, ինչպես նաև ընդունվեց Վ. Ի. Լենինի կողմից: Այդ հանդիպումների և բանակցությունների ժամանակ պարզվեց, որ թուրքական կառավարությունը մտադիր չէ տերիտորիալ հարցերում հետևելու իր կողմից նախկինում որպես հիմք ընդունած սկզբունքներին:

Ինչպես հայտնի է, 1920 թ. ապրիլի 26-ի Քեմալի նամակում հռչակվում էին Անկարայի կառավարության արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները, այդ թվում՝

Թուրքական պետության մեջ միայն անվիճելի թուրքական տերիտորիաների ընդգրկում:

Թուրքհայաստանին և խառը ազգաբնակչություն ունեցող այլ տերիտորիաներին ազգային ինքնորոշման իրավունքի վերապահում և այլն<sup>2</sup>:

<sup>1</sup> Atatürk'ün söylev ve demeçleri, cilt I, s. 89—90: Այս մասին տես նաև Ali Fuat Cebesoy, Siyasi hatıraları. «Vatan», 14. III. 1954.

<sup>2</sup> Մանրամասն տես՝ «Документы внешней политики СССР», т. II, стр. 454—455, 725.

Վերոհիշյալ սկզբունքները հիմք ընդունելով, Սովետական Ռուսաստանի կառավարությունը Սոսկվայի բանակցությունների ժամանակ առաջ քաշեց ազգազրական սահմանի սկզբունքը՝ հիմնված մինչև համաշխարհային պատերազմը գոյություն ունեցող ազգային փոխհարաբերությունների վրա: Ելնելով դրանից՝ Սովետական կառավարությունը բանակցությունների ընթացքում պահանջում էր «հին թուրքական սահմանի այնպիսի փոփոխում (ռեկտիֆիկացիա), որի հետևանքով մահաբեղական բնակչությամբ գերակշռող հողերը անցնեն Թուրքիային, իսկ այն հողերը, որտեղ մինչև 1914 թիվը եղել է հայկական մեծամասնություն՝ անցնեն Հայաստանին»<sup>1</sup>:

Թուրքական կառավարող շրջանները, սակայն, հակառակ վերևում հիշված իրենց դիրքի ու սկզբունքների, և դեկավարվելով ողջ Հայաստանի նկատմամբ նվաճողական ձրգտումներով, հրաժարվեցին Սովետական մառավարության արդարացի առաջարկներից և դրանով իսկ Սոսկվայի բանակցությունները ձախողման հասցրեցին:

Սոսկվայի բանակցություններին մասնակցած թուրքական պատվիրակության անդամներից մեկը, հետագայում Սովետական Ռուսաստանում քեմալական Թուրքիայի առաջին դեսպան Ալի Ֆուադ Ջեբեսոյը, 1955 թվականին հրատարակած իր «Սոսկվայան հուշերում» խոսելով 1920 թվականի ամռան բանակցությունների մասին, փորձում է քողարկել Անկարայի կառավարության ազրեսիվ պլանները և իրերի վիճակն այնպես ներկայացնել, որ իբր վերջինիս տերիտորիալ պահանջները միանգամայն օրինական էին և վերաբերում էին զուտ թուրքական հողերին:

«Անկարայի կառավարությունը, — գրում է Ջեբեսոյը, — շուներ տրեէ թշնամական մտադրություն իր հարևան երկրների նկատմամբ և չէր հետապնդում այլ նպատակ, քան իր անկախության և ազատության հասնելը՝ ազգային սահմանների շրջանակներում»<sup>2</sup> (ընդգծումը մերն է, — հեղ.):

<sup>1</sup> «Документы внешней политики СССР», т. II, стр. 726—727.

<sup>2</sup> Ali Fuat Cebesoy, Moskova hatiralari, s. 90—91.

Թուրք հեղինակները, նենգափոխելով փաստերը, Սովետական Ռուսաստանի կառավարությանը մեղադրում են Մոսկվայի բանակցությունները ձախողելու մեջ: Այսպես, պրոֆ. էնվեր Բեհնան Շապուլյուն իր «Թուրքական ռեսպուբլիկայի պատմության» մեջ պնդում է, որ համաձայնությունը տեղի չունեցավ ԻՍՏԱՒ կառավարության գրաված դիրքի պատճառով, այսինքն՝ փաստորեն Սովետական Ռուսաստանի կառավարությանը մեղադրում է բանակցությունները ձախողելու մեջ<sup>1</sup>: Նույն բանն են կրկնում Մյուքերեմ Բյալի Սուն<sup>2</sup>, պրոֆեսոր էսմեր<sup>3</sup> և Թեմալ Բըլբըլը-օղլուն:

«1920 թ. օգոստոսի 24-ին Մոսկվայում ստորագրված բարեկամության նախնական համաձայնագրի շինքման հիմնական պատճառն այն էր, — դրում է Թեմալ Բըլբըլը-օղլուն, — որ սովետները նպատակադրվել էին մեր արևելյան վիլայեթների հողերը տալ դաշնակցական հայերին<sup>4</sup> (ընդգծումը մերն է, — հեղ.): Այա, կեղծելով պատմական փաստերը, փորձում է արդարացնել քեմալականների 1920 թ. աշնան արշավանքը Հայաստան, ներկայացնելով այն որպես խաղաղասիրական մի քայլ: «1920 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին դաշնակցական Հայաստանի դեմ սկսած մեր կարճատև ռազմական գործողությունները նպատակ ունեին այդ շրջանում խաղաղություն ու անգործություն հաստատել և մեր «ազգային ուխտն» իրականացնել»<sup>5</sup>:

Սակայն քեմալական Թուրքիայի այս ազդեցիկան Հայաս-

<sup>1</sup> Enver Behnan Şapolyo; Türkiye Cumhuriyeti tarihi. İstanbul, 1954, s. 67.

<sup>2</sup> Mükerrerem Kâmil Su ve Kâmil Su, Türkiye Cumhuriyeti tarihi. İstanbul, 1957, s. 77—78.

<sup>3</sup> Prof. Ahmet Sükrü Esmer, Türk diplomasisi (1920—1955). «Yeni Türkiye». İstanbul, 1959, s. 69.

<sup>4</sup> «Belleten», Temmuz, 1961, s. 479.

<sup>5</sup> Տես նաև նույն հեղինակի գիրքը՝ «Atatürk Anadolu'da». Ankara, 1959, s. 20.

<sup>6</sup> «Belleten», Temmuz, 1961, s. 489. Տես նաև Ali Fuat Cebesoy, Siyasî hatıraları. «Vatan», 21. III. 1954.

տանի դեմ, որը թուրք պատմաբանները հրամցնում են որպես «օրինական» մի ձեռնարկում, նպատակ չունեն որ Հայաստանը նվաճել: Այն միաժամանակ ուղղված էր Սովետական Ռուսաստանի դեմ և կրում էր վատ քողարկված հակասովետական բնույթ: Այդ մասին իր ժամանակին գրել է Վ. Ի. Լենինը: 1920 թ. հոկտեմբերի 9-ին «Ռեսպուբլիկայի ներքին և արտաքին դրուժյան մասին» իր գեկուցման մեջ Վ. Ի. Լենինը, նշելով, որ Կովկասում դրուժյունը բարդ է, եզրակացնում էր, որ քեմալականները, հավանական է, շեն բավարարվի միայն Հայաստանի նվաճումով. «Վերջերս թուրքերը սկսեցին հարձակումը Հայաստանի վրա՝ նպատակ ունենալով գրավել Բաթումը, իսկ այնուհետև, հնարավոր է, և Բաքուն»:<sup>1</sup>

Թե ինչպիսի «խաղաղություն և անդորրություն» էին հաստատել քեմալական զորքերը Հայաստանի վրա 1920 թ. սեպտեմբերին ձեռնարկած արշավանքի հետևանքով նրանց կողմից զավթած շրջաններում, երևում է բազմաթիվ արխիվային նյութերից և ՍՍՌՄ արտաքին գործերի մինիստրության կողմից վերջերս հրապարակված փաստաթղթերից: Բերենք մի քանիսը:

Այսպես, մի փաստաթղթում, որտեղ մանրամասն նկարագրվում էր թուրքական զորքերի կողմից Կարսի գրավումը, ասված էր, որ քաղաքում և նրա շրջակա գյուղերում խաղաղ հայ ազգաբնակչության շարդերը շարունակվում էին ամբողջ երկու շաբաթ: Սպանվածների թիվն անհամար է... «Գրավելով Կարսը, — ասվում էր այնուհետև հիշյալ հաղորդագրության մեջ, — թուրքերն անմիջապես ձեռնամուխ եղան Սարիղամիշ և էրզրում արտահանելու այն ամենը, ինչ որ արժեք էր ներկայացնում՝ հրանոթներ, արվեր, գործարանների և արհեստանոցների մեքենաներ, տնային վահույք և

<sup>1</sup> В. И. Ленин, Доклад о внутреннем и внешнем положении республики на совещании актива Московской организации РКП (б) 9 октября 1920 года. «Ленинский сборник», XXXVI. Госполитиздат, М., 1959, стр. 131.

այլն»<sup>1</sup> Մեկ ուրիշ հաղորդման մեջ ասվում էր. «Կոտորած-  
ներից փրկված բնակչությունը դատապարտված է սովամա-  
հուծյան և անլուր գրկանքների, քանի որ Կարսի և Ալեքսանդ-  
րապոլի շրջանները վերջնականապես տնտեսապես քայքայ-  
ված են: Այդ տեղերից թուրքերը արտահանել են եղած ամ-  
բողջ հացը, լորինձը և այլ սննդամթերքներ: Չեն թողել ոչ մի  
գլուխ անասուն՝ փով, ձի, ոչխար, ամբողջը քշվել է էրզրու-  
մի կողմը... Տնտեսական այս մահացու սիտեմին զուգա-  
հեռ, թուրքերն այդ շրջանները ներխուժելու առաջին իսկ  
օրից սկսեցին անողոք ջարդերը... Ալեքսանդրապոլի և Հա-  
յաստանի շրջանների մի քանի տասնյակ գյուղերի հայկա-  
կան բնակչությունը սրի է քաշված...»<sup>2</sup>:

Մի այլ փաստաթղթում, կապի աշխատող Կոստանաշվի-  
լին Սովետական Վրաստանի արտաքին գործերի մինիստրու-  
թյանը ներկայացրած հոշազրում մանրամասն նկարագրում  
էր թուրքերի կողմից Ալեքսանդրապոլի գրավումը. «Թուրքե-  
րը հանեցին բոլոր հեռագրային սարքավորումները, կտրե-  
ցին քաղաքը ամբողջ աշխարհից և ձեռնամուխ եղան իրենց  
հրեշավոր պլանի իրագործմանը՝ մի ամբողջ ժողովրդի ոչըն-  
չացման ծրագրին: Քաղաքից դեպի գյուղ և գյուղից դեպի  
քաղաք տանող բոլոր ճանապարհները փակվեցին, ոչ մի  
բան բաց չէր թողնվում: Քաղաքում սննդամթերք չկար: Այս-  
տեղից մի հետևություն՝ բնակչությանը սովամահ անել: Թուր-  
քերի համար արդյունքները փայլուն էին. շքավոր բնակչու-  
թյունը և գաղթականները մահանում էին հարյուրներով:  
Դիակները հավաքելու համար փոխադրական միջոցները  
չէին բավարարում... Տեղական իշխանությունների կողմից  
ստեղծված հանձնաժողովի մոտավոր հաշվումների համա-  
ձայն, քաղաքի և Ալեքսանդրապոլի գավառի օկուպացման  
շրջանում բնակչության կորուստները հետևյալն են. տղա-  
մարդիկ՝ 30 հազար սպանված, 20 հազար վիրավոր, 16 հա-  
զար գերիններ, 10 հազար սովից մահացած: Կանայք՝ 15 հազար

<sup>1</sup> ЦГАКА, ф. 109, оп. 3., л. 241, л. 12.

<sup>2</sup> Նույն տեղում, դ. 364, թ. 25:

սպանված, 5 հազար վիրավոր, 3 հազար գերի տարված, հազար հոգի սովից մահացած: Երեխաներ՝ 5 հազար սպանված, 3 հազար վիրավոր, 10 հազար քաղցից մահացած<sup>1</sup>»:

Սովետական Հայաստանի Ժողովուրդների նախագահ Ա. Մյասնիկյանը ՌՍՖՍՌ արտաքին գործերի ժողովրդական կոմիտար Գ. Վ. Չիչերինին ուղղված հեռագրում 1921 թ. հոսիսին տեղեկացնում էր, որ Ալեքսանդրապոլից թուրքական զորքերի հեռանալուց հետո քաղաքի շրջակայքում հայտնաբերվել են կանանց և երեխաների հազարավոր դիակներ: «Հետաքննող հանձնաժողովը այժմ վերջացրել է իր աշխատանքները, որի արդյունքների մասին հաղորդում ենք Ձեզ ի գիտություն...» «Հանձնաժողովը,— ասվում էր այնուհետև հեռագրում,— Աղբուլաղի և Զաջուռի շրջաններում հաշվել է 12.050 դիակ, որից 80 տոկոսը՝ 5-ից մինչև 12 տարեկան երեխաներ են, երիտասարդ կանանց և աղջիկների բաղմաթիվ դիակներ կան»: Վերջում ասվում էր, որ Ալեքսանդրապոլի հանձնաժողովի հավաքած տվյալների համաձայն, թուրքերի կողմից սրի մատնվածների ընդհանուր թիվը կազմում է 60 հազար, որից տղամարդիկ՝ 30 հազար, կանայք՝ 15 հազար, երեխաներ՝ 5 հազար, աղջիկներ՝ 10 հազար: Վիրավորների թիվը՝ 38 հազար, որոնցից տղամարդիկ՝ 20 հազար, կանայք՝ 10 հազար, դեռատի աղջիկներ՝ 5 հազար, երեխաներ՝ 3 հազար, գերի քշված տղամարդիկ՝ 18 հազար, որոնցից կենդանի են մնացել ընդամենը 2 հազար մարդ, մյուսները մեռել են սովից, ցրտից կամ սրի են մատնվել<sup>2</sup>»:

Իսկ Ալեքսանդրապոլի գավառային կոմիտեի 1920 թ. դեկտեմբերի 24-ի զեկուլցում ներքին գործերի կոմիտարին՝ գավառի գյուղերում թուրքական զորքերի կողմից կատարված սպանությունների և Քալանի մասին ասվում էր հետևյալը.

«Չտեսնված ու չլսված ոճրագործություններ են տեղի

<sup>1</sup> „Политархив МИД СССР“, инв. № 53351, л. 14.

<sup>2</sup> „Архив внешней политики СССР“, ф. 132, оп. 4, п. 6, л. 14, л. 52.

ունենում գավառում... Բոլոր գյուղերը թալանված են, շկառչ մալ, ոչ հացահատիկ, ոչ շորեղեն, ոչ վառելիք: Գյուղերի փողոցները լցված են դիակներով, պակասը լրացնելու գալիս են քաղցն ու ցուրտը՝ մեկը մյուսի հետևից տանում զոհեր ու զոհեր: Այս դեռ ոչինչ. ավելի անտանելի է դառնում այս բոլորը, երբ ասկյարները ծաղրում են իրենց գերիներին ու աշխատում են ավելի սոսկալի ձևով պատժել ժողովրդին և նորից իրենց բավարարված չհամարելով, զվարճանում են, ենթարկում են զանազան տանջանքների, ծնողներին ստիպում են տալ այդ դահիճներին իրենց հարազատ 8 տարեկան աղջիկներին և 20—25 տարեկան որդիներին: Առաջիններին բռնաբարում են, իսկ երկրորդներին սպանում, և այս բոլորը կատարում են ծնողների ներկայությամբ: Այսպես են վարվում բոլոր գյուղերի հետ. մինչև 40 տարեկան աղջիկներին և տիպիկներին տարել անհետացրել են, իսկ աղամարդկանց մինչև 45 տարեկանը սպանել: Այս գյուղերում մարդիկ չկան: Անպատմելի, շտեմնված դրուժյուն է:՝

Կարելի է նման բազմաթիվ փաստաթղթեր բերել, տակաջն բերված փաստերն էլ ամենայն պարզությամբ ցույց են տալիս թուրքական զորքերի հարձակման բուն նպատակները:

Թուրք հեղինակների կեղծիքը՝ քեմալական բանակի «խաղաղասիրական» միսիայի մասին Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում, ունի լիք արմատները: Դեռ այն ժամանակ (1920 թ. աշնանը), երբ թուրքական հորդանքերը ներխուժել էին Հայաստանի տերիտորիան՝ շարժվելով դեպի երկրի խորքը, հրի ու սրի մատներով գյուղերն ու քաղաքները, ոչնչացնելով խաղաղ բնակչությանը, «նոր Թուրքիայի» ղեկավարները լկտիորեն հայտարարում էին, որ Անկարայի կառավարության զորքերն իրենց սվիչներով հետ բերում են ոչ թե բռնություն, այլ ազատագրում դաշնակների լծից: Քյազըմ Կարաբեքիրը թուրքական բանակի հարձակման նախ-

<sup>1</sup> Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 447—448:

օրյակին հատուկ կոչ արձակեց Հայաստանի բնակչութիւնը, որի մեջ ասվում էր, որ «քեմալականների հարձակման նպատակն է դաշնականներից փրկել ինչպէս քրիստոնեական, այնպէս էր մահմեդական ճնշված բնակչութիւնը»<sup>1</sup>։ Իսկ Քիֆլիսում Անկարայի կառավարութեան ներկայացուցիչ Բյազըմ բեյը Հայաստանի գրաված շրջանները թուրքական զորքերի կողմից ավերելուց, բնակչութեանը սրի քաշելուց հետո ցինիկաբար հայտարարեց. «Մենք հեռու ենք Հայաստանը ոչնչացնելու մտքից և ցանկանում ենք ինքնուրույն դեմոկրատական Հայաստան: Հայաստանը կհաստատի, որ ոչ մի դաժանութիւն չի եղել մեր կողմից օկուպացված շրջաններում»<sup>2</sup>։

Քեմալականների դեմագոգիայի ծայրահեղ արտահայտութիւններից էր 1920 թ. հոկտեմբերի 23-ին «Անատոլիայի գործակալութեան» դիմումը համաշխարհային հասարակական կարծիքին: Անկարայի կառավարութեան անունից ֆրանսերեն լեզվով տարածվող այս «կատաթղթով» քեմալականները «պարզաբանումներ» էին տալիս «թուրքական ազգայնական ուժերի և հայկական հրոսակների միջև կովկասում տեղի ունեցող կռիւլների կապակցութեամբ»<sup>3</sup> (ընդգծումը մերն է,— հեղ.): Նենգափոխելով իրական դեպքերը, քեմալական կառավարութիւնը հիշյալ «դիմումի» մեջ «պաշտոնական» վիճակագրական տվյալներ էր բերում կարսի և այլ շրջաններում թուրք մահմեդական ազգաբնակչութեան նկատմամբ հայերի կողմից իբր գործադրված «դաժանութիւնների», «199 գյուղերի հրկիզման» մասին և այլն: Ամբողջովին շինծու այդ հայտարարութեան վերջում Անկարայի կառավարութիւնը փորձում էր համաշխարհային հասարակական կարծիքին համոզել այն բանում, որ «թափված

<sup>1</sup> Центральный партархив ИМЛ при ЦК КПСС, ф. 85, оп. 14, д. 21, л. 1.

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 23, թ. 5:

<sup>3</sup> Տե՛ս ՀՄՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 867, թ. 40:

արյան պատասխանատուութիւնը ընկնում է միայն և միայն հայերի վրա»<sup>1</sup>։

Միաժամանակ, Անդրկովկասում վարած իրենց նվաճողական քաղաքականութիւնը քեմալականները փորձում էին բողոքել թուրքիայի անկախութեան համար Անտանտի դեմ պայքարելու լոզունգով, որն այդ շրջանում ժողովրդական զանգվածների մոտ լայն տարածում էր գտել։ Միանգամայն իրավացի է Ա. Բ. Կադիշևը, գրելով, որ «Հայաստանի դեմ պատերազմը նրանք ներկայացնում էին որպես Անտանտի դեմ մղվող պայքար, որը նրանց հնարավորութիւն տվեց բողոքելու իրենց ագրեսիվ նպատակներն Անդրկովկասում»<sup>2</sup>։

Այդ հարձակման նպատակը, սակայն, ինչպես ցույց տրվեց վերևում, բոլորովին այլ էր։

1920 թվականի սեպտեմբերի 24-ին դաշնակցական ջոկատները փորձեցին Օլթիի շրջանը մաքրել թուրքական զորամասերից։ Պետք է նշել, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով հայկական մի շարք տերիտորիաների հետ միասին Օլթիի շրջանը ևս անցնում էր Թուրքիային։ Սակայն հայտնի է, որ Բրեստ-Լիտովսկի կողոպտիչ պայմանագիրը ՌՄՖՍՌ կառավարութիւնը 1918 թ. սեպտեմբերի 20-ի նոտայով շեղյալ էր հայտարարել։ Հիշյալ նոտայում մատնանշվում էր, որ թուրքական կառավարութիւնը կոպիտ կերպով խախտել է Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածը, որով նախկինում Ռուսական Ռեսպուբլիկայի կազմի մեջ մտնող Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերի հետագա ճակատագիրը պետք է որոշվեր տեղի ազգաբնակչութեան ազատ հանրաքվեի միջոցով։ «Մինչդեռ, — ասվում էր վերոհիշյալ նոտայում, — պայմանագրի կնքումից հետո այդ մարզերը գրավվեցին թուրքական ռազմական ուժերի կողմից և նրանց նկատմամբ կիրառվեց ռազմական օկուպա-

<sup>1</sup> ՀՄՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 667, թ. 41։

<sup>2</sup> А. Б. Кадисhev, Интервенция и гражданская война в Закавказье, стр. 321. .

ցիայի ուժով, որն ուղեկցվում էր խաղաղ բնակչության հանդեպ գործադրվող անթույլատրելի կողոպուտով և բռնություններով...»: Այնուհետև, նոտայում մերկացվում էին թուրքական իշխանությունների կողմից անցկացված այսպես կոչված «հանրաքվեի» մեթոդները: Հիշյալ մարզերի բնակչությունը նախապես ահաբեկվել և դրվել էր այնպիսի պայմանների մեջ, որ երեք մարզերին վերապահված իրավունքը վեր էր ածվել նրա նկատմամբ բացահայտ ծաղր ու ծանակի: Ընտրությունն նախօրյակին հեղինակություն վայելող բոլոր քաղաքացիները արտաքսվել էին հիշյալ վայրերից, ձերբակալվել, իսկ նրանցից շատերը, նույնիսկ զնդակահարվել: «Քվեարկությունը» տեղի էր ունենում թուրքական իշխանությունների բացահայտ հսկողության տակ, նման պարագաներում արդյունքները դժվար չէր կանխորոշել:

Ռուսաստանից խլված մարզերի բնակչության նկատմամբ գործադրված բռնությունը համարելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածի էական խախտում, Սովետական կառավարությունը հայտարարում էր, որ նա «չի կարող համաձայնվել Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերի բնակչության այսպես կոչված կամքի արտահայտման հետ և այդ բնակչության իր մարզերում նոր կարգ հաստատելու իրավունքը համարում է չօգտագործված և, այսպիսով, նշված մարզերի նոր կառուցվածքի հարցը բաց է մնում»<sup>1</sup>: Չնայած այն բանին, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը չեղյալ էր հայտարարել, ուստի և Անկարայի կառավարությունը պարտավոր էր Օլթիի շրջանը ևս մաքրել իր զորքերից, վերջինս ոչ միայն մտադիր չէր ճանաչել Հայաստանի իրավունքները հիշյալ տերիտորիայի նկատմամբ, այլև ինքն էր պատրվակ փնտրում հարձակման անցնելու համար: Պետք է ասել, որ քեմալական ղեկավար շրջանները հենց սկզբից բացորոշ արտահայտել էին իրենց վերաբերմունքը դեպի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Այսպես, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի բացման օրը՝ 1920 թ. ապրիլի 23-ին, արտասանած իր ճա-

<sup>1</sup> «Документы внешней политики СССР», т. I., стр. 490—491.

ուում Մուստաֆա Քեմալն ուղղակի հայտարարեց, որ «Թուրքիայի սահմանները պետք է ընդգրկեն Բաթումը, Կարսը, Արդահանը՝ Կովկասում, Մոսուլը և Դիարբեքիրը՝ Միջագետքում»<sup>1</sup> (ընդգծումը մերն է, — հեղ.):

Զգաճելով իրենց ձեռքում պահել Օլթիի շրջանը, քեմալականները փորձեցին «իրավականորեն հիմնավորել» շրջանի նկատմամբ իրենց «օրինական» պահանջը, հենվելով Բրեստ-Լիտովսկի և Բաթումի կողոպտիչ պայմանագրերի վրա: Այսպես, Անկարայի կառավարության 1920 թ. հուլիսի 8-ի նոտայում, որն ուղղված էր դաշնակցական կառավարությանը, մատնանշվում էր. «Ինչպես Չեզ էլ անժանոթ չէ, երկու կառավարությունների միջև գոյություն ունեցող հարաբերությունների հիմք են ծառայում Հայկական հանրապետությունը պաշտոնապես ճանաչող Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և նրա լրացուցիչը հանդիսացող Բաթումի դաշնագիրը, որը լիազորություններ ունեցող պատվիրակների կողմից ստորագրված, երկու կառավարությունների կողմից ընդունված և հաստատված է: Օլթիի շրջանը ևս հիշված դաշնագրերի պայմաններով հաստատված. երեք նահանգների (խոսքը Կարսի, Արդահանի և Բաթումի մասին է, — հեղ.) մեջ լինելով, համաձայն ժողովրդի ազատ կերպով անցկացված հանրաքվեի, Օսմանյան պետության բացարձակ ստացվածքն է կազմում»<sup>2</sup> (ընդգծումը մերն է, — հեղ.):

Թե ինչպիսի «ազատ հանրաքվե» էր 1918 թ. սուլթանական կառավարության անցկացրած հանրաքվեն, վերևում ցույց տրվեց: Նույնիսկ Ստամբուլում լույս տեսնող «Բոսֆոր» թերթը նշում էր, որ եթե էնվերը Կարսի և Արդահանի շրջանները գրավեց իր կողմից իբր անցկացված «հանրաքվեի» քողի տակ, ապա Քեմալը այդ էլ շարեց. «Մուստաֆա Քեմալը պահանջել է, — գրում էր թերթը, — որ հայերը ճանաչեն Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, այսինքն, որ նրանք

<sup>1</sup> Газ. «Грузия», 1920, № 89.

<sup>2</sup> Հայկ. ՍՍՏ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 200, գ. 402, թ. 18:

համաձայնվելին քեմալականներին զիջել Կարսի և Արդահանի շրջանները, որոնք իր ժամանակին օկուպացվել էին էնվերի կողմից: Եվ դա շնայած այն բանին, որ հենց նույն պայմանագիրը խոսում է նախնական հանրաքվեի մասին...»<sup>1</sup>:

Հուլիսի 28-ի պատասխան նոտայում դաշնակցական կառավարությունը մատնաձեռնում էր, որ Անկարայի կառավարության հուլիսի 8-ի նոտայում բերված փաստարկներն անհիմն են, քանի որ Բրեստ-Լիտովսկի և Բաթումի դաշնագրերը վնքված են սուլթանի կառավարության կողմից, որին քեմալական կառավարությունը չի ճանաչում:

«Այն հանգամանքը, — ասվում էր այնուհետև նոտայում, — որ Դուք իբրև հիմք լեք ընդունում Բրեստ-Լիտովսկի և Բաթումի դաշնագրերը, որոնք հիմնովին շին ճանաչում կենսունակ Հայաստանի գոյությունը, ի մեծ ցավ, զրկում է մեզ Ձեզ հետ համաձայնության գալու ամեն հույսից, քանի դեռ Դուք կշարունակեք ղեկավարվել գերմանական կայսերական և սուլթանական իմպերիալիստական կառավարությունների ձգտումներով, որոնք իրենց արտահայտությունն են գտել այդ դաշնագրերում...»: Նոտայի վերջում ասվում էր, «Հայաստանը մտադիր չէ քայլեր անել նախկին ուս-տաճկական տահմաններն անցնելու համար. նամանավանդ նա իրավունք ունի հուսալ, որ Տաճկաստանը չպիտի միջամտի այն հարցերին, որոնք վերաբերում են Հայաստանի ներքին գործերին և այս տեսակետից Ձեր պահանջը՝ Օլթիի շրջանը, որը կազմում է Հայկական հանրապետության սնվիճեղի մասը, հայկական զորամասերից մաքրելու մասին, և հիշյալ շրջանում Ձեր ասկյարների հարձակողական շարժումները բոլորովին անըմբռնելի և անթույլատրելի են»<sup>2</sup>:

Ինչպես նշվում էր ՌՍՖՍՌ արտաքին գործերի մինիստրության «Բյուլետենում», «գրանով բանակցություններն

<sup>1</sup> Տես «Бюллетень Народного комиссариата иностранных дел РСФСР», 1921, № 57, стр. 16.

<sup>2</sup> Հայկ. ՍՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 402, թ. 19: Տես նաև «Бюллетень Народного комиссариата иностранных дел РСФСР», 1921, № 57, стр. 16—17.

ավարտվեցին և քեմալականներն ավելի ինտենսիվ կերպով սկսեցին հարձակման պատրաստվել<sup>1</sup>:

Քեմալական զորքերի պատերազմական միջոցառումների մասին հետաքրքիր փաստաթղթեր են պահպանվել Հայկ. ՍՍՌ կենտրոնական պատմական արխիվում: Դրանցից մեկում ասվում է, որ թուրքերը ձեռք էին առել հետևյալ միջոցները.

«1 Սահմանապահ 15-րդ բանակի գնդերը (17, 28, 29 և 36) կենտրոնացրել էին Բարդուաի և Օլթիի շրջանում: Հայտարարվում էր ընդհանուր զինակոչ՝ մինչև 40 տարեկան հասակը: Չեռք էին առնված խիստ միջոցներ դասալքուխան գեմ և ամեն կերպ հաշողել էին իրենց հիշյալ գնդերի սվինների թիվը հասցնել 1000—1100-ի՝ յուրաքանչյուրում: Չորս գնդերում բոլոր սվինների թիվը, այսպիսով, հասնում էր 4—4,5 հազարի:

2 Թորթումի և Նարխմանի շրջանի մահմեդականներից կազմել էին երկու տեղական գումարտակներ՝ ընդամենը 2 հազար կովոզներ:

3 Ուղարկել էին ագիտատորներ և սպաներ Օլթիի շրջանի քրդերի և թուրքերի մեջ, որոնց հոշոդվել էր շրջանի հյուսիսային մասերում կազմակերպել մի քանի շեթեններ՝ ընդամենը մինչև 1000 մարդ:

Վերջապես, հավաքված զորքերի ամբացման համար էրզրումից Բարդուա էր ուղարկվել մի գումարտակ էրզրումյան ժանդարմներ՝ թվով մինչև 400 հոգի:

Այսպիսով, վերոհիշյալ ձևով թուրքերի ընդհանուր թիվը միայն Բարդուաի և Օլթիի շրջանում հասնում էր մինչև 4,5 հազար կանոնավոր և 3—3,5 հազար անկանոն զորքի<sup>2</sup>:

Ինքը՝ Մուստաֆա Քեմալը հետագայում խոստովանել է, որ երկրորդ անգամ իրենք որոշում են ընդունել հարձակ-

<sup>1</sup> „Бюллетень Народного комиссариата иностранных дел РСФСР“, 1921, № 57, стр. 17.

<sup>2</sup> Հայկ. ՍՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 200. յ 1, գ. 867, թ. 19:

վել Հայաստանի վրա 1920 թ. սեպտեմբերին. «Այդ ժամանակ մենք որոշում ընդունեցինք հարձակվել Հայաստանի վրա: Մենք զբաղված էինք մեր նախապատրաստություններով: Արևելյան ճակատի հրամանատարին տրվել էին անհրաժեշտ կարգադրություններ և հրահանգներ»<sup>1</sup> (ընդգծումը մերն է, — հեղ.):

Իր ժամանակին քեմալականների հարձակման ծրագրերը մերկացրել է ֆրանսիական «Le Journal d'Orient» թերթը՝ իր 1920 թ. հոկտեմբերի 19-ի համարում զետեղված «Ինչպես քեմալականները որոշեցին հարձակվել Հայաստանի վրա» վերնագրով հոդվածում, որտեղ ասված էր հետևյալը.

«Քեմալականները փնտրելով մի որևէ զգայացունց ավանտյուրա, որը նրանց հնարավորություն կտար բարձրացնել Անատոլիայի բնակչության խիստ բարոյալիված ոգին, Անկարայում հղացան Մուստաֆա Քեմալի անձնակազմ նախաձեռնությամբ մի ընդհանուր հարձակում Հայաստանի վրա, որի մասին Կոստանդնուպոլսի պետական մարմիններն, անկասկած, արդեն տեղյակ էին: Պոլսում չգիտեին միայն, թե ինչպիսի նախապատրաստություններ էին նախորդել այս հանկարծակի որոշմանը: Սեպտեմբերի 7-ին 15-րդ կորպուսի հրամանատար Քյազըմ Կարաբեքիրը էրզրումից գալիս է Անկարա, որտեղ հաջորդ օրն իսկ Մուստաֆա Քեմալի նախադասությամբ հրավիրվում է Զինվորական բարձրագույն խորհրդի նիստ, որին ներկա էին զինեբրալներ Ահմեդ Ֆեվզին, Մուհամեդդինը, Ալի Ֆուադը և Նուրեդդինը, ինչպես նաև գլխավոր շտաբի պետ զնդապետ Իսմեթ բեյը:

Գնեբրալ Քյազըմ Կարաբեքիրը հայտարարեց, որ մի ընդհանուր հարձակում Հայաստանի դեմ անհրաժեշտ է...

Խորհուրդն, այն ժամանակ, հարցրեց նրան, թե արդյո՞ք իր զորքերը բավարար են և ինքը վստա՞հ է, որ քեմալական բանակներին լիակատար հաջողություն կապահովվի:

Քյազըմ Կարաբեքիրն ասաց, որ նա իր տրամադրություն տակ ոմնի 4 դիվիզիա, տրոնցից երկուսը՝ Ռեմզիի հրամանատարության ներքո:

<sup>1</sup> Мустафа Кемаль, Путь новой Турции, т. II, стр. 108.

Այս դիվիզիաներից յուրաքանչյուրը՝ բաղկացած 8—9 հազար մարդուց, ստանալու էր նաև թուրքական ու քրդական անկանոն ուժերի օժանդակությունը: Ըստ Քյազըմի, Արևելյան ճակատի թուրքական հրետանին թեև դեռ անկազմակերպ, բայց բավարար էր լինելու:

Այնուամենայնիվ Մուստաֆա Քեմալի համար մի հարց դեռևս մնում էր մութ, այն է՝ Հայաստանի նկատմամբ ագրեսիայի դեպքում Վրաստանի գրաված դիրքը, որը, ինչպես հայտնի է, ուներ թվով փոքր, բայց շատ լավ կազմակերպված բանակ<sup>1</sup> (ընդգծումները մերն են, — հեղ.):

Այնուհետև ասվում էր, որ այդ նպատակով Յուսուֆ Քեմալ բեյի գլխավորութայամբ մի գաղտնի միսիա է տղարկվում Քիֆլիս, որտեղ վերջինս հանդիպումներ ունենալով վրացական խորհրդի նախագահ Ժորդանիայի և արտաքին գործերի մինիստր Գեգեշկորիի հետ, ստանում է նրանց այն հավաստիացումը, որ «հայ-քեմալական ընդհարման դեպքում Վրաստանը կհայտարարի իր խիստ շեղոթությունը...»<sup>2</sup>:

Որպես առիթ օգտագործելով Օլթիի շրջանի դեպքերը, քեմալական բանակն անցավ հարձակման:

Անհրաժեշտ է նշել, որ ժամանակակից թուրք պատմաբանները բացեիքաց գրում են ոչ միայն Հայաստանի դեմ նախապես ծրագրված հարձակման մասին, այլև խոստովանում են, որ հենց քեմալական զորքերն են սկսել ռազմական գործողութայունները: Այսպես, օրինակ, վերջերս լույս տեսած «Նոր Թուրքիան» վերնագիրը կրող գրքում պրոֆ. էնվեր Զիյա Կարալը ուղղակի գրում է. «Հայերի դեմ 1920 թ. սեպտեմբերի 24-ի մեր հարձակողական շարժումը ավարտվեց մեր վճռական հաղթանակով»<sup>3</sup>: Այդ մասին գրում է նաև նույն գրքում զետեղված «Թուրքական դիվանագիտութայունը»:

<sup>1</sup> «Le Journal d'Orient», № 704, le 19 octobre 1920. (տես Հայկ. ՍՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 200, ց. 1, ք. 443, թ. 36—37):

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Yeni Türkiye. Istanbul, 1959, s. 58.

1920—1955 թթ.՝ մեծածավալ հողվածում պրոֆեսոր Ահմեդ Շյուքրյու էսմերը<sup>1</sup>:

Չեռնարկելով վաղուց մշակված թուրքական ագրեսիան, Անկարայի կառավարութունը հաշվի առավ նաև այն հանգամանքը, որ Սովետական Ռուսաստանը զբաղված էր լեհական ինտերվենտների դեմ պատերազմելով և այդ կապակցությամբ կարմիր բանակի որոշ զորամասեր Կովկասից տեղափոխել էր լեհական ճակատ: Ուտի թուրքական կառավարող շրջանները միանգամայն նպաստավոր գտան ըստեղծված իրադրութունը՝ իրագործելու համար իրենց դատան ծրագիրը՝ վերջ տալ Հայաստանի գոյությանը և Սովետական Ռուսաստանին կանգնեցնել կատարված փաստի առաջ:

Միևնույն ժամանակ քիմյալականները Հայաստանի դեմ կատարված ագրեսիայի հետ այլ նպատակներ էին կապում՝ Արևելյան Հայաստանը ևս ենթարկելով իրենց տիրապետությանը՝ ցույց տալ Սևրի պայմանագրի բացարձակ անիրագործելիութունը և դրանով իսկ ազդել Թուրքիայի նկատմամբ դաշնակից տերութունների վարած քաղաքականության վրա: Անկարայի ղեկավար շրջանների այս մտադրության մասին անգլիական «Քայմա» թերթն իր 1920 թ. դեկտեմբերի 22-ի համարում գրում էր. «...Մուստաֆա Քեմալ փաշան ներխուժեց Հայաստան Կարսը և Արդահանը գրավելու նպատակով: Նրան թվում է, որ իր ձեռքում պահելով Հայաստանը, նա կարող է ճնշում գործադրել Անտանտի և Ամերիկայի վրա»<sup>2</sup>:

Անցնելով հարձակման, թուրքական բանակը կարճ ժամանակում գրավեց Հայաստանի տերիտորիայի մեծ մասը: Սովետական Ռուսաստանը նորից փորձեց միջամտել՝ այդ խայտառակ պատերազմին վերջ տալու և Հայաստանը վերջնական կործանումից փրկելու համար: Սովետական Ռուս-

<sup>1</sup> Yeni Türkiye. İstanbul, 1959, s. 69.

<sup>2</sup> Տե՛ս «Бюллетень Народного комиссариата иностранных дел РСФСР», 1920, № 45, стр. 36.

սաստանի կառավարութիւնը պատրաստ էր նույնիսկ գին-  
ված օգնութիւն ցույց տալ Հայաստանին: Այդ մասին է  
վկայում ՌՍՖՍՌ ներկայացուցիչ Լեզրանի հայտարարութիւնը  
դաշնակցական կառավարութեանը 1920 թ. նոյեմբերի 19-ին,  
որտեղ ասված էր, որ եթէ Հայաստանի կառավարութիւ-  
նը դիմի Սովետական Ռուսաստանին ռազմական օգ-  
նութիւն ստանալու հարցով, այդ օգնութիւնը ցույց կտրվի,  
որ Սովետական Ռուսաստանը նույնպէս չի կարող անտարբեր  
մնալ քեմալականների ագրեսիայի նկատմամբ, քանի որ  
այդ հարձակումը սկսում է վրեժ զուտ իմպերիալիստական  
բնույթ: Թուրքերի այդ ձգտումների բավարարումը քեմա-  
լականների իմպերիալիստական տենդենցների ուժեղացման  
վտանգ կստեղծի, որն իր հերթին կարող է փոխել այդ  
շարժման սկզբնական բնույթը՝ տրպէս ազատագրական շար-  
ժում: Կարսը Հայաստանի ձեռքում Հայաստանը չի դարձնի  
իմպերիալիստական երկիր, իսկ Թուրքիայի ձեռքում՝ քե-  
մալականների փոփոխված տրամադրութեան ասկայութեան  
պայմաններում նա կարող է այդ բազայի դերը խաղալ:  
Միանգամայն ակներև է, որ այդպիսի բազայի ստեղծումը  
Ռուսաստանի համար որոշակի սպառնալիք է ներկայաց-  
նում, դա Սովետական Ռուսաստանի շահերին դեմ է՝:

Հիշյալ զրուցի ժամանակ անդրադառնալով Հայաստանին  
ռազմական օգնութիւն ցույց տալու հարցին, Լեզրանը որո-  
շակիորեն նշել էր, որ լեհական ճակատը լիկվիդացնելուց և  
Վրանգելի դեմ տարած հաղթանակից հետո Սովետական  
Ռուսաստանի տրամադրութեան տակ բավարար չափով ազատ  
ուժեր կան, որ նա անմիջապէս պատրաստ է օգտագործել  
քեմալականների առաջխաղացումը կանխելու և այդպիսով  
Հայաստանի տերիտորիան թուրքական օկուպացիայի վտան-  
գից փրկելու համար<sup>1</sup>:

Պետք է ասել, որ այս հարցին հանգամանորեն անդրա-  
դարձել է Վ. Ի. Լենինը, 1920 թ. նոյեմբերի 21-ին ՌԿ(բ)Պ

<sup>1</sup> Տես ՀՍՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 300, ց. 1, գ. 867, թ. 332—333, 335—336:

Մոսկովայի նահանգական կոնֆերանսում արտասանած հայտ-  
նի ճառում՝ «Մեր արտաքին ու ներքին դրուժյունը և պար-  
տիայի խնդիրները».

«...Կովկասում ներկայումս հյուսվում են շատ բարդ  
պայմաններ, որ վերին աստիճանի դժվար է ըմբռնել, ըստ  
որում մեր վզին կարող է պատերազմ փաթաթվել օրավուր:  
Սակայն այդ պատերազմը, Լեհաստանի հետ գրեթե ասպա-  
հոված հաշտության պայմաններում և Վրանգելի լիակա-  
տար լիկվիդացիայի պայմաններում, չի կարող շատ սար-  
սափելի լինել, իսկ եթե մեր վզին պատերազմ փաթաթեն,  
առկա դա մեզ խոստանում է է՛լ ավելի ուժեղացում և մեր  
դուրքյան ամրացում, քան առաջ... Մենք կարող ենք դրա  
վրա միանգամայն հանդիստ նայել—դա կլինի պատերազմ  
հեռավոր ծայրամասում, ըստ որում մեր կողմը կլինի ուժե-  
րի լիակատար գերակշռությունը, որը կապահովի, հավանո-  
րեն, նույնիսկ ավելի մեծ շահում, քան այն, որ ստացվեց  
լեհական պատերազմից»<sup>1</sup> (ընդգծումները մերն են, — հեղ.):

Այսպիսով, փաստերը վկայում են այն մասին, որ Սո-  
վետական Ռուսաստանի կառավարությունը լի պատրաստա-  
կամությունն էր հայտնել և ի վիճակի էր Հայաստանին՝ ուսպ-  
մական օգնություն ցույց տալու՝ նույնիսկ Թուրքիայի հետ  
պատերազմի մեջ մտնելու գնով<sup>2</sup>: Եթե դաշնակ կառավա-

<sup>1</sup> Վ. Ի. Լեցին, Երկեր, հ. 31, էջ 520:

<sup>2</sup> Անհրաժեշտ ենք համարում նշել, որ մեր պատմաբանները  
շատերը բացահայտորեն դերադնահատում են Անտանտի կողմից քե-  
մալականներին հակասովետական նպատակներով օգտագործելու հնա-  
բավորության վտանգը և գործն այնպես են ներկայացնում, թե իբր  
Սովետական Ռուսաստանի կառավարությունը անչափ վախենում էր  
նման գործարքից, ուստի և ստիպված էր մեծ զիջումներ անել՝ այդ  
գործարքը կանխելու համար: Այս տեսակետը անհիմն, փաստագրիչ է:  
Հայտնի է, որ սովետական նորաստեղծ ռեսպուբլիկան ի վիճակի եղավ  
ևս մղելու Անտանտի կողմից կազմակերպված 14 երկրների արշա-  
վանքը և հաղթանակած դուրս դալու այդ անհավասար կողմից և այն  
շրջանում, երբ քեմալականները Անդրկովկասում հարձակում ձեռ-  
նարկեցին, Սովետական Ռուսաստանն արդեն ալիքտել էր ինտեր-  
վենտների և ներքին հակառկույցիայի ջախջախումը, իսկ Անտան-

րողները համաձայնվեին ստանալու այդ օգնությունը, հայ ժողովուրդը կիսուսափեր տասնյակ հազարավոր նոր զոհերից և նոր տերիտորիալ կորուստներից: Դաշնակները, սակայն, գերադասեցին համաձայնության գալ թուրք զավթիչների հետ, հույս ունենալով վերջիններիս օգնությամբ մի փոքր փրկարած գել իրենց տիրապետությունը:

1920 թվականի թուրքական արշավանքն ավարտվեց դաշնակների պարտության և Ալեքսանդրապոլի ստրկացուցիչ պայմանագրով: Թուրք հեղինակները, հետևելով Քեմալի գնահատականին<sup>1</sup>, հատուկ պարծենկոտությամբ այն համարում են «նոր թուրքական պետության առաջին միջազգային պայմանագիրը»<sup>2</sup>, թաքցնելով իրենց ընթերցողներից նախ այն, որ պայմանագիրը կնքված լինելով արդեն տապալված դաշնակցական կառավարության հետ, իրավական ուժ չունի, և հետո այն, որ Թուրքիային չհաջողվեց կյանքում կիրառել պայմանագրի կողոպտիչ կետերը՝ շնորհիվ Հայաստանում սովետական կարգերի հաստատման և ՌՍՖՍՌ կառավարության գրաված վճռական դիրքի, որի հետևանքով Ալեքսանդրապոլի պայմանագիրը չճանաչվեց ոչ Սովետական Հայաստանի, ոչ էլ Սովետական Ռուսաստանի կառավարության կողմից և Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով չեղյալ հայտարարվեց:

Կեղծելով պատմական ճշմարտությունը, թուրք հեղինակները գործն այնպես են ներկայացնում, թե իբր Սովետական Ռուսաստանի կառավարությունը ճանաչել է Ալեքսանդրապոլի պայմանագիրը: «1921 թ. մարտի 16-ի պայմանագրի համաձայն, — գրում է պրոֆ. Կարալը, — Մոսկ-

սին ոգեշնչող տերությունը՝ Անգլիան, հաշվի նստելով իրականության հետ, ՌՍՖՍՌ-ի հետ առևտրական պայմանագիր կնքելու բանակցություններ էր վարում և կնքեց այդ պայմանագիրը սովետաթուրքական պայմանագրի ստորագրման օրն իսկ՝ 1921 թ. մարտի 16-ին:

<sup>1</sup> *Şek. Mustafa Kemal, Yurtu yeni Turkiye, t. III, str. 119.*

<sup>2</sup> *Prof. Dr. Ahmet Sükrü Esmer, Türk Diplomasisi (1920—1955).*

«Yeni Türkiye», İstanbul, 1959, s. 69.

վայի կառավարութիւնը ճանաչում էր հայերի հետ կնքված մեր պայմանագիրը»<sup>1</sup> (Ալեքսանդրապոլի պայմանագիրը, — հեղ.): Թեւֆիկ Բըլիբըլը զուտ գրում է, որ Սովետական Միութեան և Թուրքիայի միջև գոյութիւն ունեցող ներկա սահմանները որոշվել են Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերով<sup>2</sup>: Թահսին Յունալը նույնպես պնդում է, որ «Գյումրիի պայմանագրին հետեցին Մոսկվայի և Կարսի պայմանագրերը»<sup>3</sup>: Դեռ ավելին: Ջանալով քողարկել Ալեքսանդրապոլի պայմանագրի զավթողական բնույթը, այս հեղինակը կանգ չի առնում պատմական հայտնի փաստաթղթերը կեղծելու առաջ: «Գյումրիի պայմանագրով, — գրում է Յունալը, — հայերը ստիպված եղան հրաժարվել մեր օգտին Օսմանյան կայսրութեան կողմից 1878 թվականին կորցրած մեր հողերից»<sup>4</sup> (ընդգծումը մերն է, — հեղ.): Ըստ հեղինակի, Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիային պետք է անցնեին 1878 թվականի Բեռլինի պայմանագրի համաձայն Ռուսաստանին միացված տերիտորիաները միայն, այսինքն՝ Կարսի և Արդահանի նահանգները: Սա բացահայտ կեղծիք է: Նախ, հիշյալ շրջանները Հայաստանի անբաժան մասը կազմող նրա պատմական տերիտորիաներն են, որը թուրք հեղինակները անվանում են թուրքական հողեր<sup>5</sup>: Այս, Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիան զավթում էր ոչ միայն վերոհիշյալ հայկական հողերը, այլև Արևելյան Հայաստանի մեջ մտնող ուրիշ տերիտորիաներ:

Այսպես, ուրեմն, թուրք պատմաբանները, Հայաստանի դեմ կատարած ագրեսիան արդարացնելու հետ մեկ-

<sup>1</sup> Prof. Enver Ziva Karal, Birinci Cihan harbinden Lozan maahtedesine kadar Türkiyenin siyasi olayları. «Yeni Türkiye». Istanbul, 1959, s. 58.

<sup>2</sup> Tevfik Bıyıklıoğlu, Atatürk Anadolu'da (1919—1921). Ankara, 1959, s. 76.

<sup>3</sup> Tahsin Ünal, 1700 den 1958e kadar Türk siyasi tarih. Ankara, 1958, s. 270.

<sup>4</sup> Նույն աեղում:

<sup>5</sup> Տես նաև «Bellefen», Temmuz 1961, s. 487.

տեղ «օրինականացնում» են նաև այդ ազրեսիայի «մասնա-  
կի» արդյունքը՝ Ալեքսանդրապոլի կողոպտիչ պայմանագի-  
րը, որի համաձայն Հայաստանի տերիտորիան սահմանա-  
փակվում էր Երևանի ու Սևանա լճի շրջաններով, որոնք  
փաստորեն նույնպես ենթարկվելու էին Թուրք զավթիչներին։  
Ինչպես հայտնի է, Ալեքսանդրապոլի պայմանագրի 2-րդ  
հոդվածով Նախիջևանի, Շարուրի, Շահթախթի շրջանները  
փաստորեն դրվում էին Թուրքիայի տիրապետության տակ,  
որին իրավունք էր վերապահվում «վերահսկել Հայաստանի  
երկաթուղիներն ու հաղորդակցության մյուս ճանապարհ-  
ները» (հոդված 11), «ուղղմական միջոցներ ձեռք առնել Հա-  
յաստանի տերիտորիայում» (հոդված 12) և այլն<sup>1</sup>։ Ինչպես  
իրավացիորեն նշվում է «Սովետական պատմական հանրա-  
գիտարանում», «Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաս-  
տանը ըստ էության դառնում էր Թուրքիայի մի վիլայեթ»<sup>2</sup>։

Թուրք հեղինակները պատմական իրականության,  
փաստերի նենգափոխումը հասցրել են այն աստիճանի, որ  
իրենց ազրեսիվ գործողությունները և ուրիշի տերիտորիա-  
յի նվաճումը դիտում են որպես «ներդրում» Անդրկովկասում  
սովետական վարդերի հաղթանակի գործում։ Այսպես, Թեվֆիկ  
Բըլիբըլօղլուն «Թուրքիայի Պատմության, Ընկերության»  
կողմից հրատարակվող «Բելլեթեն» ամսագրի 1961 թ. հու-  
լիսյան համարում գրում է. «Ներքին կռիվներով ու Լեհաս-  
տանի դեմ պատերազմով խիստ զբաղված լինելու ժամա-  
նակամիջոցին Կովկասում՝ Ադրբեջանում, Հայաստանում և  
Վրաստանում, Սովետական Ռուսաստանի ուժերը թույլ ու  
բայթբայթ էին և այդ պետությունների ու ժողովուրդների  
սովետականացումն այս ճակատում հնարավոր էր դարձել

<sup>1</sup> Պայմանագրի լրիվ տեքստը տես Проф. Ю. В. Ключников  
и проф. А. В. Сабавия, Международная политика новейшего вре-  
мени в договорах, нотах и декларациях, ч. III, вып. 2. М., 1929,  
стр. 71—73.

<sup>2</sup> «Советская историческая энциклопедия», т. 1. М., 1961,  
стр. 748.

միայն բուրժուական օգնության շնորհիվ՝» (ընդգծումը մերն է. — հեղ.):

Սակայն ինչու՞մն էր կայանում քեմալական Թուրքիայի «օգնությունը»: Արդյոք նրա՞նում, որ 1920 թվականի թուրքական արշավանքն Անդրկովկասում բազմաթիվ աղետներ ու նոր մեծ զոհեր պատճառեց հայ ժողովրդին: «Սովետական պատմական հանրագիտարանի» բերված թվերից երևում է, որ «ոչ լրիվ տվյալներով հայ-թուրքական պատերազմի հետևանքով միայն թուրքերի կողմից գրավված շրջաններում զոհերի թիվը կազմում էր մոտ 198 հազար մարդ, թուրքերի կողմից արտահանվել և ոչնչացվել է գույք՝ մոտ 18 միլիոն ոսկի ռուբլու արժողությամբ»<sup>2</sup>:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո էլ քեմալականները ձգտում էին շարունակել իրենց զավթողական քաղաքականությունն Անդրկովկասում՝ միաժամանակ դրսևորելով իրենց բացահայտ հակասովետական էությունը: Եթե Հայաստանի վրա հարձակման նախօրյակին քեմալական ղեկավարները դեմադոգիկ հայտարարություններ էին անում այն մասին, որ իրենց «կարճատև» արշավանքը նպատակ ունի հայ աշխատավոր զանգվածներին ազատագրել դաշնակիների լծից, ապա Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո էլ նույն քեմալականները դաշնակցական Հայաստանի նկատմամբ վարած իրենց քաղաքականությունը ջանում էին հետևողականորեն անցկացնել Սովետական Հայաստանի նկատմամբ:

Դաշնակիների տիրապետության տապալումը և Հայաստանում սովետական իշխանության հաստատումը արմատապես փոխեցին իրադրությունն Անդրկովկասում, ստեղծելով իրական հնարավորություն քեմալական Թուրքիայի և Սովետական Հայաստանի միջև արդարացի և կայուն խաղաղություն հաստատելու համար: Հայաստանը, Սոցիալիստա-

<sup>1</sup> «Belleten». Temmuz 1961, s. 488. Տես նաև նույն հեղինակի *Կիրքը* «Atatürk Anadolu'da», Ankara, 1959, s. 19—20.

<sup>2</sup> «Советская историческая энциклопедия», т. 1. М. 1961, стр. 748.

կան Սովետական Ռեսպուբլիկա հայտարարելու մասին Հայաստանի Ռազմա-ուկոյուցիոն կոմիտեի 1920 թ. նոյեմբերի 29-ի դեկլարացիայում ասվում էր. «Հավատում ենք, որ իմպերիալիստական լծից ազատագրվող Տաճկաստանը մեղեղրայրական ձևով է մեկնելու այժմ, երբ մենք տապալեցինք մեր թշնամուն և միասին կռիվ ենք մղում Անտանտի դիշատիչների դեմ: Մենք համոզված ենք նաև, որ ոչ թե հաղթողի սուրն է թելադրելու Խորհրդային Հայաստանի ու աշխատավորական Տաճկաստանի միջև կայանալիք հաշտության պայմանները, այլ Խորհրդային Հայաստանի ու աշխատավորական Տաճկաստանի ազատ ժողովուրդների եղբայրական համերաշխությունն ու համաձայնությունը»<sup>1</sup>:

Ինչպես վերաբերվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատմանը քեմալական կառավարությունը:

Անտեսելով ստեղծված նոր իրադրությունը, Անկարայի կառավարությունը ձգտում էր կյանքում կիրառել Ալեքսանդրապոլի ստրիկացուցիկ լպայմանագրի կետերը: Թուրքիայի արևադին գործերի մինիստր Ահմեդ Մուխտարին ուղղված Սովետական Հայաստանի կառավարության 1920 թվականի դեկտեմբերի 10-ի նոտայում ասվում էր, որ ինքը սպասում է Անկարայի կառավարությունից, որ նա հանդիսավոր կերպով շեղյալ կհամարի դաշնակիցների ստորագրած հաշտությունը և կհամաձայնվի շուտով կոնֆերանս հրավիրել՝ «Ռևոլյուցիոն հեղաշրջմամբ ստեղծված նոր պայմաններից բխող համաձայնության գալու համար: Ուստի սովետական իշխանությունն այդ ավելի քան անհրաժեշտ է համարում, քանի որ նրա տրամադրության տակ կան բազմաթիվ տվյալներ, որոնք վկայում են, որ ջնայած նոր հանգամանքներին, թուրքական հրամանատարության օկուպացրած մարզերում ձեռնարկվում են այնպիսի գործողություններ, որոնք չի կարելի որևէ այլ բանով բացատրել, քան նրանով,

<sup>1</sup> Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 405:

որ շարունակվում է Հայաստանի նկատմամբ անհաշտ, թշնամական քաղաքականությունը...»<sup>1</sup>։

Անկարայի կառավարությունը 1920 թվականի դեկտեմբերի 15-ի նոտայում ոչ միայն հրաժարվում էր Ալեքսանդրապոլի պայմանագիրը վերանայելուց, այլև փորձում էր «հիմնավորել» իր իրավունքները զավթած հայկական տերիտորիաների նկատմամբ։

«Թուրք-հայկական հաշտությունը, — ցինիկորեն ասվում էր նոտայում, — ոչ թե բռնի, այլ ազգերի ինքնուրույան իրավունքի վրա հիմնված հաշտություն է և մենք ցանկացանք անեքսիայի ենթարկել միայն բուրժուական բնակչություն ունեցող տերիտորիաները...»<sup>2</sup> (ընդգծումները մերն են, — հեղ.)։

Իսկ 1921 թվականի փետրվարի 5-ի նոտայում Անկարայի կառավարությունը հայտարարեց, որ «Ալեքսանդրապոլի պայմանագիրն իր մեջ մարմնավորում է ոչ թե բռնություն, այլ արդարություն և որ նրա կիրառումը անհրաժեշտ է կողմնաստան կայուն խաղաղություն հաստատելու համար»։ Կոպիտ կերպով աղավաղելով իրականությունը, քեմալական կառավարությունն այդ նույն նոտայում պնդում էր, որ «Թուրքիային զիջված բոլոր մարզերը բնակեցված են զլխավորապես թուրքերով»<sup>3</sup>։

Այսպիսով, անտեսելով Հայաստանի տերիտորիայում նոր, սովետական իշխանության հաստատման փաստը և վերջինիս կողմից հռչակված արտաքին քաղաքականության նոր սկզբունքները, որոնց հիման վրա առաջ էր քաշվում Թուրքիայի հետ արդարացի հաշտության և բարեկամական հարաբերությունների հաստատման խնդիրը, քեմալական կառավարությունը շարունակում էր իր ագրեսիվ գործողությունները հայ ժողովրդի նկատմամբ։ Եվ եթե շինեք Սովետական Ռուսաստանի կառավարության վճռական միջամտու-

<sup>1</sup> «Документы внешней политики СССР», т. III, Госполитиздат, М., 1959, стр. 379.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 397։

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 487—488։

թյունը, հալ ժողովուրդը նոր տառապանքներ ու զրկանքներ կկրեք քեմալական օկուպացիոն զորքերի կողմից: ՌՄՖՍՌ կառավարությունը վճռականորեն հայտարարեց, որ նա չի ճանաչում Ալեքսանդրապոլի կողոպտիչ պայմանագիրը: 1920 թվականի դեկտեմբերի 11-ին Կովկասյան՝ ռազմաճակատի Ռազմա-Ռեկուլցիոն խորհրդի անդամ Գ. Կ. Օրջոնիկիձեին ուղարկած հեռագրում Չիչերինը առաջարկում էր հասկացնել թուրքերին, որ Սովետական կառավարությունը պահանջում է թուրքական զորքերից «մաքրել Ալեքսանդրապոլի գավառը և ետ քաշվել Կարսի նահանգը»<sup>1</sup>: Իսկ թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությանն ուղղված Չիչերինի դեկտեմբերի 19-ի նոտայում ասվում էր, որ Սովետական կառավարության և Հայաստանի բանվորների ու գյուղացիների և բոլոր սովետական ռեսպուբլիկաների նկատմամբ իր բարի զգացմունքները վկայելու համար Անկարայի կառավարությունը «կձեռնարկի անհրաժեշտ միջոցառումներ, որպեսզի թուրքական բանակն անհապաղ մաքրի Ալեքսանդրապոլի նահանգը և բոլոր այն վետերը, որոնք ընկած են Կարսի նահանգից դեպի հյուսիս և արևելք, որոնց օկուպացիան սակայն... չպետք է կանխորոշի թուրք-հայկական սահմանը»<sup>2</sup>:

Մի այլ փաստաթղթում, 1921 թվականի հունվարի 18-ին Օրջոնիկիձեին ուղարկած հեռագրում Չիչերինը գրում էր. «Ամեն մի սովետական ռեսպուբլիկայի զործ մեր զործն է և մենք հավատարիմ չենք լինի մեզ, եթե անտարբերությամբ նայենք հորայրական սովետական ռեսպուբլիկայի կործանմանը»<sup>3</sup>, 1921 թ. փետրվարի 26-ին Մոսկվայում սկսված սովետա-թուրքական 2-րդ կոնֆերանսի ժամանակ, Անկարայի կառավարության պատվիրակութունը, օգտվելով դաշնակիցների փետրվարյան ավանտյուրայի հետևանքով նրեանում սովետական իշխանության կարճատև անկումից, նորից հանդես եկավ տերիտորիալ սահմանների հարցում Բրեստ-Լիտովսկի և Ալեքսանդրապոլի պայմանագրերից ելնելու պահանջով:

<sup>1</sup> «Документы внешней политики СССР», т. III, стр. 380.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 393:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 479:

Օգտագործելով այդ առիթը (փետրվարյան ավանտյուրան) քեմալականները կտրանկանապես հրաժարվեցին բանակցիլ Սովետական Հայաստանի պատվիրակության հետ, որը հրավիրված էր հիշյալ կոնֆերանսին մասնակցելու:

Սովետական Ռուսաստանի կառավարության դրաված վճռական դիրքը թուրքական պատվիրակությանն ստիպեց հրաժարվել Բրեստ-Լիտովսկի և Ալեքսանդրապոլի պայմանագրերից և 1921 թ. մարտի 16-ին ՌՍՖՍՌ-ի և Թուրքիայի միջև կնքվեց պայմանագիր, որով քեմալական Թուրքիային էր անցնում նրա կողմից Անդրկովկասում նվաճված շրջանների մեծ մասը՝ 24.997 ք.կմ. տերիտորիա՝ 572 հազար բնակչությամբ, որը մինչև 1914 թվականը մտնում էր Ռուսական կայսրության կազմի մեջ (Կարսի, Կադզվանի, Արդահանի, Օլթիի, Արզվիի նահանգները, Բաթումի նահանգի հարավային մասը և Սուրմալուի գավառը):

Այսպիսով, 1920—21 թթ. Անդրկովկասում ձեռնարկված թուրքական ագրեսիայի հետևանքով քեմալականներին հաջողվեց մասամբ իրականացնել այն զավթողական ծրագրերը, որ նրանք ժառանգություն էին ստացել սուլթանական Թուրքիայից:

Քեմալականների տերիտորալ հափշտակումների մասին Ստամբուլի «Բոսֆոր» թերթը ուղղակի գրում էր. «Մուստաֆա Քեմալը այլևս չի կարող հավակնություն ոմնենալ, թե նա պաշտպանում է բացառապես թուրքական տերիտորիաները... Մուստաֆա Քեմալը էնվերի քաղաքականության շարունակողն է»<sup>1</sup>:

Սակայն այս տերիտորիալ գիշումներից հետո էլ, քեմալական կառավարությունը շարունակում էր իր զորքերը պահել Սովետական Հայաստանի տերիտորիայում՝ Ալեքսանդրապոլի գավառում, թեև Մոսկվայի պայմանագրով նա պարտավորվել էր իր զորքերն անհապաղ դուրս բերել Ալեքսանդրապոլից:

Միայն 1921 թվականի ապրիլի 22-ին թուրքական զոր-

<sup>1</sup> Տես «Бюллетень Народного комиссариата иностранных дел РСФСР», 1921 г., № 57, стр. 16.

քերը հեռացան Ալեքսանդրապոլից և նրա շրջակայքից, այն բանից հետո, երբ 11-րդ բանակի հրամանատար Ա. Ի. Գեկկերը, սովետական կառավարութեան հանձնարարութեամբ, ապրիլի 13-ին հետևյալ վերջնագիրը հանձնեց Կարաբեքիրին.

«Տխուր թյուրիմացություններից խուսափելու համար, որոնք կարող են առաջ գալ մոտ օրերս... խնդրում ենք Ձեզ անհասպաղ կարգադրություն անել՝ Ալեքսանդրապոլի նահանգը մաքրելու և թուրքական զորքերը Մոսկվայի պայմանագրով սահմանված գծից այն կողմ քաշելու: Այն դեպքում, եթե զորամասերը դուրս բերելու մասին Ձեզանից լուր չստացվի, ես ստիպված կլինեմ հրամայել վերոհիշյալ շրջանը կարմիր զորքեր մտցնելու մասին, ըստ որում իմ վրայից վերցնում եմ ողջ պատասխանատվությունն այն դեպքերի համար, որոնք կարող են հաջորդել դրան»<sup>1</sup>:

Օգտվելով վրացական մենշևիկների իշխանության թուլությունից և նրանց հետ գործարքի մեջ մտնելով, քեմալականները փորձեցին Անդրկովկասում իրենց տերիտորիալ զավթումներն ընդարձակել նաև Վրաստանի հաշվին՝ նրան ներգրավելով Կովկասի բոլոր տապալված հակահեղափոխական կառավարություններից բաղկացած հակասովետական բլոկի մեջ:

1921 թվականի մարտի 17-ին, այսինքն՝ Մոսկվայի պայմանագիրն ստորագրելու հաջորդ օրն իսկ, Անկարայի կառավարության զորքերը, քացահայտորեն խախտելով Մոսկվայի պայմանագրի վերջնականապես որոշված սահմանը, օկուպացրին Բաթումը: Այս կապակցությամբ Թիֆլիսում Անկարայի կառավարության ներկայացուցիչ Քյազըմ բեյի նույն օրը տված հրամանում ասվում էր. «Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության որոշմամբ՝ հիմնված տարբեր ժամանակներում կնքված պայմանագրերում հաստատված մեր ազգային իրավունքների վրա, Բաթումի մարզը, Ախալքալաքի և Ախալցխայի նահանգները այսօրվանից վերադարձվում են մայր հայրենիքի գիրկը և քաղաքական ու

<sup>1</sup> Տես ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957 թ., № 2, էջ 97—98:

վարչական տեսակետից ենթարկվում են թուրքական ազգային կառավարությանը<sup>1</sup>։

Միայն Անդրկովկասում գտնվող 11-րդ բանակի զորամասերի արագընթաց շարժման հետևանքով Սովետական Վրաստանի հիշյալ շրջանները ազատագրվեցին թուրքական զավթիչներից։ Մարտի 18-ին կարմիր բանակի զորամասերը մտան Բաթում, իսկ մարտի 21-ին թուրքական վերջին ջուկատները զենքը վայր դրեցին և անձնատուր եղան։

Անդրկովկասի նկատմամբ ձեռնարկված քեմալական կառավարության այս ագրեսիվ գործողություններն են, որ թուրք պատմաբանները ներկայացնում են որպես «օգնություն» սովետական կարգերի հաղթանակի գործում։



Ժամանակակից թուրք պատմաբանների աշխատություններում խեղաթյուրված է նաև 1921 թվականի Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի կնքման պատմությունը։ Սովետական Ռուսաստանին նրանք մեղադրում են 1921 թվականի Մոսկվայի պայմանագրի կնքումը ձգձգելու մեջ։ Այսպես, պրոֆ. էնվեր Զիյա Կարալը պնդում է, թե իբր «Սովետները չէին շտապում 1921 թվականի պայմանագիրը կնքելու, սպասելով իրադարձությունների զարգացմանը՝ Աղզային մեծ ժողովի ուժի վերաբերյալ պատկերացում ստանալու համար»։ Նրա կարծիքով 1921 թվականի Մոսկվայի պայմանագիրը ստորագրվեց «Արևելքում հայերի, իսկ Արևմուտքում՝ ինսուլուի առաջին ճակատամարտում հուլյների դեմ տարած հաղթանակների, ինչպես նաև Անտանտի պետությունների կողմից Թուրքիային կոնդոնի կոնֆերանս հրավիրելու հետևանքով»<sup>2</sup>։

Այսպես, ուրեմն, հեղինակի վարծիքով, վերոհիշյալ դեպքերի ազդեցության տակ էր, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը կնքեց 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը։ Թուրք պրոֆեսորը աղավաղում է պատմական

<sup>1</sup> ЦГАОР Грyз. ССР, ф. 13с, оп. 1, ед. хр. 66, л. 33.

<sup>2</sup> Prof. Enver Ziya Karal, s. 109.

փաստերը, դրանք ծառայեցնելով իր նպատակներին, այն է՝ ամեն կերպ զունազարդելով Թուրքիայում ստեղծված դժուրությունը, նույնիսկ այդ շրջանում նրան ներկայացնել մեծ ուժի տեր մի պետութուն, որի հետ հաշվի էին նստում Արևմտքի հզոր տերութունները և դրանով իսկ ժխտել Մոսկվայի պայմանագրի նշանակութունը Թուրքիայի համար, ցույց տալ, որ Թուրքիան դրա կարիքը չուներ:

Անդրադառնանք հեղինակի թվարկած «փաստերին» առանձին-առանձին: Մի՞թե դաշնակների տիրապետության օրոք իսպառ քայքայված Հայաստանի դեմ Թուրքիայի տարած հաղթանակը Անկարայի կառավարության ուժի ապացույց էր: Այդպիսի հաղթանակ դժվար չէր ձեռք բերել այն բանից հետո, երբ քեմալական կառավարությունը 1920 թ. ամռան սկզբներից իր զորքերի հիմնական մասը, — ինչպես արդեն ցույց տրվեց, — կենտրոնացրել էր Հայաստանի դեմ: Կամ, մյուս փաստարկը. արդյո՞ք Ինենյուրի առաջին ճակատամարտով (1921 թ. հունվարին) որոշվեց Թուրքիայի ազգային-ազատագրական պայքարի հաղթական ելքը: Թուրքական զորքերին դժվարությամբ հաջողվեց միայն կասեցնել հունական բանակի հարձակումը, սակայն թուրքերը առաջ չարժվեցին: Հուլյները այդ պարտությունից հետո էլ մեծ ուժ էին ներկայացնում և նկատելի հաջողություններ ունեցան, ընդհուպ մոտենալով Անկարային (1921 թ. օգոստոսին): Հայտնի է, որ Մոսկվայի պայմանագրի ստորագրումից միայն կես տարի հետո՝ 1921 թ. սեպտեմբերին թուրքական բանակը Քեմալի ղեկավարությամբ հուլյներին պարտության մատնեց Սակարայի ճակատամարտում, իսկ դրանից հետո էլ պահանջվեց մեկ տարի՝ հուլյների դեմ վճռական հաղթանակ տանելու համար Դոմլուփընարի մոտ:

Իսկ Լոնդոնի կոնֆերանսի մասին հիշատակելով, կարալը ոչ մի խոսք չի ասում նրա խայտառակ կրախի մասին: Ինչպես հայտնի է, 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին կայացած Լոնդոնի կոնֆերանսում քննարկվեց նաև մերձավոր արևելյան հարցը՝ Սեվրի պայմանագիրը վերանայելու նըպատակով: Քեմալականները մեծ հույսեր էին կապում

այդ կոնֆերանսի հետ, կարծում էին, որ Անգլիան պատ-  
րաստ է որոշ զիջումներ անել: Բայց բանակցությունները  
քեմալականներին ոչ մի արդյունք չստացին: Անկարայի  
կառավարության պատվիրակության ներկայացրած կոնկրետ  
առաջարկությունները Սեվրի դաշնագիրը վերանայելու մա-  
սին՝ Թուրքիայի եվրոպական մասում 1913 թվականի սահ-  
մանի վերականգնում, Իզմիրի շրջանից հունական զորքերի  
էվակուացիա, Հայաստանի հետ սահմանի անցկացումը ըստ  
Ալեքսանդրապոլի պայմանագրի, այս բոլորը անգլիական  
պահպանողական «Թայմս» թերթը 1921 թվականի փետրվա-  
րի 25-ի համարում անվանեց «անհեթեթ պահանջներ»: Ինքը՝  
Մուստաֆա Քեմալը, հետագայում հայտարարել է, որ կոն-  
դոնի կոնֆերանսի ժամանակ թուրքական պատվիրակությու-  
նը համոզվեց այն բանում, որ «Անտանտի տերությունները  
ցանկանում էին ապահովել Սեվրի պայմանագրի հոդված-  
ների անարգելք կիրառումը»<sup>1</sup>:

Կոնդոնի կոնֆերանսի ժամանակ քեմալական պատվի-  
րակության ղեկավար, արտաքին գործերի մինիստր Բեքիր  
Սամի բեյը գաղտնի բանակցությունների մեջ էր մտել Անգ-  
լիայի պրեմիեր մինիստր Լլոյդ Ջորջի հետ և առաջարկել  
էր Թուրքիան ընդգրկել հակասովետական բրոկի մեջ՝ նրան  
միացնելով Հյուսիսային Կովկասի լեռնականներին՝ Ռուսաս-  
տանի և Արևմուտքի միջև ֆեդերալ բուֆերային պետություն  
ստեղծելու նպատակով:<sup>2</sup> Բայց քանի որ կոնդոնի կոնֆերան-  
սում Թուրքիայի հետապնդած նպատակները ձախողվեցին,  
իսկ բանակցությունների գաղտնիքը հայտնի դարձավ, ապա  
Անկարայի կառավարութունը ստիպված էր պաշտոնից ազա-  
տել Բեքիր Սամի բեյին՝ նրա վրա բարդելով Լլոյդ Ջորջի  
հետ ունեցած գաղտնի զրույցների մեղքը:

Հենց կոնդոնի կոնֆերանսի անփառունակ վախճանը,  
ինչպես նաև հունական զորքերի նոր հարձակման սպառնա-  
լիքը, քեմալականներին ստիպեցին ավելի լուրջ մոտենալ

<sup>1</sup> Мустафа Кемаль, Путь новой Турции, т. III, стр. 200.

<sup>2</sup> See Halide Edip, The Turkish Ordeal. New York-London, 1928, p. 255.

Մոսկվայում ընթացող սովետա-թուրքական բանակցութիւններին, որից հետո միայն կողմերը համաձայնութեան և 1921 թվականի մարտի 16-ի պայմանագրի կնքումը հնարավոր դարձավ:

Միանգամայն անհիմն վերպով ՌՍՖՍՌ կառավարութեանը մեղադրելով Մոսկվայի պայմանագրի ստորագրումը ձգձգելու մեջ, թուրք պատմաբանները գիտակցորեն լռութեան են մատնում մի շարք հայտնի փաստաթղթեր, որոնք վկայում են այն մասին, որ դեռևս 1920 թվականի նոյեմբերի վերջերին Սովետական Ռուսաստանի կառավարութեանը սկզբունքորեն վճռել էր Մոսկվայում կոնֆերանս հրավիրելու հարցը՝ սովետա-թուրքական պայմանագիր կնքելու համար: Այսպես, 1920 թվականի նոյեմբերի 27-ին Վ. Ի. Դինիևի ղեկավարութեամբ կայացած ՌԿ(բ)Պ Կենտկոմի Քաղբյուրոյի նիստում քննարկելով Անդրկովկասում ստեղծված իրադրութիւնը, որոշում ընդունվեց Անդրկովկասում անհապաղ խաղաղութիւն ապահովելու անհրաժեշտութեան մասին<sup>1</sup>: 1920 թվականի դեկտեմբերի 1-ին Հայաստանում ՌՍՖՍՌ ներկայացուցիչ Բ. Վ. Լեգրանին ուղարկած հեռագրում Չիչերինը հանձնարարում էր բացատրել Անկարայի կառավարութեանը ՌՍՖՍՌ կառավարութեան տեսակետը Անդրկովկասին վերաբերող մի քանի հարցերում:

«Մեզ ցանկալի է իմանալ, — գրում էր Չիչերինը, — ստացե՞լ է արդյոք թուրքական կառավարութեանը պայմանագրի նախագիծը<sup>2</sup>, որը մշակվել էր մեր կողմից Բեքիր Սամի բեյի հետ միասին և որը ուղարկվել է Անկարա՝ Յուսուֆ Քեմալի միջոցով: Արդյոք թուրքական կառավարութեանը այն ընդունելի՞ է համարում և ինչպե՞ս է վերաբերվում այն կետերին, որոնք տարակարծութիւն էին առաջ բերել մեր և Բեքիր Սամիի միջև, որոնց վերաբերյալ վերջինս շէր կա-

<sup>1</sup> Տե՛ս «Ленинский сборник», XXXYI, стр. 144.

<sup>2</sup> Խոսքը 1920 թվականի օգոստոսի 24-ին նախնական ստորագրված սովետա-թուրքական պայմանագրի մասին է:

րող որոշում ընդունել»<sup>1</sup>: Իսկ ՌՍՖՍՌ կառավարությունն իր 1920 թվականի դեկտեմբերի 9-ի նոտայում, ողջունելով սովետա-թուրքական կոնֆերանսի հրավիրումը, անհրաժեշտ էր գտնում Ադրբեջանի և Հայաստանի սովետական կառավարությունների ներկայացուցիչների մասնակցությունը այդ կոնֆերանսում, քանի որ այնտեղ «վճռվելու են տերիտորիալ և ուրիշ հարցեր՝ այդ պետությունների և Թուրքիայի ու Ռուսաստանի միջև»: Նոտայի վերջում ընդգծվում էր կոնֆերանսի հրավիրումը արագացնելու անհրաժեշտությունը:<sup>2</sup>

Ինչպես տեսնում ենք, Թուրք հեղինակների այն պնդումը, թե իբր Սովետական Ռուսաստանի կառավարությունը ձգձգում էր Մոսկվայի պայմանագրի ստորագրումը, ամինչև վերջը անհիմն և փաստազուրկ է:

1921 թվականի պայմանագրի կնքման շարժառիթներին կարալի տված «բացատրությունը» միակը չէ իր տեսակում: Ավթեմուր Քըլչըբ, որը ԱՄՆ-ում հրատարակված «Թուրքիան և աշխարհը» վերնագիրը կրող գրքում բացահայտորեն աղավաղում է սովետա-թուրքական հարաբերությունների ողջ պատմությունը, համարյա նույնությամբ կրկնում է վերևում մերկացված կեղծիքը. «1921 թվականի պայմանագիրը ստորագրվեց այն բանից հետո, երբ հայերի, իսկ այնուհետև Արևմտյան Ճակատում հույների դեմ տարած հաղթանակները համոզեցին սովետական ղեկավարներին, որ Թուրքական աստղը վերընթաց շարժման մեջ է»<sup>3</sup>,— գրում է նա:

Թուրք պատմաբանների աշխատություններում նենգափոխված է նաև Անդրկովկասի սովետական դեսպոլազիկաների և Թուրքիայի միջև 1921 թվականի հոկտեմբերի 13-ին կարսում կնքված պայմանագրի պատմությունը:

Եթե պրոֆեսոր Կարալը Մոսկվայի պայմանագրի ուշա-

<sup>1</sup> «Документы внешней политики СССР», т. III, стр. 364—365.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 371:

<sup>3</sup> Altemur Kilic, Turkey and the World. Washington, 1959, p. 39.

ցման պատճառը կապում է Սովետական Ռուսաստանի վարած քաղաքականութեան հետ, ապա Մյուրքերեմ Քյամիլ Սուն և Քյամիլ Սուն «Թուրքական Ռեսպուբլիկայի պատմութեան» իրենց դասագրքում Սովետական Ռուսաստանի կառավարութեանը մեղադրում են Կարսի պայմանագրի ստորագրումը ձգձգելու մեջ:

«Ռուսները, որպես միջնորդ հանդես գալուց առաջ,— գրում են նրանք,— ցանկանում էին ճանաչել թուրքական կառավարութեան ուժը և այդ իսկ պատճառով որոշ ժամանակ սպասեցին: Սակարյայի մոտ թուրքական բանակի տարած մեծ հաղթանակից հետո միայն նրանք հավատացին թուրքական նոր կառավարութեան հզորութեանը և կովկասյան ռեսպուբլիկաների ու մեր միջև ստորագրվող պայմանագրի միջնորդ դարձան»<sup>1</sup>:

Նախ նշենք, որ թուրք հեղինակների այս կեղծիքն ունի իր «հիմքը»՝ «Թարիհը»:

«Մոսկվայի կառավարությունը,— գրված է «Թարիհում»,— որոշ ժամանակ ձգձգում էր Կարսի պայմանագրի ստորագրումը և Սակարյա գետի վրա թուրքերի տարած հաղթանակից հետո միայն ստորագրեց այդ պայմանագիրը»<sup>2</sup>:

Այս անհիմն, փաստազուրկ պնդումները նպատակ ունեն դիտավորյալ կերպով սքողել պատմական փաստերը: Իրականում ճիշտ հակառակն է տեղի ունեցել: Թուրքերն իրենք էին ձգձգում անդրկովկասյան ռեսպուբլիկաների հետ պայմանագրի կնքումը: Այդ մասին անվիճելիորեն վկայում են ինչպես բազմաթիվ արխիվային, այնպես էլ վերջերս հրատարակված նյութերն ու փաստաթղթերը: Դիմենք փաստերին:

1921 թ. մարտի 16-ի պայմանագրով նախատեսվում էր Թուրքիայի և անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների միջև կնքել պայմանագիր, որը պետք է կարգավորեր և

<sup>1</sup> Mükerrerem Kâmil Su ve Kâmil Su, s. 85.

<sup>2</sup> «Tarih», cilt IV. Türkiye Cumhuriyeti. İstanbul, 1934, s. 103—104.

նորմալացներ նրանց փոխհարաբերությունները: Հակառակ այդ բանին, Անկարայի կառավարությունը տարբեր պատրվակներով ուղացնում ու հետաձգում էր բանակցությունները անդրկովկասյան ռեսպուբլիկաների հետ: Դրա պատճառն այն էր, որ թուրքական կառավարող շրջանները, չնայած այն բանին, որ Մոսկվայի պայմանագրով Ալեքսանդրապոլի կողոպտիչ պայմանագիրը շեղյալ էր հայտարարվել, դեռևս չէին հրաժարվել կյանքում այն կիրառելու իրենց մտադրությունից: Դա պարզորոշ ներկում է նաև Մոսկվայում Անկարայի կառավարության դեսպան Ալի Ֆուադին ուղարկած՝ Չիչերինի 1921 թվականի ապրիլի 8-ի նոտայից, որտեղ ասված էր հետևյալը. «Չեմ կարող Ձեզանից թաքցնել իմ այն խոր զարմանքը, որ Ես զգացի Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության ռազմական մինիստր Քեմալ Ֆելզի փաշայի հայտարարության հետ ծանոթանալիս:

Ռազմական մինիստրը հայտարարում է, մասնավորապես, որ Արևելյան ռազմաճակատի թուրքական բանակը, մնալով Կովկասում, պետք է այնտեղ վատարի հավասարակշռության տարրի դեր: Ինձ համար դժվար է հասկանալ, թե Արևելյան ռազմաճակատի թուրքական բանակը ուրիշ ինչ ռազմական ուժի դեմ է նախատեսված հանդես դալու՝ Կովկասում ուժերի հավասարակշռության պահպանման համար: Քանի որ այդ շրջանում մյուս միակ ռազմական ուժը Սովետական Ռեսպուբլիկաների միավորված կարմիր բանակն է, հետևություն է արվում, որ ռազմական մինիստրի կարծիքով, թուրքական բանակը պետք է հանդիսանա մի տարր, որը թշնամի է սովետական ուժերին և նպատակ ունի հակակշիռ ուժ հանդիսանալ նրանց ռազմական հզորությանը»: Այնուհետև նոտայում ամենայն որոշակիությամբ նշվում էր, որ թուրքական մինիստրի այդ հայտարարությունը մինչև վերջը հակասում է Մոսկվայի պայմանագրի Վուլանդակությանը և հանդիսանում է սովետական զինված ուժերի դեմ ուղղված թշնամական մի ակտ: Անդրադատնալով Ֆելզի փաշայի հայտարարության այն մասին, որտեղ ասվում էր, որ թուրքական զորքերի օկուպացիայի տակ գտնվող Հայաստա-

նի տերիտորիան էվակուացիայի կենթարկվի Ալեքսանդրապոլի պայմանագիրը գործողության մեջ դնելուց հետո միայն, Սովետական Ռուսաստանի կառավարությունը վճռականորեն հայտարարում էր հիշյալ նոտայում, որ «Ալեքսանդրապոլի պայմանագրի կիրառումը ցանկանալը հավասարազոր է Մոսկվայի պայմանագրի վերացմանը»<sup>1</sup>:

Չիչերինը Գ. Կ. Օրջոնիկիձեին առաջարկում էր Անկարայի կառավարությանը հայտնել, որ անհրաժեշտ է անհապաղ կենսագործել Մոսկվայի կոնֆերանսում ընդունված նոր սահմանները և Ալեքսանդրապոլն անմիջապես ազատել թուրքական զորքերից: «Մեր անունից, — ասվում էր հեռագրում, — կտրական բողոք հայտնեք Կարաբեքիր փաշայի այն հայտարարության դեմ, որ նա չի ցանկանում ազատել Ալեքսանդրապոլը և Ազգային մեծ ժողովի կառավարությանը հաղորդեք, որ մենք վճռականապես պնդում ենք, որ թուրքական զորքերն անհապաղ հեռանան Մոսկվայում որոշված սահմաններից այն կողմը: Մատնանշեք այն բանը, թե ինչ ճակատագրական հետևանքներ կարող է ունենալ թուրքական զորքերի ընդհարումը կարմիրբանակային զորամասերի հետ...»: ՌՍՖՍՌ կառավարությունը նորից հիշեցնում էր Անկարայի ղեկավար շրջաններին, որ «բոլոր սովետական ռեսպուբլիկաները պետք է անխախտելի դաշինքի մեջ են գտնվում Սովետական Ռուսաստանի հետ»<sup>2</sup>:

Սակայն այս նոտաներից հետո էլ թուրքական կառավարությունը քողարկված ձևով շարունակում էր կառչել Ալեքսանդրապոլի պայմանագրից:

Մոսկվայի կոնֆերանսի ժամանակ մողմերը պայմանավորվեցին, որ թուրքական պատվիրակությունը Անկարա վերադառնալու ճանապարհին կանգ կառնի Քիֆլիսում և անդրկովկասյան երեք ռեսպուբլիկաների հետ պայմանագիր կկրնքի: Սակայն, երբ ապրիլի կեսերին թուրքական պատվիրակությունը եկավ Անդրկովկաս, պատվիրակության ղեկավար,

<sup>1</sup> «Документы внешней политики СССР», т. IV, стр. 53—54.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 55:

արտաքին գործերի մինիստր Յուսուֆ Քեմալը անսպասելիորեն հայտարարեց, որ ինքը կարող է պայմանագիր կնքել միայն Վրաստանի և Ադրբեջանի հետ, իսկ Հայաստանի հետ բանակցություններ վարելու համար լիազորված չէ։ Դա էր պատճառը, որ անդրկովկասյան երեք ռեսպուբլիկաների և Թուրքիայի միջև նախատեսվող կոնֆերանսը տեղի չունեցավ և պատվիրակությունը մեկնեց Անկարա։ Չնայած այն բանին, որ Թուրքերն իրենք ձախողեցին անդրկովկասյան ռեսպուբլիկաների հետ պայմանագրի կնքումը, Անկարայի կառավարությունը փորձեց դրա պատասխանատվությունը բարդել Սովետական Ռուսաստանի և Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների կառավարությունների վրա՝ մեղադրելով նրանց Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը<sup>1</sup> չիրագործելու մեջ։ Չիչերինի 1921 թվականի հունիսի 6-ի նոտայում որոշակիորեն ասվում է, որ վերոհիշյալ 15-րդ հոդվածը չկիրառելու միակ պատճառն այն էր, որ Թուրքական պատվիրակությունն ինքը անհնարին դարձրեց պայմանագրի կնքումը անդրկովկասյան ռեսպուբլիկաների և Թուրքիայի միջև<sup>2</sup>։

Միայն հունիսի 14-ին ՌՍՖՍՌ արտաքին գործերի ժողկոմատը ստացավ Թուրքական դեսպան Ալի Ֆուադի հաղորդումն այն մասին, որ Անկարայի կառավարությունը համաձայն է պայմանագրի կնքել բոլոր երեք անդրկովկասյան ռեսպուբլիկաների հետ։ Սակայն դրանից հետո էլ կոնֆերանս գումարելու համար պահանջվեց շուրջ յերեք ամիս։ Դրա պատճառը դարձյալ Անկարայի կառավարության գրաված դիրքն էր։

Կոնֆերանսը կարսում հրավիրելու իր նախնական առա-

<sup>1</sup> 1921 թ. մարտի 16-ի պայմանագրի 15-րդ հոդվածով Սովետական Ռուսաստանի կառավարությունը պարտավորվում էր անհրաժեշտ քայլեր ձեռնարկել անդրկովկասյան ռեսպուբլիկաներին վերաբերող պայմանագրի հոդվածները վերջիններին կողմից ճանաչվելու համար։ Տե՛ս «Документы внешней политики СССР», т. III, стр. 602.

<sup>2</sup> Նույն տեղում, հ. IV, էջ 169։

շարկութեանը հակառակ<sup>1</sup>, Թուրքական կառավարութիւնը հանդես եկավ Անկարայում հավաքվելու առաջարկով, որը միանգամայն աննպաստ էր անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների պատվիրակութիւնների համար (իրենց կառավարութիւնների հետ հաղորդակցութիւն պահպանելու տեսակետից): Մերժելով այդ առաջարկը, Չիչերինը 1921 թ. օգոստոսի 8-ին նոտայում ընդգծում էր նաև այն հանգամանքը, որ Անկարան գտնվում է պատերազմի թատերաբեմին շատ մոտ: Թուրքական կողմը, այնուհետև, նորից փորձեց պնդել իր առաջարկի վրա, բայց հաջողութիւն չունեցավ:

Ինչպես տեսնում ենք, փաստերն անվիճելիորեն հերքում են Թուրք պատմաբանների այն կեղծիքը, թե իբր սովետական կողմն էր ձգձգում Կարսի պայմանագրի ստորագրումը: Ընդհակառակը, Արևքսանդրապոլի պայմանագիրը Սովետական Հայաստանին պարտադրելու քեմալական կառավարութեան փորձերն ի նկատի ունենալով, ՌՍՖՍՌ կառավարութիւնն ինքն էր շահագրգռված արագացնելու Թուրքիայի և անդրկովկասյան ռեսպուբլիկաների միջև պայմանագրի կնքումը:

Նույնիսկ Կարսի կոնֆերանսի ընթացքում Թուրքերը կեղծավոր և խարդախ քաղաքականութիւն էին վարում, փորձում էին երկարաձգել բանակցութիւնները: Սովետական Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ա. Մուսվյանը 1921 թ. հոկտեմբերի 5-ին հաղորդում էր Կարսից, որ «Թուրքերը դիտավորյալ կերպով ձգձգում են բանակցութիւնները՝ հույսեր կապելով ռուս-լեհական ճգնաժամի սրման հետ<sup>2</sup>: Կարսի կոնֆերանսում ՌՍՖՍՌ ներկայացուցիչ Յա. Գանեցկին հոկտեմբերի 6-ին Չիչերինին ուղարկած իր հեռագրում նույնպես հայտնում էր այդ մասին. «Բոլորիս

<sup>1</sup> Այդ մասին տես «Документы внешней политики СССР», т. IV, стр. 227, 249, 255, 287.

<sup>2</sup> ՀՍՍՌ Հոկտեմբերյան ռեւոլյուցիայի և սոցիալիստական շինարարութեան կենտրոնական պետական արխիւ, ֆ. 40/113, ց. 3, դ. 75, թ. 56:

մոտ ստեղծվել է որոշակի տպավորություն, որ թուրքերը գիտակցորեն ձգձգում են կոնֆերանսը: Քաղաքում լուրեր են շրջում, որ այսօր-վաղը պատերազմ կհայտարարվի Լեհաստանին և մեզ որոշակիորեն հայտնի է, որ թուրքական պատվիրակությունը շարաշահում է այդ հանգամանքը»<sup>1</sup>:

Թուրք հեղինակների աշխատություններում խեղաթյուրված է նաև Կարսի կոնֆերանսի բանակցությունների ընթացքը, որի անաչառ շարադրանքը անխուսափելիորեն վերկհաներ Անկարայի կառավարության ևերկդիմի և խարդախ քաղաքականությունը ինչպես (անդրկովկասյան ռեսպուբլիկանների, այնպես էլ Սովետական Ռուսաստանի նկատմամբ: Թուրք պատմաբանները հայտարարում են, որ կոնֆերանսում արտասովոր ոչինչ տեղի չունեցավ, որ բանակցությունները հարթ անցան: Այսպես, օրինակ, Ջեքսոյը, խոսելով Կարսի կոնֆերանսի մասին, գրում է, որ «բանակցությունները նորմալ անցան...»<sup>2</sup>: Այնինչ, արխիվային փաստաթղթերից և, առաջին հերթին, կոնֆերանսի նիստերի արձանագրություններից հայտնի է, որ բանակցությունները շափազանց սուր և լարված բնույթ էին կրում այն բացահայտ թրջնամական դիրքի պատճառով, որ գրավել էր թուրքական պատվիրակությունը Սովետական Հայաստանի նկատմամբ:

Ինչպես նշվեց, թուրքերը պահանջում էին սեպարատ պայմանագրեր կնքել անդրկովկասյան ռեսպուբլիկանների հետ, որը նրանց հնարավորություն կտար միայնակ մնալ Սովետական Հայաստանի ներկայացուցիչների հետ և վերջիններիս թելադրել իրենց պայմանները, այսինքն՝ պարտադրել Ալեքսանդրապոլի կողոպտիչ պայմանագիրը: ✓

Արտասովոր էր թեկուզ այն, որ անդրկովկասյան ռեսպուբլիկանների պատվիրակությունը միասնական պայմանագիր ստորագրելու վճռականությամբ կոնֆերանս գալով, նորից հանդիպեց սեպարատ պայմանագրեր կնքելու թուր-

<sup>1</sup> ՀՄՍՌ Հոկտեմբերյան ռեյուցիայի և սոցիալիստական շինարարության կենտրոնական սեկտանական արխիվ, ֆ. 40/113, ց. 3, դ. 75, թ. 50:

<sup>2</sup> Ali Fuat Cebesoy, Moskova hatıraları, s. 259.

քերի արդեն մերժված առաջարկությանը: Կոնֆերանսի առաջին իսկ նիստում թուրքական պատվիրակությունը հայտարարեց, որ ինքը ցանկանում է պայմանագիր ստորագրել անդրկովկասյան ռեսպուբլիկաներից յուրաքանչյուրի հետ առանձին: Սակայն թուրքերի այդ նպատակը չիրականացավ շնորհիվ անդրկովկասյան ռեսպուբլիկաների գրաված համերաշխ և վճռական դիրքի:

«Մեր պատվիրակությունը, — գրում է Գ. Կ. Օրջոնիկիձեն, — յատեգորիկ կերպով հայտարարեց թուրքերին, որ նա պահանջում է համատեղ բանակցություններ վարել անդրկովկասյան բոլոր ռեսպուբլիկաների հետ և միասնական հաշտության պայմանագիր կնքել... Այսպիսի պահանջի համար օրինական հիմքեր ներկայացնելու թուրքերի առաջարկին մեր պատվիրակությունը պատասխանեց, որ անդրկովկասյան պատվիրակությունը հանդես է գալիս որպես անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիայի ներկայացուցիչ»:<sup>1</sup>

Շարունակելով համառել, թուրքական պատվիրակությունը սեպտեմբերի 30-ի նիստում հանդես եկավ մի պրոպոզիցիոն հարցով՝ «ինչպիսի փոխհարաբերությունների մեջ են գտնվում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեյջանի սովետական ռեսպուբլիկաները»: Թուրքիայի արտաքին գործերի մինիստրին ուղղված 1921 թվականի հոկտեմբերի 3-ի նոտայում Չիչերինը պաշտոնապես հայտարարեց, որ անդրկովկասյան ռեսպուբլիկաների կառավարությունները տեղյակ են պահել Սովետական Ռուսաստանի կառավարությանն այն մասին, որ նրանց միջև գոյություն ունի քաղաքական ու տնտեսական սերտ դաշինք և նրանց վերաբերող քաղաքական ու տնտեսական բոլոր հարցերը լուծվում են համատեղ<sup>2</sup>: Միայն դրանից հետո թուրքական պատվիրակությունը (որին գլխավորում էր մոլի շովինիստ-ջարդարար Քյազըմ Կարաբեիր փաշան) հրաժարվեց սեպարատ պայմանագրեր կրն-

<sup>1</sup> Г. К. Орджоникидзе, Избранные статьи и речи, М., 1939, стр. 177.

<sup>2</sup> «Документы внешней политики СССР», т. IV, стр. 392.

քելու իր մտադրութիւննից և ստիպված եղավ համաձայնվել  
ստորագրելու միասնական պայմանագիր անդրկովկասյան  
երեք սովետական ռեսպուբլիկաների՝ Ադրբեջանի, Հայաս-  
տանի և Վրաստանի հետ:

Կոնֆերանսի ժամանակ ուժեղ պայքար ծավալվեց  
Աւերքսանդրապոլի դեպոյի հարցի շուրջը: Անդրկովկասյան  
ռեսպուբլիկաների պատվիրակութունը պահանջում էր հեռ-  
վերադարձնել քաղաքի օկուպացման ժամանակ կողոպտված  
ու արտահանված հսկայական գույքը, իսկ թուրքական պատ-  
վիրակութունը լիտիորեն փորձում էր «հաստատել» իրենց  
իրավունքը այդ գույքի նկատմամբ<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է սովետա-թուրքական սահմանի վերջ-  
նական ճշգրտման հարցին, այստեղ ևս թուրքական պատ-  
վիրակութունը հանդես բերեց իր անհաշտ, թշնամական  
վերաբերմունքը Սովետական Հայաստանի նկատմամբ:  
Ճիշտ է, Կարսի կոնֆերանսում տերիտորիալ հարցերն ըստ  
էութեան չքննարկվեցին, քանի որ դրանք իրենց արտահայ-  
տութեանն էին գտել Մոսկվայի պայմանագրում, սակայն  
անդրկովկասյան պատվիրակութունը հանդես եկավ սովե-  
տա-թուրքական սահմանը մի փոքր շտկելու առաջարկով  
այն հաշվով, որ պատմական Անի քաղաքը և նրա ավերակ-  
ներն անցնեն Սովետական Հայաստանին՝ որպես հայ ժողո-  
վրդի մշակույթի համար հսկայական արժեք ներկայացնող  
հուշարձաններ: Թուրքական պատվիրակութունը ճրաժար-  
վեց ընդառաջ զնալ այդ առաջարկին, թեև մինչև այդ Ան-  
կարայի կառավարութունը տվել էր իր համաձայնութիւնը<sup>2</sup>:



Այսպես, ուրեմն, ժամանակակից թուրք պատմագրու-  
թյան մեջ բարձրացվող այն հարցերը, որոնց մենք անդրա-

<sup>1</sup> Տե՛ս ՀՍՍՌ Հոկտեմբերյան ռեուլյուցիայի և սոցիալիստական շինարարութեան կենտրոնական պետական արխիվ, ֆ. 40/113, ց. 3, գ. 75, թ. 59:

<sup>2</sup> Տ՛ես ЦГАОР Азерб. ССР, ф. 4с/28 р, оп. 1 ед. хр. 81.

դարձանք սույն գրքույկում, նպատակ ունեն ոչ հեռու անցյալի հանրահայտ փաստերի ու պատմական իրականության բացահայտ խեղաթյուրման միջոցով արդարացիաբար սուլթանական կառավարության ու երիտթուրքական ղեկավարների մոլի շովինիստական, ջարդարարական ներքին քաղաքականությանը և արտաքին քաղաքականության ասպարեզում ներանց հետապնդած պանթուրքական ագրեսիվ ծրագրերը:

Թուրք պատմաբանները 1920—1921 թվականների ագրեսիան Անդրկովկասում ներկայացնում են որպես թուրք ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի բաղկացուցիչ մասը, իսկ այդ ագրեսիայի հետևանքով Թուրքիան անցած տերիտորիաները՝ որպես բուն թուրքական հողեր:

Թուրք պատմաբանների աշխատությունների մյուս հիմնական նպատակը հակասովետական պրոպագանդան է, որը մինչև վերջը ներծծված է պանթուրքիզմի ունակցիոն գաղափարներով: Պանթուրքիզմը մեր օրերում էլ չի դադարում ծառայել որպես զենք Թուրքիայի կառավարող շրջանների ձեռքում՝ արտաքին քաղաքականության ասպարեզում նրանց հետապնդած զավթողական արյաններն իրականացնելու գործում: Այդ մասին է վկայում 1955 թվականի մարտին թուրքական կառավարության գիտությունների և վերաբնակիչների այսպես կոչված առաջին կոնգրեսը, որտեղ ելույթ ունեցողները կոչ էին անում ընդարձակել թուրքական աշխարհի սահմանները՝ «ազատագրելով Թուրքիայից դուրս բնակվող թուրք եղբայրներին»: Կոնգրեսի մասնակիցները «Մեծ Թուրքիայի» սահմանների մեջ մտցրին Կովկասը, Միջին Ասիան, Պովոլժիեն և այն տերիտորիաները, որոնք բնակեցված են թուրքալեզու ժողովուրդներով: Հատկանշական է, որ կոնգրեսի մասնակիցները իրենց ֆեդերացիայի պատվավոր նախագահ ընտրեցին Թուրքիայի այն ժամանակվա պրեմիեր մինիստր Մենդերեսին:<sup>1</sup>

<sup>1</sup> Տե՛ս «Против фальсификации истории Востока». Изд. Восточной литературы, М., 1961, стр. 98.

Այսպիսով, պանթուրքիզմը, որպես ագրեսիայի գեղը, ներկայումս էլ շարունակում է մնալ թուրք ռեակցիոներների գինանոցում: Ուստի պատահական չէ, որ այն լայնորեն օգտագործվում է նաև ամերիկյան իմպերիալիստների կողմից՝ հակասովետական նպատակներով:

Թուրք պատմագրութեան մինչև վերջը հակադիտական այս ուղղութիւնը թուրք ժողովրդի լայն զանգվածների մեջ սերմանելով պանթուրքական ռեակցիոն գաղափարները, և ատելութիւն՝ թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնութիւնների ու հարևան ժողովուրդների Կնկատմամբ, մեծապես խանգարում է երկրի դեմոկրատական ուժերի այն պայքարին, որ նրանք շարունակում են մղել օտարերկրյա իմպերիալիզմի ու ներքին ռեակցիայի դեմ՝ խաղաղասիրական և իսկապես դեմոկրատական թուրքիայի համար:

37-

0856

**ՎՐԻՊԱԿ**

48-րդ էջի ներքևից 19-րդ տողում սպված է՝ քաղաքա-  
կանությանը, պետք է լինի՝ քաղաքականությունը,

Պատվեր 111

խմբագիր՝ Հ. Ա. Կնյազյան, գեղ. խմբագիր՝ Գ. Խուշիկյան, տպ. ...  
Ե. Ախիբյան, վերստուգող սրբագրիչ՝ Վ. Վարոսյան

ՎՖ 11032

Պատվեր 111

Տիրած 10 000

Հանձնված է արտադրության 14/1 1963 թ.: Ստորագրված է սպաղրու-  
թյան 1/IV 1963 թ.:

Թուղթ՝ 84×1081/32, հրատ. 4,4 մամ., տպ. 6,0 մամ., 4,92 պտյմ. մամ.:  
Գինը՝ 10 կոպ.:

ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների և պոլիգրաֆ  
արդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան,  
Ալավերդյան փող. № 65:



42.

ՏԱՅՄԱՆԱԲԱՆԱԿ